

Ձեռնոց

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՈՆՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾԱԴՐԱԾ ԱՆՁԱՆՑ ՌԵԱԲԻԼԻՏԱՑՄԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ
ԻՐԱՎԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ
ՍՏԱՄԲՈՒԼԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ

COUNCIL OF EUROPE



CONSEIL DE L'EUROPE

ՁԵԿՈՒՅՑ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՈՒՆՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾԱԴՐԱԾ ԱՆՁԱՆՑ ՌԵԱԲԻԼԻՏԱՑՄԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ
ԻՐԱՎԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ
ՍՏԱՄԲՈՒԼԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈՒ

Պատրաստել են՝
Քրիսթինա Օդոնը և
Սերգեյ Ղազինյանը

Սույն աշխատությունում ներկայացված
կարծիքները հեղինակների
պատասխանատվությունն են և պարտադիր
չէ, որ արտահայտեն Եվրոպայի խորհրդի
պաշտոնական քաղաքականությունը:

Մինչև 500 բառ ծավալով քաղվածքների
վերարտադրումը թույլատրվում է ոչ
առևտրային նպատակներով՝ պայմանով,
որ տեքստի ամբողջականությունը
պահպանված լինի, քաղվածքը չօգտագործվի
համատեքստից դուրս, չտրամադրի
թերի տեղեկատվություն և որևէ այլ կերպ
չմոլորեցնի ընթերցողին տվյալ տեքստի
բնույթի, շրջանակի կամ բովանդակության
վերաբերյալ: Որպես աղբյուր տեքստին հղում
կատարելիս պարտադիր է նշել հետևյալ ձևով՝
«© Եվրոպայի խորհուրդ, հրապարակման
տարի»:

Սույն փաստաթղթի ամբողջական
կամ մասնակի վերարտադրման կամ
թարգմանության վերաբերյալ բոլոր այլ
հարցումները պետք է հասցեագրվեն
Եվրոպայի խորհրդի Հրատարակությունների և
հաղորդակցության բաժնին (F-67075 Stras-
bourg Cedex կամ publishing@coe.int):

Շապիկի ձևավորում և էջաբաշխում՝
Եվրոպայի խորհրդի Հրատարակությունների և
հաղորդակցության բաժին:

Սույն հրապարակումը չի ենթարկվել
խմբագրական սրբագրման (copy-editing)
ողղագրական և քերականական սխալները
շտկելու նպատակով, Եվրոպայի խորհրդի
Ծրագրավորման, փաստաթղթավորման և
հրատարակությունների ծառայության (SPDP)
խմբագրական ստորաբաժանման կողմից:

© Եվրոպայի խորհուրդ, 2025 թ. Սեպտեմբեր

Տպագրված է Եվրոպայի խորհրդի կողմից

Բովանդակություն

Երախտագիտության խոսք

Սույն գեկույցը մշակվել է Եվրոպայի խորհրդի [«Կանանց նկատմամբ բռնության հաղթահարումը և գենդերային հավասարության ամրապնդումը Հայաստանում \(Փուլ 2\)»](#), ծրագրի շրջանակում, որը ֆինանսավորվում է [Եվրոպայի խորհրդի Հայաստանի համար իրականացվող գործողությունների 2023-2026 թվականների ծրագրով](#):

Փորձագետները ցանկանում են իրենց երախտագիտությունը հայտնել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը վերլուծության ընթացում ցուցաբերած համագործակցության և աջակցության համար: Հատուկ շնորհակալություն Եվրոպայի խորհրդին, մասնավորապես ծրագրային թիմին՝ տրամադրած արժեքավոր ուղղորդման և արձագանքի համար:

Շնորհակալական խոսքեր են ուղղվում նաև ՀՀ արդարադատության նախարարության Պրոբացիայի ծառայության, Քրեակատարողական ծառայության, «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության, և Միասնական սոցիալական ծառայության, ՀՀ ոստիկանության ծառայողներին, ինչպես նաև այն քաղաքացիական հասարակության կազմակերպություններին ու ընտանեկան բռնության կանխարգելման և արձագանքման ոլորտում աշխատող մասնագետներին, որոնք մեծահոգաբար տրամադրել են իրենց

Ժամանակը, կիսվել են փորձով ու գիտելիքով: Նրանց բաց ու կառուցողական ներգրավվածությունը զգալիորեն հարստացրել են վերլուծությունը և օգնել զեկույցում արտացոլել Հայաստանում ընտանեկան բռնության դեմ պայքարում ներգրավված կառույցների գործունեության արդյունավետությունը և հետագա ուղղությունները:

Ամփոփ նկարագիր

Սույն վերլուծության շրջանակում ուսումնասիրվում է Հայաստանի՝ ընտանեկան բռնություն գործադրած անձանց ռեաբիլիտացման ծրագրերի ներպետական շրջանակը՝ միջազգային և եվրոպական չափորոշիչների, մասնավորապես՝ [«Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի](#) (Ստամբուլի կոնվենցիա) 16-րդ հոդվածի լույսի ներքո: Ձեկույցը ընդգծում է Հայաստանում իրականացված կարևոր օրենսդրական բարեփոխումները, այդ թվում՝ «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» ՀՀ օրենքում 2024 թվականին կատարված փոփոխությունները և ՀՀ կառավարության 2025 թվականի N 35-Ն «Ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձանց ռեաբիլիտացման ծրագիրը հաստատելու մասին» որոշման ընդունումը, որով կարգավորվում է բռնություն գործադրած անձանց ռեաբիլիտացման ծրագիրը՝ որպես ընտանեկան բռնությանն ավելի համապարփակ արձագանքի մաս: Այս բարեփոխումները հստակեցնում են ինստիտուցիոնալ պարտականությունները, ներառում են ռեաբիլիտացիան կանխարգելման և պատասխանատվության փուլերում, ինչպես նաև պատժամիջոցներ են սահմանում պարտադիր միջոցառումները չկատարելու համար:

Չնայած վերը նշված առաջընթացին՝ վերլուծությունը ցույց է տալիս, որ իրականացումը դեռևս վաղ փուլում է, և առկա են մի շարք կառուցվածքային ու գործառնական մարտահրավերներ: Օրենսդրական դրույթները դեռևս լիարժեքորեն չեն վերածվել համաձայնեցված և ստանդարտացված գործելակերպի: Ինստիտուցիոնալ դերերն ու պարտականությունները, թեև ամրագրված են օրենքում, հաճախ բացակայում են մանրամասն գործառնական ուղեցույցներից, ինչը կարող է հանգեցնել հատվածական գործելակերպի և ad hoc կարգավորումների ռիսկի: Ուղղորդման մեխանիզմները դեռևս հստակ չեն, մասնավորապես ոստիկանության, դատարանների, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ու ծառայություններ մատուցողների միջև, ինչը խաթարում է բռնություն գործադրած անձանց արդյունավետ կերպով ներգրավելու կարողությունը: Ներկա կարգավորումների շրջանակը հստակ կերպով չի ներառում ծրագրեր կալանքի տակ գտնվող կամ սեռական բռնություն կատարած անձանց համար, ինչի հետևանքով առաջանում են էական բացեր:

ՀՀ կառավարության N 35-Ն որոշմամբ հաստատված ռեաբիլիտացման ծրագիրը նախատեսում է հստակ կառուցվածք ունեցող մոդուլային մոտեցում, որը ձևավորվում է բռնություն գործադրած յուրաքանչյուր անձի անհատական գնահատման հիման վրա՝ առաջնահերթություն տալով բռնության ենթարկված անձանց անվտանգությանը: Այդուհանդերձ, ծրագրի որոշ մոդուլներ բավարար չափով համապատասխանեցված չեն ընտանեկան բռնությանը բնորոշ դինամիկային: Բացի այդ, դեռևս չեն մշակվել ռիսկերի գնահատման ստանդարտացված գործիքներ, վերահսկողության պլանների ձևանմուշներ կամ մոդուլներին հատուկ ուսումնական նյութեր, ինչը մտահոգություն է հարուցում դրանց իրականացման հետևողականության, որակի և արդյունավետության առումով: Շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցություններում ընդգծվել է հիմնական դերակատարների կարողությունների սահմանափակումների խնդիրը: Մասնավորապես, հասարակական կազմակերպությունները (ՀԿ-ները) շեշտել են համարժեք ֆինանսավորման, հստակ մանդատների և վերապատրաստման անհրաժեշտությունը, որպեսզի կարողանան իրականացնել բռնություն գործադրած անձանց համար նախատեսված արդյունավետ, գոհակենտրոն ծրագրեր՝ չվտանգելով բռնության ենթարկված անձանց

աջակցության ծառայությունների տրամադրումը: Թեև ընտանեկան բռնության դեպքերին գործառնական արձագանքի խթանման նպատակով ստեղծված Միջգերատեսչական աշխատանքային խումբը դարձել է խոստովնալից հարթակ երկխոսության համար, դրա դերը պետք է պաշտոնականացվի և ամրապնդվի՝ արդյունավետ համագործակցության, մոնիթորինգի և խնդիրների լուծման համար:

Զեկույցը եզրակացնում է, որ Հայաստանը ստեղծել է ամուր օրենսդրական հիմք բռնություն գործադրած անձանց ռեաբիլիտացման ծրագրի համար, սակայն այժմ պետք է ներդնի համապատասխան ռեսուրսներ ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման, գործառնական հստակության և միջգերատեսչական համագործակցության ամրապնդման վրա՝ ծրագրի արդյունավետ իրագործումն ապահովելու համար: Հիմնական առաջարկությունները ներառում են՝ մանրամասն գործառնական ուղեցույցների մշակում, գործիքների և ընթացակարգերի ստանդարտացում տարբեր հաստատությունների միջև, ծրագրի պատշաճ և համապատասխան բովանդակության ապահովում, դատական համակարգի և ոստիկանության ներգրավվածության ամրապնդում, ուղղորդման և մոնիթորինգի մեխանիզմների բարելավում, ինչպես նաև բռնության ենթարկված անձանց աջակցության ծառայությունների հետ սերտ համագործակցության ապահովում՝ բռնության ենթարկված անձանց իրավունքներն ու անվտանգությունը երաշխավորելու նպատակով: Այս քայլերը կենսական նշանակություն ունեն գործող շրջանակը լիարժեք աշխատող զոհակենտրոն համակարգի վերածելու համար, որի նպատակն է պատասխանատվության ենթարկել բռնություն գործադրած անձանց, կանխել նոր հանցագործությունների կատարումը և նպաստել Հայաստանում ընտանեկան բռնության վերացման առավել լայն նպատակի իրականացմանը:

Ներածություն

Կանանց նկատմամբ բռնությունը կանանց նկատմամբ խտրականության ձև է և կանանց մարդու իրավունքների խախտում: Տարիներ շարունակ հետազոտությունները ցույց են տալիս, որ Եվրոպական միությունում (ԵՄ) կանանց մեկ երրորդը ենթարկվել է բռնության տանը, աշխատավայրում կամ հանրային վայրերում, և որ բռնություն գործադրած անձինք հիմնականում տղաները և տղամարդիկ են (FRA 2014; FRA, EIGE, Eurostat, 2024):¹ Ընտանեկան բռնությունը մասնավորապես ճանաչվում է որպես գենդերային հիմքով բռնության ձև, որն անհամաչափ կերպով ազդում է կանանց վրա, ինչպես նշվում է Եվրոպայի խորհրդի [«Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին»](#) (Ստամբուլի կոնվենցիա):

«Կանխարգելումը» Ստամբուլի կոնվենցիայի չորս հիմնասյուներից մեկն է, և III գլխում մանրամասն ներկայացված դրույթների շարքում 16-րդ հոդվածով նախատեսվում է, որ մասնակից պետությունները ներդնեն բռնություն գործադրած անձանց համար նախատեսված ծրագրեր

1. ԵՄ հիմնարար իրավունքների գործակալություն (FRA), 2014 թվական, «Կանանց նկատմամբ բռնություն. ԵՄ-ում իրականացված հետազոտություն: Հիմնական արդյունքների գեկույց», Լյուքսեմբուրգ, Եվրոպական Միության հրատարակչական գրասենյակ: FRA, Գենդերային հավասարության եվրոպական ինստիտուտ (EIGE), ԵՎՐՈՍՏԱՏ, 2024 թվական, «ԵՄ գենդերային հիմքով բռնության հետազոտություն. կարևորագույն արդյունքներ: Կանանց փորձառությունները ԵՄ անդամ 27 պետությունում», Լյուքսեմբուրգ, Եվրոպական Միության հրատարակչական գրասենյակ:

և աջակցեն այդ ծրագրերի մշակմանը՝ հաշվի առնելով գենդերային հիմնահարցերը և համագործակցելով կանանց աջակցության ծառայությունների հետ՝ ապահովելու բռնության ենթարկված անձանց պաշտպանությունը: Կոնվենցիայի [Բացատրական գեկույցի](#) համաձայն՝ միջամտությունները պետք է ուղղված լինեն բռնություն գործադրած անձանց պատասխանատվության ենթարկելուն, կանանց նկատմամբ նրանց վերաբերմունքն ու համոզմունքները փոխելուն և, ի վերջո, նրանց կողմից նոր հանցագործությունների կատարումը կանխելուն: Անկախ նրանից՝ բռնություն գործադրած անձանց համար նախատեսված ծրագրերն ուղղված են ընտանեկան բռնություն գործադրած անձանց, թե սեռական հանցագործություններ կատարած անձանց, դրանց նպատակն է բարձրացնել բռնության ենթարկված անձանց անվտանգության և բարեկեցության մակարդակը և ապահովել նրանց մարդու իրավունքների նկատմամբ հարգանքը: Վերջին տարիներին գիտական գրականությունը և բազմապիսի գեկույցները նպաստել են միջազգային հատուկ չափորոշիչների մշակմանը և խոստումնալից փորձի բացահայտմանը, որոնք այժմ կարող են օգտակար լինել պետությունների ջանքերի համար բռնություն գործադրած անձանց համար նախատեսված համարժեք և արդյունավետ ռեաբիլիտացման ծրագրերի մշակման և իրագործման հարցում:

2018 թվականի հունվարի 18-ին ստորագրելով Ստամբուլի կոնվենցիան՝ Հայաստանն ի ցույց դրեց կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ պայքարելու իր քաղաքական կամքը՝ եվրոպական չափորոշիչներին համահունչ: Այդուհանդերձ, առ այսօր կոնվենցիան դեռևս չի վավերացվել: Չնայած դրան՝ Հայաստանը շարունակել է բարեփոխել իր ներպետական օրենսդրությունն ու քաղաքականությունը՝ եվրոպայի խորհրդի սկզբունքներին համապատասխանեցնելու նպատակով, մասնավորապես այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են ընտանեկան բռնության կանխարգելումը, ընտանեկան բռնության ենթարկված անձանց պաշտպանությունը և ընտանեկան բռնություն գործադրած անձանց ռեաբիլիտացման ծրագրերը: Թեև Ստամբուլի կոնվենցիան դեռևս իրավաբանական պարտադիր ուժ չունի Հայաստանի համար, դրա դրույթներն ու ոգին ազդել են ներպետական քաղաքականության մշակման վրա, իսկ դրա վավերացման շուրջ քննարկումները շարունակվում են:

Եվրոպայի խորհրդի «Կանանց նկատմամբ բռնության հաղթահարումը և գենդերային հավասարության ամրապնդումը Հայաստանում (Փուլ 2)» ծրագիրը աջակցում է բռնություն գործադրած անձանց ռեաբիլիտացման ծրագրի մշակմանն ու իրականացմանը՝ որպես ընտանեկան բռնությանը համապարփակ արձագանքի մաս՝ նպաստելով օրենսդրության համապատասխանեցմանը միջազգային չափորոշիչներին, ամրապնդելով ինստիտուցիոնալ կարողությունները և խթանելով միջգերատեսչական համագործակցությունը՝ ապահովելու, որ բռնություն գործադրած անձանց համար նախատեսված համալիր միջամտությունները լինեն անվտանգ, արդյունավետ և զոհակենտրոն:

Սույն ուսումնասիրության նպատակն է գնահատել Հայաստանում բռնություն գործադրած անձանց ռեաբիլիտացման ծրագրի կարգավորմանն ուղղված ներպետական իրավական և քաղաքականության շրջանակը և դրա համապատասխանությունը Ստամբուլի կոնվենցիայով սահմանված չափորոշիչներին՝ հատուկ ուշադրություն դարձնելով 16-րդ հոդվածին: Սեռական բնույթի հանցագործություններ կատարած անձանց համար նախատեսված ծրագրերը դուրս են այս ուսումնասիրության շրջանակից, քանի որ Հայաստանի ներպետական իրավական և քաղաքականության շրջանակը դեռևս չի կարգավորում կամ պարտադիր չի դարձնում ռեաբիլիտացման միջամտությունները տվյալ բնույթի հանցագործություններ կատարած անձանց համար՝ ինչի հետևանքով առկա է էական բաց Ստամբուլի կոնվենցիայի 16-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին համապատասխանության առումով: Զեկույցի նպատակն է գնահատել՝ արդյոք համապատասխան ներպետական օրենքները, այդ թվում՝ «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» ՀՀ օրենքը (Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման մասին օրենք) և «Ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձանց ռեաբիլիտացման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2025 թվականի հունվարի 16-ի N 35-Ն որոշումը (ՀՀ կառավարության N 35-Ն որոշում), ընտանեկան բռնություն գործադրած անձանց համար նախատեսված են կառուցվածքային և արդյունավետ համալիր միջամտություններ, որոնք հիմնված են զոհակենտրոն և գենդերազգային մոտեցման վրա՝

Եվրոպայի խորհրդի ուղեցույցներին և ճանաչված խոստումնալից փորձին համապատասխան:

Սույն վերլուծության շրջանակը ներառում է ինչպես իրավական և քաղաքականության, այնպես էլ գործնական ասպեկտներ: Այն ներառում է ներպետական օրենսդրության ու քաղաքականության վերաբերյալ փաստաթղթերի և ինստիտուցիոնալ մեխանիզմների մանրամասն վերլուծություն, ինչպես նաև գործնականում դրանց կիրառության ուսումնասիրություն: Ձեկույցում գնահատվում են գործող շրջանակի կապակցվածությունը, իրագործելիությունն ու գործառնական նպատակահարմարությունը, բացահայտվում են ուժեղ կողմերն ու բացերը, ինչպես նաև ձևակերպվում են նպատակային առաջարկություններ՝ միջազգային չափորոշիչներին համապատասխանեցման համար: Հատուկ ուշադրություն է դարձվում բռնության ենթարկված անձանց անվտանգությանն առաջնահերթություն տալու կարևորությանը, միջգերատեսչական համագործակցության ձևավորմանը և մոնիթորինգի մեխանիզմների ներդրմանը՝ ապահովելու, որ բռնություն գործադրած անձանց ռեաբիլիտացման ծրագրերը արդյունավետորեն նպաստեն նոր և ավելի ծանր բռնության կանխարգելմանը և այդպիսով՝ բռնության ենթարկված անձանց պաշտպանության ամրապնդմանը:

Սույն ուսումնասիրությունն իրականացվել է գրականության վերլուծության (desk research), շահագրգիռ կողմերի հետ հարցազրույցների և համեմատական վերլուծության միջոցով: Փաստաթղթերի վերլուծությունը (desk review) ներառել է Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման մասին օրենքի, ՀՀ կառավարության N 35-Ն որոշման և այլ համապատասխան իրավական և քաղաքականության փաստաթղթերի վերաբերյալ խորքային վերլուծություն: Մանրամասնորեն ուսումնասիրվել են նաև միջազգային կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության և համակարգային ցանցերի, ինչպես՝ [«Ընտանեկան բռնություն գործադրող անձանց հետ աշխատանքի հարցերով Եվրոպական ցանցը»](#) (WWP EN), կողմից հրապարակված գեկույցներն ու հետազոտությունները: Այս վերլուծությամբ գնահատվել է համապատասխանությունը Ստամբուլի կոնվենցիայի 16-րդ հոդվածին, ինչպես նաև [Եվրոպայի խորհրդի Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության](#)

դեմ պայքարի հարցերով փորձագիտական խմբի (ԳՐԵՎԻՈ) կողմից ներկայացված համապատասխան առաջարկություններին և ուղեցույցներին: ԳՐԵՎԻՈ-ի զեկույցները կարևոր պատկերացում են տալիս Եվրոպայի խորհրդի այլ անդամ պետություններում բռնություն գործադրած անձանց համար նախատեսված ծրագրերի մշակման վերաբերյալ՝ բացահայտելով իրավական և քաղաքականության շրջանակի, ինստիտուցիոնալ և ուղղորդման մեխանիզմների, ծրագրերի մշակման և բովանդակության, ինչպես նաև բռնության ենթարկված անձանց աջակցության ծառայությունների հետ համագործակցության ձևավորման խոստումնալից փորձը: Հարցազրույցներ են անցկացվել հիմնական շահագրգիռ կողմերի հետ²՝ նպատակ ունենալով բացահայտել առկա փորձը, բացթողումներն ու մարտահրավերները, ինչպես նաև շահագրգիռ կողմերի տեսակետները չափորոշիչներին համապատասխանելիության և ակնկալվող արդյունքների վերաբերյալ: Բացի այդ, շահագրգիռ կողմերից հետաքրքրվել են բռնություն գործադրած անձանց ռեաբիլիտացման ծրագրերի, բռնության ենթարկված անձանց աջակցության ծառայությունների, իրավապահ մարմինների և դատական համակարգի միջև համագործակցության և ռիսկերի կառավարման մեխանիզմների վերաբերյալ: Զեկույցը ներկայացվել է տեղական աշխատանքային խմբի քննարկմանը 2025 թվականի հուլիսի 28-ին՝ վերլուծությունն ու առաջարկությունները վերանայելու, դրանց վերաբերելիությունն ապահովելու և ազգային վերահսկողությունն ու առաջնորդությունը դրանց իրագործման նկատմամբ խթանելու նպատակով:

2. Հարցազրույցներին մասնակցած շահագրգիռ կողմերի և հաստատությունների ցանկը ներկայացված է Հավելված II-ում:

I. Բռնություն գործադրած անձանց ռեաբիլիտացման ծրագրերի միջազգային և եվրոպական չափորոշիչներ

1.1 Աշխատանք բռնություն գործադրած անձանց հետ՝ կանանց նկատմամբ բռնությունը կանխելու նպատակով

1970-ական թվականներից սկսած՝ ընտանեկան բռնության ենթարկված անձանց աջակցության կենտրոնների ստեղծումից անմիջապես հետո, բռնություն գործադրած անձանց հետ աշխատանքի անհրաժեշտությունը դարձավ կարևոր խնդիր: Այս գործունեությամբ զբաղվող մասնագետները նկատել են, որ թեև կանայք բազմիցս դիմել են նման մասնագիտացված ծառայությունների, այնուամենայնիվ, բռնություն գործադրած անձանց վարքագծում գրեթե փոփոխություններ չեն արձանագրվել: Միացյալ Նահանգներում այս ուղղությամբ առաջին փորձարարական մոդելները՝ Դուլութի (Duluth) մոդելը և Իմերջ (Emerge) ծրագիրը, բռնություն գործադրած անձանց նկատմամբ միջամտությունները դիտարկում էին որպես համայնքային համակարգված արձագանք ընտանեկան բռնությանը՝ համագործակցելով կանանց աջակցության ծառայությունների հետ:³

3. Ես, Քրիսթինա Օդոն և Դոնյետա Մորինա (2021 թվական): Ընտանեկան բռնություն և կանանց նկատմամբ բռնություն գործադրող անձանց համար ուղղման ծրագրերի հիմնում: Ստրասբուրգ:

1990-ականներին ընտանեկան բռնության աճող քրեականացումը ցույց տվեց բացառապես պատժիչ մոտեցման սահմանափակումները և ընդգծեց բռնություն գործադրած անձանց ուղղված կանխարգելիչ միջոցառումների ու ռեաբիլիտացիման նախաձեռնությունների կարևորությունը: 1995 թվականին Պեկինի ՄԱԿ-Կանանց հարցերով համաշխարհային համաժողովի եզրափակիչ փաստաթղթում առաջին անգամ հղում արվեց «ընտանեկան բռնություն գործադրած անձանց ռեաբիլիտացիման անհրաժեշտությանը»՝ այդպիսով թեման ներառելով մարդու իրավունքների պաշտպանության միջազգային կազմակերպությունների օրակարգում:

2000-ականներից ի վեր Եվրոպայում իրականացվել են բռնություն գործադրած անձանց համար նախատեսված մի շարք ծրագրեր, թեև դրանք եղել են ոչ հետևողական և հիմնված չէին ստանդարտացված մոտեցման վրա: Այս տասնամյակի ընթացքում Եվրոպայի խորհուրդը մեկնարկել է մի շարք նախաձեռնություններ՝ նպատակ ունենալով քարտեզագրել Եվրոպայի տարբեր երկրներում գործող պրակտիկան, ինչը հանգեցրեց Եվրոպայի խորհրդի թիվ Rec(2002)5 հանձնարարականի ընդունմանը:⁴ [Բռնությունից կանանց պաշտպանելու մասին Նախարարների խորհրդի հանձնարարականում](#) հստակ սահմանվում է «բռնություն գործադրած անձ» հասկացությունը, առաջարկվում են կոնկրետ ցուցումներ բռնություն գործադրած անձանց համար նախատեսված ծրագրերի իրականացման վերաբերյալ և հստակ ընդգծվում է ընտանեկան բռնության գենդերային ուղղվածությունը՝ շեշտադրելով բռնության և առնականության սոցիալական կերտվածքի միջև կապը:

Ծառայությունների նվազագույն չափորոշիչների վերաբերյալ առաջին համակարգված վերլուծությունը, որը հրապարակվել է Եվրոպայի խորհրդի կողմից 2008 թվականին, ներառում է ընտանեկան բռնություն գործադրած անձանց ուղղված գործողությունների մասին բաժին՝ շեշտադրելով նման ծրագրերի ստեղծման անհրաժեշտությունը կանանց աջակցության ծառայությունների

Եվրոպայի խորհուրդ: <https://rm.coe.int/research-on-perpetrator-treatment-programmes-koso-vo-eng/1680a24362>

4. Եվ, Բռնությունից կանանց պաշտպանելու մասին թիվ Rec 2002 (5) հանձնարարական (Եվրոպայի խորհուրդ, 2002 թվական):

հետ սերտ համագործակցությամբ՝ կանանց պաշտպանության ամրապնդման և նրանց անվտանգության ապահովման նպատակով: Իր հերթին, 2010 թվականի Կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ օրենսդրության ՄԱԿ-ի ձեռնարկում, որով նույնպես նախատեսվում են «Բռնություն գործադրած անձանց համար միջամտության ծրագրեր և այլընտրանքային պատժամիջոցներ», ընդգծվում է ռիսկերի հանգամանալի գնահատման կարևորությունը նախքան այլընտրանքային պատժամիջոցների կիրառումը:

Այս նախաձեռնությունները հիմք են հանդիսացել Ստամբուլի կոնվենցիայում հատուկ հոդված ներառելու համար, ինչպես նշված է Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի հարցերով ժամանակավոր կոմիտեի (CAHVIO) նախնական աշխատանքների վերաբերյալ փաստաթղթերում: Իր առաջին նիստից սկսած՝ Կոմիտեն կարևորել է «տղամարդկանց դերը՝ որպես օրինակելի դերակատարներ բռնությունից զերծ վարքագիծ որդեգրելու և գենդերային հավասարությունը խթանելու գործում»,⁵ և այնուհետև համաձայնության եկել «ընդգծելու այդ ծրագրերի կարևորությունը՝ հետագա բռնությունը կանխելու և դրանց իրականացումը խթանելու նպատակով»:⁶

1.2 Ստամբուլի կոնվենցիայի 16-րդ հոդվածը

Ստամբուլի կոնվենցիան, որը ուժի մեջ է մտել 2014 թվականին, ունի չորս հիմնասյուն՝ կանանց նկատմամբ բռնության կանխարգելում, բռնության ենթարկված անձանց պաշտպանություն, բռնություն գործադրած անձանց պատասխանատվության ենթարկում, ինչպես նաև համապարփակ և համակարգված քաղաքականության իրականացում: Բռնություն գործադրած անձանց հետ աշխատանքը դիտարկվում է որպես կանանց նկատմամբ բռնության կանխարգելման լայնածավալ ռազմավարության բաղկացուցիչ մաս (Գլուխ III): 16-րդ հոդվածի համաձայն՝ կոնվենցիայի մասնակից պետություններից պահանջվում է համակարգված կերպով ստեղծել «կանխարգելիչ միջամտության և ուղղման ծրագրեր»՝ գենդերազգային մոտեցմամբ և սերտորեն

5. CAHVIO, Կոմիտեի առաջին նիստի զեկույց (2009 թվական) 5:

6. CAHVIO, Կոմիտեի երկրորդ նիստի զեկույց (2009 թվական) 31:

համագործակցելով կանանց աջակցության ծառայությունների հետ՝ նպատակ ունենալով «օգնել բռնություն գործադրած անձանց փոխելու իրենց վերաբերմունքն ու վարքագիծը՝ ընտանեկան բռնության և սեռական բռնության հետագա գործողությունների կանխարգելման նկատառումով»։ Հոդվածը մասնավորապես վերաբերում է բռնություն գործադրած անձանց երկու հիմնական խմբի՝ ընտանեկան բռնություն գործադրած և սեռական բնույթի հանցագործություններ կատարած անձանց։⁷

Հոդված 16 – Կանխարգելիչ միջամտություն և ուղղման ծրագրեր

1. Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ աջակցության այնպիսի ծրագրեր հիմնելու, կամ առկա այնպիսի ծրագրերին աջակցելու նպատակով, որոնք ուղղված կլինեն ընտանեկան բռնություն գործադրած անձանց կողմից միջանձնային հարաբերություններում բռնությունից զերծ վարքագիծ որդեգրելը սովորեցնելուն՝ հետագա բռնությունը կանխելու և բռնի վարվելակերպը փոխելու նպատակով:
2. Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ այնպիսի ծրագրեր հիմնելու, կամ առկա այնպիսի ծրագրերին աջակցելու նպատակով, որոնք ուղղված կլինեն մասնավորապես սեռական հանցագործություններ կատարած անձանց կողմից նոր հանցագործությունների կատարումը կանխելուն:
3. Մասնակից պետությունները պետք է ապահովեն, որպեսզի բռնության ենթարկված անձանց անվտանգությունը, նրանց աջակցություն տրամադրելը և նրանց մարդու իրավունքները լինեն հիմնական մտահոգության առարկա և որպեսզի, անհրաժեշտության դեպքում, այս ծրագրերը մշակվեն և իրականացվեն բռնության ենթարկված անձանց մասնագիտացված աջակցություն տրամադրող ծառայությունների հետ սերտ համագործակցությամբ:

7. Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի բացատրական զեկույց (Ստամբուլ, 2011 թվական), 102-րդ պարբերություն:

Բացատրական զեկույցի համաձայն՝ այս դրույթներն արտացոլում են այնպիսի ծրագրերի անհրաժեշտությունը, որոնք հիմնված են ապացույցների վրա, խրախուսում են բռնություն գործադրած անձանց պատասխանատվություն ստանձնել և քննադատաբար անդրադառնալ վնասակար վերաբերմունքին, հատկապես՝ կանանց նկատմամբ: Ծրագրերը պետք է իրականացվեն վերապատրաստված մասնագետների կողմից, մշակութային և լեզվական առումով հարմարեցված լինեն և մշակվեն բռնության ենթարկված անձանց աջակցության ծառայությունների, իրավապահ մարմինների, դատական համակարգի և այլ համապատասխան դերակատարների հետ համագործակցությամբ՝ բռնության ենթարկված անձանց անվտանգությունն ապահովելու համար: Ինչ վերաբերում է սեռական հանցագործություններ կատարած անձանց համար նախատեսված ծրագրերին, Բացատրական զեկույցում ընդգծվում է դրանց դերը ռեցիդիվիզմի կանխարգելման և սոցիալական վերաինտեգրմանն աջակցության գործում: Թեև մասնակից պետություններն ունեն հայեցողության որոշակի շրջանակ և կարող են մշակել հատուկ ծրագրեր, բռնության ենթարկված անձանց անվտանգությունն ու նրանց մարդու իրավունքների պաշտպանությունը պետք է գերակա նշանակություն ունենան բոլոր մոտեցումներում⁸:

Ստամբուլի կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հետո 16-րդ հոդվածում և Բացատրական զեկույցում ամրագրված հատուկ պարտավորությունները աստիճանաբար լրացվել և հստակեցվել են երկու զուգահեռ գործընթացների շնորհիվ, մի կողմից՝ բռնություն գործադրած անձանց հետ աշխատող ծրագրերի համար եվրոպական չափորոշիչների մշակման, որն իրականացվել է WWP EN համակարգող ցանցային կազմակերպության կողմից, և մյուս կողմից՝ Ստամբուլի կոնվենցիայի իրականացման վերաբերյալ երկրների գնահատման ընթացակարգերի (եվակետային գնահատման և թեմատիկ գնահատման փուլերի) շրջանակներում GREVIO-ի կատարած մոնիթորինգի միջոցով:

8. Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի բացատրական զեկույց (Ստամբուլի կոնվենցիա), հասանելի է հետևյալ հղումով՝ <https://rm.coe.int/1680a48903>:

1.3 Եվրոպական չափորոշիչներին ուղղված քայլեր

Բռնություն գործադրած անձանց համար նախատեսված ծրագրերի զգալի ավելացման ֆոնին ԵՄ-ն աջակցել է Daphne II ծրագրին (2006-2008 թվականներ)՝ «Եվրոպայում ընտանեկան բռնություն գործադրած անձանց հետ աշխատանք – WWP» նախաձեռնությանը, բացահայտել է 192 ծրագիր 19 եվրոպական երկրներում, ձևավորել մասնագետների միջև լավագույն փորձի փոխանակման հարթակ և, ի վերջո, քննարկում ծավալել ընտանեկան բռնություն գործադրած անձանց հետ աշխատանքում ներդաշնակեցված չափորոշիչների մշակման անհրաժեշտության շուրջ: 2014 թվականին Բեռլինում հիմնադրվեց WWP EN համակարգող ցանցային կազմակերպությունը, որն ի սկզբանե ներառում էր 13 տարբեր երկրներից 18 անդամ՝ նպատակ ունենալով մշակել ծրագրերի հավատարմագրման չափանիշներ, ինչպես նաև չափորոշիչներ՝ Ստամբուլի կոնվենցիային համահունչ: Չափորոշիչների մշակման կարևորության շեշտադրումը բխում էր բռնություն գործադրած անձանց համար ծրագրերի ոչ պատշաճ իրականացման հետ կապված հիմնական ռիսկերին հակազդելու անհրաժեշտությունից և, ի վերջո, հանգեցրեց [Ընտանեկան բռնություն գործադրած անձանց հետ իրականացվող ծրագրերի չափորոշիչների մշակման առաջին ուղեցույցի ստեղծմանը \(2018\):](#)

2023 թվականին վերջապես հրապարակվեց ավելի ամբողջական և համապարփակ փաստաթուղթ, որն արտացոլում է քաղաքացիական հասարակության մասնագիտացված կազմակերպությունների փորձառությունը: [«Բռնություն գործադրած անձանց համար նախատեսված ծրագրերի եվրոպական չափորոշիչներ. բռնության ենթարկված անձանց անվտանգության վրա հիմնված և զուգընկերոջ նկատմամբ բռնություն գործադրած անձանց համար ծրագրերի չափորոշիչներ»](#) աշխատանքային փաստաթղթով⁹ սահմանվում են սկզբունքներ և նվազագույն պահանջներ՝ ապահովելու, որ այդպիսի ծրագրերը լինեն անվտանգ, արդյունավետ և զոհակենտրոն՝ հաշվի

9. Եվրոպայի խորհուրդ, Ընտանեկան բռնություն գործադրող անձանց հետ աշխատանքի հարցերով Եվրոպական ցանցից Սանդրա Յովանովիչ Բելոտիչ և Բերտա Վալ, և Կիերան ՄըքԲարթան, Արևմտյան Անգլիայի համալսարան, Բրիստոլ, «Բռնություն գործադրող անձանց ուղղված անվտանգ և արդյունավետ ծրագրերի ուղեցույց. Ստամբուլի կոնվենցիայի 16-րդ հոդված» (2024 թվական), էջեր 13-14, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://rm.coe.int/article-16-arm/native/1680b44650>

առնելով գենդերային տեսանկյունը: Չափորոշիչները կառուցված են հինգ հիմնական ուղղությունների շուրջ՝ (1) բռնության ենթարկված անձանց անվտանգության և բարեկեցության ապահովում՝ աջակցության ծառայությունների հետ համագործակցության և տեղեկությունների փոխանակման հստակ ընթացակարգերի միջոցով, (2) ռիսկերի շարունակական գնահատում և կառավարում՝ անհրաժեշտության դեպքում համակարգելով արտաքին գերատեսչությունների հետ, (3) կառուցվածքային և նպատակային ծրագրերի մշակում, որոնք ուղղված են ընտանեկան բռնություն գործադրած տղամարդկանց՝ նպատակ ունենալով դադարեցնել բռնի վարքագիծը և խթանել պատասխանատվությունը, (4) որակի ապահովման երաշխավորում՝ անձնակազմի վերապատրաստման և ծրագրի արդյունավետության կանոնավոր գնահատման միջոցով, (5) արդյունավետ կազմակերպչական կառավարման ապահովում՝ բավարար մարդկային և ֆինանսական ռեսուրսներով, ինչպես նաև գործընկերային համագործակցությամբ: Այս չափորոշիչները նպատակ ունեն կանխել հետագա բռնությունը, պաշտպանել բռնության ենթարկված անձանց իրավունքներն ու բարեկեցությունը և հիմք են ծառայում եվրոպայի տարբեր երկրներում գործող և նոր մշակվող ծրագրերի համար:

WWP EN ցանցի փորձառությունը հիմք է հանդիսացել մեկ այլ հիմնարար փաստաթղթի մշակման համար՝ «Բռնություն գործադրած անձանց ուղղված անվտանգ և արդյունավետ ծրագրերի ուղեցույց. Ստամբուլի կոնվենցիայի 16-րդ հոդված», որը հրապարակվել է Եվրոպայի խորհրդի կողմից 2024 թվականին: Այս ուսումնասիրության համաձայն՝ բռնություն գործադրած անձանց ուղղված ծրագրերը կարող են իրականացվել քրեակատարողական հիմնարկներում, պրոբացիայի ծառայություն մատուցող հաստատություններում և ազատազրկման հետ չկապված այլ հաստատություններում: Դրանք կարող են իրականացվել ինչպես պետական գերատեսչությունների, այնպես էլ ՀՀ-ների կողմից: Մի կողմից՝ դատարանների կամ այլ պարտադիր ուղղորդման մեխանիզմների միջոցով բռնություն գործադրած անձանց կարող է կարգադրվել մասնակցել կանխարգելիչ միջամտության և ուղղման այդ ծրագրերին: Մյուս կողմից՝ նրանց մասնակցությունը կարող է լինել կամավորության սկզբունքով՝ այլ գերատեսչությունների (օրինակ՝ երեխաների պաշտպանության ծառայությունների, առողջապահական

ծառայությունների) առաջարկությամբ կամ ինքնուրույն ուղղորդման միջոցով: Անչափ կարևոր է, որ այդ ծրագրերը հասանելի լինեն տարբեր հաստատություններում, քանի որ դրանք ուղղված են բնություն գործադրած անձանց տարբեր խմբերին՝ նրանց, ովքեր հայտնաբերվել են քրեական արդարադատության համակարգի, քաղաքացիական արդարադատության, այլ շահագրգիռ կողմերի (օրինակ՝ երեխաների պաշտպանության գործակալությունների) կողմից, և նրանց, ովքեր չեն հայտնաբերվել որևէ գերատեսչության կողմից, սակայն կարող են կամավոր կերպով փնտրել օգնություն¹⁰:

Ամփոփելով՝ բնություն գործադրած անձանց ուղղված ծրագրերի վերաբերյալ չափորոշիչները հանգում են մի շարք առանցքային սկզբունքների՝ բնություն գործադրած անձանց համար նախատեսված ծրագրերի նպատակը պետք է միտված լինի փոխելու բռնի վարքագիծը և կանխելու ռեցիդիվիզմը՝ խրախուսելով պատասխանատվության ստանձնումը և նման վերաբերմունքի քննադատական վերանայումը՝ հատկապես կանանց նկատմամբ: Ծրագրերը չպետք է փոխարինեն իրավական վարույթները և չպետք է ներառեն ընտանեկան գործերով հաշտարարություն, պետք է իրականացվի ռիսկերի համապարփակ գնահատում՝ բնության ենթարկված անձանց անվտանգությունը առաջնահերթ դարձնելու նպատակով, այդ թվում՝ վերջիններիս տեղեկացնել ցանկացած մտահոգության մասին, որ կարող է ի հայտ գալ բնություն գործադրած անձի մասնակցության ընթացքում: Ծրագրերը պետք է լինեն հասանելի թե՛ կամավոր հիմունքներով, թե՛ պարտադիր ուղղորդման միջոցով՝ ինչպես ազատազրկման, այնպես էլ ազատազրկման հետ չկապված հաստատություններում, դրանք պետք է գործեն անկախ, բայցև բնության ենթարկված անձանց աջակցության ծառայությունների, արդարադատության և երեխաների պաշտպանության համակարգերի հետ սերտ համագործակցությամբ: Բացի այդ, այդպիսի ծրագրեր իրականացնող անձնակազմը պետք է լինի հմուտ և վերապատրաստված ոչ միայն հոգեբանության և ընտանեկան բնության դինամիկայի ոլորտներում, այլև ունենա մշակութային և

10. Եվրոպայի խորհուրդ, Ընտանեկան բնություն գործադրող անձանց հետ աշխատանքի հարցերով Եվրոպական ցանցից Սանդրա Յովանովիչ Բելուտիչ և Բերտա Վալ, և Կիերան Մրքթարթան, Արևմտյան Անգլիայի համալսարան, Բրիստոլ, «Բնություն գործադրող անձանց ուղղված անվտանգ և արդյունավետ ծրագրերի ուղեցույց. Ստամբուլի կոնվենցիայի 16-րդ հոդված» (2024 թվական), էջեր 13-14, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://rm.coe.int/article-16-arm/native/1680b44650>

լեզվական կարողություններ՝ տարբեր խմբերի մասնակցների հետ արդյունավետ աշխատանքի համար¹¹:

1.4 ԳՐԵՎԻՈՒ-ի դիտարկումները և առաջարկությունները

Մոնիթորինգի առաջին փուլից սկսած՝ ԳՐԵՎԻՈՒ-ն ուսումնասիրել է սեռական հանցագործություններ և ընտանեկան բռնություն գործադրած անձանց համար նախատեսված ծրագրերին առնչվող մի շարք ասպեկտներ: Ներպետական իշխանությունների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների տրամադրած տեղեկությունների հիման վրա, ինչպես նաև երկրներ այցելությունների ընթացքում ստացված տեղեկությունների վերլուծության արդյունքում, թե՛ ելակետային գնահատման և թե՛ թեմատիկ գնահատման զեկույցներում պարզաբանվում է 16-րդ հոդվածի և դրա գործնական կիրառության հետ կապված ԳՐԵՎԻՈՒ-ի ընկալումը՝ Ստամբուլի կոնվենցիայի դրույթներին համապատասխանությունն ապահովելու նպատակով¹²:

ԳՐԵՎԻՈՒ-ի դիտարկումներն ու առաջարկությունները ներկայացվում են՝ համաձայնեվրոպայի խորհրդի «Բռնություն գործադրող անձանց ուղղված անվտանգ և արդյունավետ ծրագրերի ուղեցույցում»¹³ սահմանված չորս առանձին բաժինների՝ (1) Ընտանեկան բռնություն գործադրած անձանց ուղղված ծրագրերի իրավական և քաղաքականության շրջանակը, (2) Ծրագրերն ապահովողները, (3) Ընտանեկան բռնության ենթարկված անձանց, մասնավորապես կանանց և երեխաների անվտանգությունն ու բարեկեցությունը, (4) Ընտանեկան բռնություն գործադրած անձանց

11. ԵԱՀԿ և ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ, «Կենտրոնական Ասիայում ընտանեկան բռնություն գործադրող անձանց համար ծրագրերի քարտեզագրում» (2024 թվական), հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.osce.org/files/f/8/576324.pdf>: ԵՆ, Քրիսթինա Օդոն և Դոնյետա Մորինա (2021 թվական): Ընտանեկան բռնություն և կանանց նկատմամբ բռնություն գործադրող անձանց համար ուղղման ծրագրերի հիմնում: Ստրասբուրգ. Եվրոպայի խորհուրդ: <https://rm.coe.int/research-on-perpetrator-treatment-programmes-kosovo-eng/1680a24362>

12. Այս զեկույցի կազմման պահին Կոնվենցիայի բոլոր մասնակից պետություններում անցկացվել էր ելակետային գնահատման ընթացակարգը, մինչդեռ առաջին թեմատիկ գնահատման «Վստահության ձևավորում՝ աջակցություն, պաշտպանություն և արդարություն ապահովելու միջոցով» փուլը անցկացվել էր միայն ինը երկրում՝ (Ալբանիա, Ավստրիա, Դանիա, Ֆինլանդիա, Մոնակո, Մոնտենեգրո, Պորտուգալիա, Իսպանիա և Շվեդիա): Սույն ուսումնասիրությունը վերաբերում է միայն մինչև 2025 թվականի սեպտեմբերի 5-ը հրապարակված զեկույցներին:

13. Եվրոպայի խորհուրդ, Ընտանեկան բռնություն գործադրող անձանց հետ աշխատանքի հարցերով Եվրոպական ցանցից Սանդրա Յովանովիչ Բելուտիչ և Բերտա Վալ, և Կիերան Մրքեարթան, Արևմտյան Անկախի համալսարան, Բրիստոլ, «Բռնություն գործադրող անձանց ուղղված անվտանգ և արդյունավետ ծրագրերի ուղեցույց. Ստամբուլի կոնվենցիայի 16-րդ հոդված» (2024 թվական), էջեր 14-28:

ուղղված ծրագրերի մշակումը:

1.4.1. Ընտանեկան բռնություն գործադրած անձանց ուղղված ծրագրերի իրավական և քաղաքականության շրջանակը

ԳՐԵՎԻՈՒ-ն նշել է, որ յուրաքանչյուր երկրում անհրաժեշտ է ապահովել համարժեք իրավական և քաղաքականության շրջանակ բռնություն գործադրած անձանց ուղղված ծրագրերի մշակման համար, ինչպես նաև երաշխավորել այդ ծրագրերի հասանելիությունը ամբողջ երկրում, ինչպես Իտալիայի, Ֆրանսիայի, Սերբիայի և Ֆինլանդիայի դեպքում¹⁴: Այն նաև ընդգծել է փոքրամասնությունների համար ծրագրերը հասանելի դարձնելու կարևորությունը¹⁵ միաժամանակ երաշխավորելով, որ միգրանտ համայնքները չեն ենթարկվի խարանի¹⁶:

Միջգերատեսչական համագործակցությունը խիստ կարևոր է բռնություն գործադրած անձանց հետ աշխատանքը՝ որպես ընտանեկան բռնությանը համապարփակ և համակարգված արձագանքի մաս ճանաչելու համար: Այս կապակցությամբ ԳՐԵՎԻՈՒ-ն հաճախ խրախուսել է ներգրավել բոլոր համապատասխան պետական և վարչական մարմիններին, այդ թվում՝ համայնքային և սոցիալական ծառայությունների աշխատակիցներին, իրավապահ մարմինների ներկայացուցիչներին, դատախազներին և դատավորներին՝ նպատակ ունենալով բռնություն գործադրած անձանց տեղեկացնել այդ ծրագրերի գոյության և դրանց մասնակցության հնարավորության մասին: Առաջին թեմատիկ գնահատման զեկույցներում վերահաստատվել է նման ծրագրերի ներդրման անհրաժեշտությունը, մասնավորապես այն երկրներում, որտեղ դրանք դեռևս գոյություն չունեն, ինչպես օրինակ՝ Մոնակոյի դեպքում¹⁷, կամ որտեղ դրանք կենտրոնացած են բացառապես բժշկական աջակցության վրա,

14. Տե՛ս ԳՐԵՎԻՈՒ-ի ելակետային գնահատման զեկույցները Իտալիայի վերաբերյալ, պարբերություններ 108-110, Ֆրանսիայի վերաբերյալ, պարբերություն 117, Սերբիայի վերաբերյալ, պարբերություն 83, ինչպես նաև ԳՐԵՎԻՈՒ-ի առաջին թեմատիկ գնահատման զեկույցը Ֆինլանդիայի վերաբերյալ, պարբերություն 85:

15. ԳՐԵՎԻՈՒ-ի առաջին թեմատիկ գնահատման զեկույցը Ֆինլանդիայի վերաբերյալ, պարբերություն 87:

16. ԳՐԵՎԻՈՒ-ի առաջին թեմատիկ գնահատման զեկույցը Շվեդիայի վերաբերյալ, էջ 5:

17. Տե՛ս ԳՐԵՎԻՈՒ-ի առաջին թեմատիկ գնահատման զեկույցը Մոնակոյի վերաբերյալ, պարբերություն 80:

ինչպես Մոնտենեգրոյի դեպքում¹⁸: Այն երկրներում, որտեղ բռնություն գործադրած անձանց համար նախատեսված ծրագրեր արդեն գործում են և արդյունավետ են աշխատում, ԳՐԵՎԻՈՒ-ն կարևորել է դրանց ընդլայնման անհրաժեշտությունը՝ կոչ անելով ավելացնել ուղղորդման մեխանիզմները: ԳՐԵՎԻՈՒ-ն նշել է, որ նույնիսկ եթե առկա են ուղղորդման մեխանիզմներ, մասնակցությունը միշտ չէ, որ պարտադիր է, և ծրագրերին ուղղորդումը հետևողականորեն չի իրականացվում¹⁹: Ինչպես նշված է «Բռնություն գործադրող անձանց ուղղված անվտանգ և արդյունավետ ծրագրերի ուղեցույցում», «այս անհամապատասխանությունը բացատրվում է այնպիսի գործոններով, ինչպիսիք են Ավստրիայում արձանագրված՝ դատվածության ցածր ցուցանիշները, Ֆրանսիայում արձանագրված՝ ուղղորդող կազմակերպությունների կարողությունների զարգացման անհրաժեշտությունը, կամ բռնություն գործադրած անձանց ուղղված ծրագրերի բացակայությունը և հորվաթիայում արձանագրված՝ ֆինանսավորման կրճատումը»²⁰:

Մի շարք առիթներով ԳՐԵՎԻՈՒ-ն նշել է, որ մասնակից պետությունները պետք է ոչ միայն ավելացնեն ծրագրերի թիվը (ինչպես օրինակ՝ Ալբանիայում, Դանիայում, Իտալիայում, Մոնտենեգրոյում, Պորտուգալիայում, Սերբիայում և Թուրքիայում), այլև ընդլայնեն դրանց շրջանակը՝ ընդգծելով յուրաքանչյուր երկրում ծրագրերին ինչպես կամավոր, այնպես էլ պարտադիր մասնակցության ապահովման անհրաժեշտությունը: Մի կողմից՝ ԳՐԵՎԻՈՒ-ն նշել է, որ կանխարգելիչ միջամտության և ուղղման ծրագրերը պետք է հասանելի լինեն նաև ինքնուրույն ուղղորդման միջոցով, ինչպես մատնանշված է բազմաթիվ զեկույցներում՝ թե՛ ելակետային և թե՛ թեմատիկ գնահատման

18. Տե՛ս ԳՐԵՎԻՈՒ-ի առաջին թեմատիկ գնահատման զեկույցը Մոնտենեգրոյի վերաբերյալ, պարբերություններ 77-81: Ծրագրերն ուղղված են կախվածության խնդիրների, թմրամիջոցների չարաշահման կամ հոգեկան առողջության խնդիրների բուժմանը և հիմնականում իրականացվում են հոգեկան առողջության հաստատություններում:

19. Տե՛ս ԳՐԵՎԻՈՒ-ի առաջին թեմատիկ գնահատման զեկույցները Ավստրիայի վերաբերյալ, պարբերություն 75, Ալբանիայի վերաբերյալ, պարբերություն 72, և Դանիայի վերաբերյալ, պարբերություններ 76-77:

20. Եվրոպայի խորհուրդ, Ընտանեկան բռնություն գործադրած անձանց հետ աշխատանքի հարցերով Եվրոպական ցանցից Սանդրա Յովանովիչ Բելտիչ և Բերտա Վալ, և Կիերան Մրքեարթան, Արևմտյան Անգլիայի համալսարան, Բրիստոլ, «Բռնություն գործադրող անձանց ուղղված անվտանգ և արդյունավետ ծրագրերի ուղեցույց. Ստամբուլի կոնվենցիայի 16-րդ հոդված» (2024 թվական), էջ 14:

գեկույցներում²¹: Մյուս կողմից՝ եթե բռնություն գործադրած անձանց համար նախատեսված ծրագրերը հասանելի են միայն կամավոր հիմունքներով, ինչպես Իտալիայի դեպքում, ԳՐԵՎԻՈՒ-ն խստորեն խրախուսել է ներպետական իշխանություններին դիտարկել «այդպիսի ծրագրերին բռնություն գործադրած անձանց մասնակցությունը պարտավորեցնելու»²² հնարավորությունը: Ալբանիայի վերաբերյալ առաջին թեմատիկ գնահատման գեկույցում ԳՐԵՎԻՈՒ-ն գոհունակությամբ նշել է, որ թեև ծրագրերը սովորաբար հասանելի են եղել միայն կամավոր հիմունքներով, այնուամենայնիվ, «դատարանները այժմ կարող են կարգադրել բռնություն գործադրած անձանց մասնակցել ռեաբիլիտացման ծրագրերին՝ որպես պաշտպանական որոշման մաս»²³:

Այն երկրներում, որտեղ մասնակցությունը կարող է կարգադրվել այլընտրանքային պատժի և արդարադատության վերականգնողական նախաձեռնությունների համատեքստում, ԳՐԵՎԻՈՒ-ն խրախուսել է մասնակից պետություններին հստակ սահմանել այն պայմանները, որոնց դեպքում բռնություն գործադրած անձանց թույլատրվում է ընդգրկվել որևէ ծրագրում, քանի որ ծրագրերը չպետք է օգտագործվեն որպես պատժիչ միջոցների այլընտրանք կամ փոխարինեն քրեական հետապնդումը, դատապարտումը կամ պատիժ կրելը²⁴, որպեսզի երաշխավորվի բռնության ենթարկված անձանց համար արդար ու անաչառ դատական գործընթացներին հասանելիության սկզբունքը²⁵:

21. Տե՛ս, օրինակ, ԳՐԵՎԻՈՒ-ի ելակետային գնահատման գեկույցները Ավստրիայի վերաբերյալ, պարբերություններ 82-87, Թուրքիայի վերաբերյալ, պարբերություններ 123-131, Մոնակոյի վերաբերյալ, պարբերություններ 55-58, Պորտուգալիայի վերաբերյալ, պարբերություններ 101-106: Պորտուգալիայի վերաբերյալ իր առաջին թեմատիկ գնահատման գեկույցում ԳՐԵՎԻՈՒ-ն վերահաստատել է կամավոր մասնակցության մեխանիզմների ապահովման կարևորությունը (պարբերություններ 70 և 75) և հորդորել ներպետական իշխանություններին սահմանել պատժամիջոցներ ծրագրերին չմասնակցելու կամ դրանք չավարտելու դեպքում (պարբերություն 74):
22. Տե՛ս ԳՐԵՎԻՈՒ-ի ելակետային գնահատման գեկույցը Իտալիայի վերաբերյալ, պարբերություն 117:
23. Տե՛ս ԳՐԵՎԻՈՒ-ի առաջին թեմատիկ գնահատման գեկույցը Ալբանիայի վերաբերյալ, պարբերություն 73:
24. Ինչպես հետևյալ ելակետային գնահատման գեկույցներում՝ Ալբանիա, պարբերություն 71, Պորտուգալիա, պարբերություն 105, Թուրքիա, պարբերություն 128:
25. ԳՐԵՎԻՈՒ-ի ելակետային գնահատման գեկույցը Պորտուգալիայի վերաբերյալ, պարբերություն 105ա, վերահաստատել է իր առաջին թեմատիկ գնահատման գեկույցում, պարբերություններ 69-71. «Ներպետական իշխանությունների պարտականությունն է ապահովել, որ բռնություն կատարողների համար նախատեսված ծրագրերի և քրեական վարույթի փոխկապակցվածությունը չվնասի բռնության ենթարկված անձանց՝ արդար և անաչառ դատական գործընթացներին հասանելիության սկզբունքին»: Տե՛ս նաև ԳՐԵՎԻՈՒ-ի ելակետային

Ի պաշտպանություն այս պնդման՝ ԳՐԵՎԻՈՒ-ն նշել է, որ բռնություն գործադրած անձանց համար նախատեսված ծրագրերը պետք է ընկալվեն որպես կանխարգելիչ միջոց՝ *իրոմն* քրեական վարույթի²⁶:

ԳՐԵՎԻՈՒ-ն նաև ընդգծել է ծրագրերի բավարար ֆինանսավորման ապահովման կարևորությունը՝ միաժամանակ հաշվի առնելով ֆինանսավորման աղբյուրների դիվերսիֆիկացման անհրաժեշտությունը՝ ծրագրերի կայունությունը երաշխավորելու նպատակով: Մասնավորապես, Իսպանիայի դեպքում ԳՐԵՎԻՈՒ-ն մատնանշել է համապատասխան ֆինանսավորում ապահովելու անհրաժեշտությունը այն ծրագրերի համար, որոնք ուղղված են բռնություն գործադրած անձանց, «որոնց վերաբերյալ հաղորդում չի ներկայացվել իրավապահ մարմիններին կամ որոնք չեն դատապարտվել»²⁷: Այս առումով կարևոր է նշել, որ WWP EN-ը խորհուրդ է տալիս առանձնացնել բռնություն գործադրած անձանց համար նախատեսված ծրագրերին հատկացված բյուջեն ընտանեկան բռնության ենթարկված անձանց աջակցության ծառայություններին հատկացվող բյուջեից՝ նրանց մասնագիտացված աջակցության ծառայությունների և բռնություն գործադրած անձանց ուղղված ծրագրերի միջև մրցակցությունից խուսափելու նպատակով²⁸:

ԳՐԵՎԻՈՒ-ն մշտապես ողջունել է ազգային ցանցերի և ուղեցույցների ստեղծումը (ինչպես Իտալիայի, Գերմանիայի, Սերբիայի և Միացյալ Թագավորության դեպքում)²⁹, ինչպես նաև Ֆինլանդիայի և Ավստրիայի մեկնարկած նախաձեռնությունները, որոնց նպատակն է ստեղծել որակի չափորոշիչներ և համաձայնեցված ուղեցույցներ ամբողջ երկրում բռնություն գործադրած անձանց ուղղված ծրագրերի համար³⁰: Հավատարմագրման ընթացակարգերը նույնպես արժանացել են

գնահատման զեկույցների ԳՐԵՎԻՈՒ-ի միջնաժամկետ հորիզոնական ուսումնասիրություն (2022 թվական), պարբերություն 195:

26. ԳՐԵՎԻՈՒ-ի ելակետային գնահատման զեկույցը Դանիայի վերաբերյալ, պարբերություն 92:

27. ԳՐԵՎԻՈՒ-ի առաջին թեմատիկ զեկույցը Իսպանիայի վերաբերյալ, պարբերություն 80:

28. ԳՐԵՎԻՈՒ (2023 թվական): ԳՐԵՎԻՈՒ-ի գործունեության վերաբերյալ 4-րդ ընդհանուր զեկույց: Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://rm.coe.int/4th-general-report-on-grevio-s-activities/1680a-ca199> (տե՛ս պարբերություն 104):

29. ԳՐԵՎԻՈՒ-ի ելակետային գնահատման զեկույցները Իտալիայի, Գերմանիայի, Միացյալ Թագավորության վերաբերյալ:

30. ԳՐԵՎԻՈՒ-ի ելակետային գնահատման զեկույցները Ավստրիայի վերաբերյալ, պարբերություններ 82-86, և Ֆինլանդիայի վերաբերյալ, պարբերություններ 74-79:

դրական գնահատականի, ինչպես Գերմանիայի դեպքում: ԳՐԵՎԻՈՒ-ն հաճախ հորդորել է ներպետական հաստատություններին աջակցել այս ներդաշնակեցման գործընթացին ամբողջ երկրում³¹՝ միաժամանակ շեշտելով մասնագետների պատշաճ պատրաստվածության, տվյալների համակարգված հավաքագրման և ծրագրերի շարունակական գնահատման ապահովման անհրաժեշտությունը:

1.4.2. Ծրագրերն իրականացնողները

Կոնվենցիան և Բացատրական զեկույցը որևէ կոնկրետ հստակեցում չեն պարունակում ծրագրերի իրականացման պատասխանատու կառույցների վերաբերյալ՝ թողնելով դա մասնակից պետությունների հայեցողությանը: ԳՐԵՎԻՈՒ-ի զեկույցները բացահայտում են անդամ պետություններում գործելակերպի լայն շրջանակ, երբ բնություն գործադրած անձանց ուղղված ծրագրերը մատուցվում են տարբեր կառույցների կողմից, ինչպիսիք են օրինակ՝ մասնավոր կազմակերպությունները, ՀԿ-ները, համայնքային իշխանությունները, առողջապահական հաստատությունները, քրեակատարողական և պրոբացիայի ծառայությունները և այլն: Այնուամենայնիվ, բնություն գործադրած անձանց համար նախատեսված ծրագրերի ինստիտուցիոնալ պայմանները, այդ միջամտությունն իրականացնողների մասնագիտական բնութագրերը և ներգրավված մասնագետների վերապատրաստումը «այն կարևորագույն գործոններից են, որոնք ազդում են վերոնշյալ ծրագրերի որակի և արդյունքի վրա»³²: ԳՐԵՎԻՈՒ-ն նշել է, որ որոշ երկրներում, որտեղ բնություն գործադրած անձանց համար նախատեսված ծրագրերը ինտեգրվել են գործող սոցիալական կամ առողջապահական ծառայություններում, այդ ծառայություններում աշխատող մասնագետների համար ստեղծվել է լրացուցիչ աշխատանքային ծանրաբեռնվածություն՝ առաջացնելով ընտանեկան բնություն գործադրած անձանց հետ աշխատանքի որակը նվազեցնելու վտանգ, ինչը կարող է հանգեցնել բնության ենթարկված

31. ինչպես Պորտուգալիայի, Ֆրանսիայի և Շվեդիայի վերաբերյալ ելակետային գնահատման զեկույցներում:

32. Եվրոպայի խորհուրդ, Ընտանեկան բնություն գործադրող անձանց հետ աշխատանքի հարցերով Եվրոպական ցանցից Սանդրա Յովանովիչ Բելուտիչ և Բերտա Վալ, և Կիերան Մրքբարթան, Արևմտյան Անգլիայի համալսարան, Բրիստոլ, «Բնություն գործադրող անձանց ուղղված անվտանգ և արդյունավետ ծրագրերի ուղեցույց. Ստամբուլի կոնվենցիայի 16-րդ հոդված» (2024 թվական), էջ 18:

անձանց անվտանգության համար հավելյալ ռիսկերով³³:

Ստամբուլի կոնվենցիայի 15-րդ հոդվածին համապատասխան՝ «մասնագետների վերապատրաստում», ԳՐԵՎԻՌ-ն շեշտել է ինչպես նախնական, այնպես էլ ծառայության ընթացքում վերապատրաստման ապահովման կարևորությունը՝ որակավորված անձնակազմ ունենալու նպատակով: Ավստրիայի դեպքում ԳՐԵՎԻՌ-ն կարևոր է համարում բարձրացնել իրազեկվածությունը և տարածել գիտելիքներ բնությունն գործադրած անձանց հետ աշխատանքի վերաբերյալ տարբեր մասնագետների, այդ թվում՝ դատավորների և դատախազների շրջանում, «որոնց պետք է խրախուսել համակարգված կերպով օգտվել բնությունն գործադրած անձանց համար նախատեսված ծրագրերից», ինչպես նաև այլ մասնագետների շրջանում, որոնք անմիջականորեն ներգրավված են այդ ծրագրերի իրականացման մեջ, ինչպիսիք են հոգեբաններն ու սոցիալական աշխատողները³⁴: Իսպանիայի վերաբերյալ առաջին թեմատիկ գնահատման զեկույցում ԳՐԵՎԻՌ-ն մտահոգություն է հայտնել, որ «ռեաբիլիտացման ծրագրերի իրականացման համար պատասխանատու ոչ բոլոր մասնագետներն են [...] հատուկ վերապատրաստում անցնում գենդերային հիմքով կանանց դեմ բռնության ոլորտում»³⁵: Մասնավորապես, Եվրոպայի խորհուրդը մատնանշել է «այդ միջամտությունները գործող ծառայություններում ինտեգրելու բացասական միտումը՝ առանց դրանք լրացուցիչ ռեսուրսներով և վերապատրաստման դասընթացներով զինելու»³⁶, ինչը մեծ ռիսկեր է ի հայտ բերում բռնության ենթարկված անձանց և նրանց երեխաների անվտանգության համար: Վերապատրաստման ծրագրի մեջ պետք է ընդգրկվեն մի շարք թեմաներ, այդ թվում՝ գենդերային հիմքով բռնությունը և ընտանեկան բռնությունը, ռիսկերի գնահատումն ու կառավարումը, զուգընկերոջ կողմից բռնության ենթարկված անձանց աջակցության ծառայությունների հետ համագործակցությունը, փոփոխության գործընթացը և բնությունն գործադրած անձանց

33. Տե՛ս ԳՐԵՎԻՌ-ի ելակետային գնահատման զեկույցը Թուրքիայի վերաբերյալ, պարբերություն 124:

34. ԳՐԵՎԻՌ-ի առաջին թեմատիկ զեկույցը Ավստրիայի վերաբերյալ, պարբերություն 75:

35. ԳՐԵՎԻՌ-ի առաջին թեմատիկ զեկույցը Իսպանիայի վերաբերյալ, պարբերություն 79:

36. Եվրոպայի խորհուրդ, Ընտանեկան բռնություն գործադրող անձանց հետ աշխատանքի հարցերով Եվրոպական ցանցից Սանդրա Յովանովիչ Բելուտիչ և Բերտա Վալ, և Կիերան Մրքբարթան, Արևմտյան Անգլիայի համալսարան, Բրիստոլ, «Բռնություն գործադրող անձանց ուղղված անվտանգ և արդյունավետ ծրագրերի ուղեցույց. Ստամբուլի կոնվենցիայի 16-րդ հոդված» (2024 թվական), էջ 29:

փոխվելու մոտիվացիան, խմբի դինամիկայի կառավարումը, ինչպես նաև հաստատված ուսումնական պլանի իրականացումը:

1.4.3. Ընտանեկան բնության ենթարկված անձանց, մասնավորապես կանանց և երեխաների անվտանգությունն ու բարեկեցությունը

Որպես փոխհատվող հարց՝ իր գեկույցներում ԳՐԵՎԻՈՒ-ն բազմիցս ընդգծել է, որ բնություն գործադրած անձանց համար նախատեսված ծրագրերը պետք է հիմնված լինեն բնության գենդերային ընկալման վրա և որ կանանց աջակցության ծառայությունների հետ արդյունավետ ու համակարգված համագործակցությունը առանցքային նշանակություն ունի ընտանեկան բնություն գործադրած անձանց հետ աշխատանքի ընթացքում: Օրինակ՝ Նիդեռլանդների վերաբերյալ գեկույցում ԳՐԵՎԻՈՒ-ն քննադատել է գենդերային առումով չեզոք մոտեցման որդեգրումը³⁷ և խրախուսել իշխանություններին գնահատել գենդերային առումով չեզոք մոտեցման ազդեցությունը բնության դեպքերի և ռեցիդիվիզմի մակարդակի վրա³⁸: Այնպիսի երկրներում, ինչպես օրինակ Խորվաթիան է, բնություն գործադրած անձանց համար նախատեսված ծրագրերում գենդերային առումով չեզոք մոտեցումը հանգեցրել է այնպիսի իրավիճակի, երբ բնության ենթարկված կանանց պարտադրվել է մասնակցել ռեաբիլիտացման ծրագրերին նույն խմբերում, որտեղ ընդգրկված էին իրենց նկատմամբ բնություն գործադրած տղամարդիկ³⁹:

Բացի այդ, ԳՐԵՎԻՈՒ-ն համարում է, որ մասնագիտացված աջակցության ծառայությունների հետ համագործակցության համաձայնագրերը կարող են նվազեցնել երկրորդային զոհականացման ռիսկը և երաշխավորել բնության ենթարկված անձանց իրավունքների պաշտպանությունը⁴⁰: ԳՐԵՎԻՈՒ-ն բարձր է գնահատել Ավստրիայում կանանց աջակցության ծառայության ազգային ցանցի և պրոբացիայի

37. Տե՛ս ԳՐԵՎԻՈՒ-ի ելակետային գնահատման գեկույցը Նիդեռլանդների վերաբերյալ, պարբերություն 105: Այս կապակցությամբ տե՛ս նաև Բելգիայի վերաբերյալ գեկույցը, պարբերություն 95:

38. ԳՐԵՎԻՈՒ-ի ելակետային գնահատման գեկույցը Նիդեռլանդների վերաբերյալ, պարբերություն 107, ii:

39. ԳՐԵՎԻՈՒ-ի ելակետային գնահատման գեկույցը Խորվաթիայի վերաբերյալ, պարբերություն 105:

40. Ինչպես հետևյալ գեկույցների դեպքում՝ Ավստրիայի վերաբերյալ, պարբերություն 84, Պորտուգալիայի վերաբերյալ, պարբերություն 103, Դանիայի վերաբերյալ, պարբերություն 90, Իտալիայի վերաբերյալ, պարբերություն 116, Շվեդիայի վերաբերյալ, պարբերություն 103:

ծառայության միջև ընդունված արձանագրությունները, ինչպես նաև այն գործելակերպը, որի համաձայն՝ Շվեդիայի բանտերի և պրոբացիայի ծառայությունների ծրագրերում ընդգրկվում է «զուգընկերոջ հետ կապ ապահովող անձ», որը պատասխանատու է բռնության ենթարկված անձի հետ հաղորդակցության և համագործակցության համար⁴¹: Նաև նշել է, որ այդպիսի համագործակցությունը մի կողմից՝ մեծացնում է բռնացող զուգընկերներին ռեաբիլիտացման ծրագրեր առաջարկելու հնարավորությունները⁴², մյուս կողմից՝ ապահովում է, որ կանայք պարբերաբար տեղեկացվեն իրենց զուգընկերների մասնակցության և համագործակցության մակարդակի վերաբերյալ⁴³: Դա կարևոր է, քանի որ բռնություն գործադրած անձանց վարքագծային փոփոխությունները կարող են ներառել առաջընթաց, ռեցիդիվիզմի ռիսկի աճ և ծրագրից հեռացում: Ինչպես նշել է Եվրոպայի խորհուրդը, բռնություն գործադրած անձանց ուղղված ծրագրերը չեն կարող արդյունավետ գործել առանց զուգընկերոջ հետ կապ ապահովող ծառայության հետ համագործակցության այնպիսի երկրներում, ինչպիսիք են Գերմանիան, Իտալիան և Սերբիան, որտեղ ազգային ցանցն այս դրույթը ներառել է իր չափորոշիչներում⁴⁴: Միևնույն ժամանակ, ԳՐԵՎԻՈՒ-ն որոշ դեպքերում արձանագրել է վստահության պակաս բռնություն գործադրած անձանց ծրագրերի և կանանց աջակցության ծառայությունների միջև, ինչը լրացուցիչ խոչընդոտներ է ստեղծում արդյունավետ համագործակցության համար և կարող է ի հայտ բերել հավելյալ ռիսկեր ընտանեկան բռնության ենթարկված անձանց համար, ինչպես դա նկատվել է Իսպանիայի դեպքում⁴⁵: Իր առաջին թեմատիկ գնահատման զեկույցում ԳՐԵՎԻՈՒ-ն հետևողականորեն վերահաստատել է բռնություն գործադրած անձանց հետ աշխատանքում զոհակենտրոն մոտեցման և կանանց խորհրդատվություն տրամադրող ՅԿ-ների հետ սերտորեն համագործակցելու անհրաժեշտությունը, ինչպես նշված է Ավստրիայի և Իսպանիայի վերաբերյալ զեկույցներում⁴⁶:

41. ԳՐԵՎԻՈՒ-ի ելակետային գնահատման զեկույցը Շվեդիայի վերաբերյալ, պարբերություն 98:

42. ԳՐԵՎԻՈՒ-ի ելակետային գնահատման զեկույցը Դանիայի վերաբերյալ, պարբերություն 90:

43. ԳՐԵՎԻՈՒ-ի ելակետային գնահատման զեկույցը Ավստրիայի վերաբերյալ, պարբերություն 84:

44. Եվրոպայի խորհուրդ, Ընտանեկան բռնություն գործադրող անձանց հետ աշխատանքի հարցերով Եվրոպական ցանցից Սանդրա Յովանովիչ Բելոտիչ և Բերտա Վալ, և Կիերան Մրքթարթան, Արևմտյան Անգլիայի համալսարան, Բրիստոլ, «Բռնություն գործադրող անձանց ուղղված անվտանգ և արդյունավետ ծրագրերի ուղեցույց. Ստամբուլի կոնվենցիայի 16-րդ հոդված» (2024 թվական), էջ 20:

45. ԳՐԵՎԻՈՒ-ի ելակետային գնահատման զեկույցը Իսպանիայի վերաբերյալ:

46. Տե՛ս ԳՐԵՎԻՈՒ-ի առաջին թեմատիկ գնահատման զեկույցները Ավստրիայի վերաբերյալ,

Արձանագրություններ ու համաձայնագրեր են անհրաժեշտ՝ հատկապես ռիսկերի գնահատման և անվտանգության կառավարման համատեղ պլանների մշակման համար: Ինչպես նշված է «Բռնություն գործադրած անձանց ուղղված անվտանգ և արդյունավետ ծրագրերի ուղեցույցում», ռիսկերի գնահատումը պետք է ներառի «թե՛ հաստատուն (օրինակ՝ դատվածությունը, նախկինում գործադրված բռնության արարքները), թե՛ դինամիկ գործոնները (օրինակ՝ զբաղվածության կարգավիճակը, թմրամիջոցների չարաշահումը, հղիությունը)՝ և հաշվի առնի «բռնություն գործադրած անձանց ռիսկի գործոնները, բռնության ենթարկված անձանց խոցելիությունը և ծառայությունների մատուցման գործընթացում առաջացող հնարավոր ռիսկերը (օրինակ՝ ծրագրին մասնակցության հնարավոր մանիպուլյատիվ օգտագործման կամ ծրագրում բռնություն գործադրած անձանց ընդգրկվելուց հետո անվտանգության կեղծ զգացումին բնորոշ ռիսկերը)»⁴⁷:

1.4.4. Ընտանեկան բռնություն գործադրած անձանց ուղղված ծրագրերի մշակումը

Մի շարք առիթներով ԳՐԵՎԻՈՒ-ն հիշեցրել է կանանց և երեխաների անվտանգության առաջնահերթությանը միտված միասնական նվազագույն չափորոշիչների ներդրման կարևորությունը⁴⁸: Մասնավորապես, ԳՐԵՎԻՈՒ-ն բարձր է գնահատել Անդորրայի փորձը՝ ներդնելու համար այնպիսի ծրագիր, որը հիմնված է ոչ բռնի հարաբերությունների խթանման վրա՝ որպես կանանց նկատմամբ բռնությանն համապարփակ արձագանքի կարևոր ասպեկտ, «հաշվի առնելով բռնության ենթարկված անձանց, բռնություն գործադրած անձանց, երեխաների և նրանց ավելի լայն սոցիալական միջավայրի միջև հարաբերությունները»⁴⁹: Այլ դեպքերում, ինչպես օրինակ՝ Ալբանիայի վերաբերյալ ելակետային

պարբերություններ 71-80, և Իսպանիայի վերաբերյալ, պարբերություն 78:

47. Եվրոպայի խորհուրդ, Ընտանեկան բռնություն գործադրող անձանց հետ աշխատանքի հարցերով Եվրոպական ցանցից Սանդրա Յովանովիչ Բելուտիչ և Բերտա Վալ, և Կիերան ՄըքԶարթան, Արևմտյան Անգլիայի համալսարան, Բրիստոլ, «Բռնություն գործադրած անձանց ուղղված անվտանգ և արդյունավետ ծրագրերի ուղեցույց. Ստամբուլի կոնվենցիայի 16-րդ հոդված» (2024 թվական), էջ 27, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://rm.coe.int/article-16-arm/native/1680b44650>:
48. Տե՛ս օրինակ՝ ԳՐԵՎԻՈՒ-ի ելակետային գնահատման զեկույցը Սերբիայի և Ալբանիայի վերաբերյալ:
49. ԳՐԵՎԻՈՒ-ի ելակետային գնահատման զեկույցների ԳՐԵՎԻՈՒ-ի միջնաժամկետ հորիզոնական ուսումնասիրություն, պարբերություն 193:

գնահատման զեկույցում, ԳՐԵՎԻՈՒ-ն մտահոգություն է արտահայտել այնպիսի գործելակերպերի առնչությամբ, ինչպիսիք են ընտանեկան թերապիան, հաշտարարությունը և հաշտեցման միջամտությունը բռնություն գործադրած անձանց համար նախատեսված ծրագրերի համատեքստում⁵⁰:

Այլ երկրների դեպքում, հաստատելով ընտանեկան բռնության գենդերային ընկալման անհրաժեշտությունը, ԳՐԵՎԻՈՒ-ն նշել է, որ ծրագրերը, որոնք ուղղված են բացառապես զայրույթի կառավարմանը, հոգեկան առողջության խնդիրների և կախվածության բուժմանը, չեն համարվում կոնվենցիային համահունչ: Մոնտենեգրոյի վերաբերյալ ելակետային գնահատման զեկույցում ԳՐԵՎԻՈՒ-ն արդեն իսկ խրախուսել է ներպետական իշխանություններին «հրաժարվել բռնություն գործադրած անձանց համար նախատեսված ծրագրերից, որոնք հիմնված են բացառապես թմրամիջոցների չարաշահման և հոգեկան առողջության խնդիրների լուծմանը»⁵¹, և վճռականորեն վերահաստատել է այս դիրքորոշումը առաջին թեմատիկ գնահատման համատեքստում՝ «կոչ անելով Մոնտենեգրոյի իշխանություններին հիմնել պարտադիր սոցիալ-հոգեբանական ուղղվածությամբ ծրագրեր ընտանեկան բռնություն գործադրած անձանց համար [...] համահունչ այն հիմնական տարրերին, որոնք նշված են Ստամբուլի կոնվենցիայի բացատրական զեկույցում 16-րդ հոդվածի առնչությամբ»⁵²: Նույն կերպ՝ Թուրքիայի վերաբերյալ ելակետային գնահատման զեկույցում ԳՐԵՎԻՈՒ-ն մատնանշել է այն փաստը, որ թե՛ դատարանները, թե՛ առողջապահական հաստատությունները «հակված են [բռնություն գործադրած անձանց ուղղված ծրագրերը] նույնացնել հոգեկան առողջության խնդիրների կամ կախվածության բուժման հետ»⁵³: Կանանց նկատմամբ բռնության գենդերային ընկալման բացակայությունը մտահոգություն է հարուցել նաև Շվեդիայի դեպքում, մասնավորապես՝ կապված որոշ ծրագրերի հետ, որոնք «կենտրոնանում են բացառապես հույզերի և կոնֆլիկտների կառավարման վրա»⁵⁴: ԳՐԵՎԻՈՒ-ն հստակ ընդգծել է, որ թեև որոշ

50. ԳՐԵՎԻՈՒ-ի ելակետային գնահատման զեկույցը Ալբանիայի վերաբերյալ, պարբերություն 70:

51. ԳՐԵՎԻՈՒ-ի ելակետային գնահատման զեկույցը Մոնտենեգրոյի վերաբերյալ, պարբերություն 91, և կրկնել է առաջին թեմատիկ զեկույցում, պարբերություն 77:

52. ԳՐԵՎԻՈՒ-ի առաջին թեմատիկ գնահատման զեկույցը Մոնտենեգրոյի վերաբերյալ, պարբերություն 81:

53. ԳՐԵՎԻՈՒ-ի ելակետային գնահատման զեկույցը Թուրքիայի վերաբերյալ, պարբերություն 124:

54. ԳՐԵՎԻՈՒ-ի առաջին թեմատիկ գնահատման զեկույցը Շվեդիայի վերաբերյալ, պարբերություն 58:

բռնություն գործադրած անձինք կարող են ունենալ մի շարք փոխհատվող խնդիրներ, այդ խնդիրներին պետք է արձագանքել առանձին՝ տարբեր ոլորտային մասնագետների ներգրավմամբ: Փորձագիտական խմբի գնահատմամբ՝ համարժեք ծրագրերը պետք է նախևառաջ «խրախուսեն բռնություն գործադրած անձանց պատասխանատվություն ստանձնել իրենց գործողությունների համար և վերլուծել կանանց նկատմամբ իրենց բացասական վերաբերմունքն ու համոզմունքները»⁵⁵:

Եվրոպայի խորհուրդը նույնպես շեշտել է ընտանեկան բռնության նկատմամբ համակարգային մոտեցում որդեգրելու կարևորությունը⁵⁶ և հորդորել է ապահովել, որ ծրագրերն ընդգրկեն մի շարք կարևոր թեմաներ, մասնավորապես՝ անդրադառնալ ընտանեկան բռնության բոլոր ձևերին, որոնք կարող են գործադրվել, կոտրել վնասակար գենդերային կարծրատիպերը և ներառել առցանց ու տեխնոլոգիաների կիրառման միջոցով բռնության թեման, որին նաև անդրադարձ է կատարվել [ԳՐԵՎԻՈ-ի Թիվ 1 ընդհանուր հանձնարարականում](#):

Մինչ այժմ հրապարակված առաջին թեմատիկ գնահատման զեկույցներում ԳՐԵՎԻՈ-ն առանձնահատուկ շեշտադրել է ծրագրերին մասնակցության և դրանք ավարտելու վերաբերյալ վստահարժան տվյալների հավաքագրման կարևորությունը⁵⁷, ինչպես նաև ծրագրերի անկախ գնահատում իրականացնելու անհրաժեշտությունը՝ «գործող ծառայությունների արդյունավետությունը գնահատելու և բացահայտված թերությունները համապատասխանաբար վերացնելու նպատակով», ինչպես իրականացվել է Ֆինլանդիայում Յելսինկիի համալսարանի կողմից⁵⁸: Պորտուգալիայի դեպքում ԳՐԵՎԻՈ-ն հորդորել է ներպետական իշխանություններին «ապահովել, որպեսզի մշտապես գնահատվի բռնություն գործադրած անձանց

55. ԳՐԵՎԻՈ-ի ելակետային գնահատման զեկույցը Մոնտենեգրոյի վերաբերյալ, պարբերություն 91:

56. Համաձայն էկոլոգիական մոտեցման՝ զուգընկերային հարաբերություններում բռնությունը բազմակողմանի երևույթ է, որը ձևավորվում է անհատական, միջանձնային, համայնքային և հասարակական գործոնների դիنامիկ փոխազդեցության արդյունքում: ՀեՅՍԵ Լորի Լ., 1998 թվական, «Կանանց նկատմամբ բռնություն. ինտեգրված էկոլոգիական շրջանակ», Violence Against Women, համար 4, հատոր 3, էջեր 262-290:

57. ԳՐԵՎԻՈ-ի առաջին թեմատիկ գնահատման զեկույցը Ալբանիայի վերաբերյալ, պարբերություն 71:

58. ԳՐԵՎԻՈ-ի առաջին թեմատիկ գնահատման զեկույցը Ֆինլանդիայի վերաբերյալ, պարբերություն 83:

համար նախատեսված ծրագրերի ազդեցությունը, և սահմանել պատժամիջոցներ այն դեպքերում, երբ բռնություն գործադրած անձը ամբողջությամբ չի ավարտում ծրագիրը»⁵⁹: Փորձագետների խումբը նաև խրախուսել է գնահատել «կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրերի ազդեցությունն ու ռեցիդիվիզմի մակարդակը ինչպես ազատազրկման պայմաններում իրականացվող, այնպես էլ բաց ձևաչափով գործող ծրագրերի դեպքում»⁶⁰, ինչպես Ավստրիայի պարագայում, միաժամանակ ընդգծելով ցանկացած գնահատման գործընթացում բռնության ենթարկված անձանց տեսանկյունը ներառելու կարևորությունը, ինչպես նշված է Իսպանիայի վերաբերյալ առաջին թեմատիկ գնահատման զեկույցում⁶¹: Այս համատեքստում WWP EN-ի կողմից մշակված՝ Արդյունքների մշտադիտարկման IMPACT գործիքակազմը կարող է ծառայել որպես մոդել՝ գնահատելու բռնություն գործադրած անձանց վարքագծի և վերաբերմունքի փոփոխությունները, բռնության ենթարկված անձանց անվտանգության և բարեկեցության մակարդակի փոփոխությունները, ինչպես նաև երեխաների կյանքում փոփոխությունները՝ ծրագրի մեկնարկից առաջ և ավարտից հետո⁶²:

Սահմանելով 16-րդ հոդվածը՝ Ստամբուլի կոնվենցիան վերահաստատում է ընտանեկան բռնության և սեռական բռնության ընկալումը՝ որպես գենդերային հիմքով բռնություն, ինչպես նաև բռնության այս ձևերի մշակութային ընկալման անհրաժեշտությունը՝ ծրագրերի լայն հասանելիության ապահովման նպատակով: Այն նաև հստակ սահմանում է, որ բռնության այս ձևերը գործադրած անձինք ոչ միայն պետք է ենթարկվեն համարժեք քրեական հետապնդման, այլև, ի լրումն դրան, ընդգրկվեն համապատասխան ռեաբիլիտացման ծրագրերում՝ բռնությունից զերծ վարքագիծ որդեգրելու և կանանց նկատմամբ իրենց վերաբերմունքը փոխելու նպատակով: Թե՛

59. ԳՐԵՎԻՌ-ի առաջին թեմատիկ գնահատման զեկույցը Պորտուգալիայի վերաբերյալ, պարբերություն 77:

60. ԳՐԵՎԻՌ-ի առաջին թեմատիկ գնահատման զեկույցը Ավստրիայի վերաբերյալ, պարբերություն 77:

61. ԳՐԵՎԻՌ-ի առաջին թեմատիկ գնահատման զեկույցը Իսպանիայի վերաբերյալ, պարբերություն 79:

62. Բերտա Վալ Կաստելյո, Ալեսանդրա Պաունչ, Աննա ՄըքՔենզի, «WWP EN-ի Արդյունքների մշտադիտարկման IMPACT գործիքակազմ», 2021 թվական, հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.work-with-perpetrators.eu/fileadmin/www/What_you_can_do/Ensure_the_quality_of_your_perpetrator_programme/IMPACT_Outcome_evaluation_toolkit/WWP_ImpactToolkit_A5_publication_web.pdf:

ընտանեկան, թե՛ սեռական բռնության դեպքում ռեցիդիվիզմի կանխարգելումը պետք է իրականացվի բազմազերատեսչական միջամտությունների միջոցով՝ չսահմանափակվելով միայն քրեական արդարադատության համակարգով և ապահովելով սերտ համագործակցություն կանանց աջակցության ծառայությունների հետ: Որպես եզրափակիչ դիտարկում՝ կարևոր է նշել, որ Եվրոպայի խորհրդի «Բռնություն գործադրող անձանց ուղղված անվտանգ և արդյունավետ ծրագրերի ուղեցույցը» նաև տրամադրում է ամփոփիչ ստուգացանկ, որը նախատեսված է բռնություն գործադրած անձանց ուղղված արդյունավետ, գոհակենտրոն և անվտանգությունը կարևորող ծրագրեր հիմնելու հարցում քաղաքականություն մշակողներին, իշխանություններին, միջազգային կազմակերպություններին և ծառայություններ մատուցողներին աջակցելու համար: Ստուգացանկը կարող է ծառայել որպես գործիք՝ գնահատելու բռնություն գործադրող անձանց համար գործող ծրագրերը և դրանց համապատասխանությունը Ստամբուլի կոնվենցիայի դրույթներին:

II. Ազգային համատեքստ. Հայաստանի իրավական և քաղաքականության շրջանակը

Վերջին տարիներին Հայաստանը նշանակալի քայլեր է ձեռնարկել՝ ընտանեկան բռնությանն իր իրավական և քաղաքականության արձագանքը ամրապնդելու ուղղությամբ՝ զուտ պատժիչ միջոցառումներից անցում կատարելով դեպի կանխարգելումը, պատասխանատվությունը և ռեաբիլիտացիան գերակա համարող մոտեցումներ: Այս զարգացումների հիմքում բռնություն գործադրած անձանց իրենց գործողությունների համար պատասխանատվության ենթարկելու կարևորության ճանաչումն է՝ նրանց կողմից նոր հանցագործությունները կանխելու նպատակով: Բռնություն գործադրած անձանց համար նախատեսված արդյունավետ ծրագրերը կարող են բարելավել բռնության ենթարկված անձանց անվտանգությունն ու բարեկեցությունը և պետք է լինեն կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ համայնքային համակարգված արձագանքի անբաժանելի մաս: Դա արտացոլվում է ինչպես Հայաստանի ազգային իրավական շրջանակում, այնպես էլ Ստամբուլի կոնվենցիայի չափորոշիչներին համապատասխանություն ապահովելու պետության քաղաքական հանձնառությամբ:

2.1 Ընտանեկան բռնության արձագանքման և բռնություն

գործադրած անձանց ռեաբիլիտացման քաղաքականության հիմքերը

Բռնություն գործադրած անձանց ուղղված ծրագրերի արդյունավետ իրականացման համար կենսական կարևոր է ունենալ հստակ սահմանված իրավական և քաղաքականության շրջանակ: Այս ծրագրերը պետք է մաս կազմեն կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ համակարգված արձագանքի՝ ներառելով կառուցվածքային համագործակցություն կանանց աջակցության ծառայությունների, իրավապահ մարմինների, դատական համակարգի, պրոբացիայի ծառայությունների և անհրաժեշտության դեպքում երեխաների պաշտպանության մարմինների հետ⁶³: Առանձին գործարկման պարագայում բռնություն գործադրած անձանց համար նախատեսված ծրագրերը չեն ապահովում բռնության ենթարկված անձանց անվտանգությունը և չեն նվազեցնում բռնության դեպքերը: Հետևաբար, անհրաժեշտ է ամուր իրավական և քաղաքականության հիմք՝ ներգրավված բոլոր դերակատարների միջև համագործակցությունը, հաշվետվողականությունը և հետևողականությունը երաշխավորելու համար⁶⁴: Դա ապահովում է ծրագրերի հետևողականությունը, հաշվետվողականությունը և ինտեգրումը բռնության դեմ համակարգված արձագանքի լայն շրջանակի մեջ: 2025 թվականի ապրիլին Հայաստանի կառավարությունն ընդունել է N 482-Լ որոշումը «Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման 2025-2028 թվականների ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին»⁶⁵: Այս ռազմավարությունն ամրապնդում է պետության հանձնառությունը՝

63. Եվրոպայի խորհուրդ: (2023ա): ԳՐԵՎԻՈՒ-ի գործունեության վերաբերյալ 4-րդ ընդհանուր գեկույց, պարբերություն 104, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://rm.coe.int/4th-general-report-on-greve-s-activities/1680aca199>:

64. Եվրոպայի խորհուրդ, Ընտանեկան բռնություն գործադրող անձանց հետ աշխատանքի հարցերով Եվրոպական ցանցից Սանդրա Յովանովիչ Բելոտիչ և Բերտա Վալ, և Կիերան ՄըքԲարթան, Արևմտյան Անգլիայի համալսարան, Բրիստոլ, «Բռնություն գործադրող անձանց ուղղված անվտանգ և արդյունավետ ծրագրերի ուղեցույց. Ստամբուլի կոնվենցիայի 16-րդ հոդված» (2024 թվական), էջ 14, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://rm.coe.int/article-16-arm/native/1680b44650>:

65. Հայաստանի Հանրապետության կառավարություն, Որոշում N 482-Լ, «Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման 2025-2028 թվականների ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին», ընդունվել է 2025 թվականի ապրիլի 23-ին, հասանելի է (հայերեն) հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/hy/acts/206364/latest>:

պայքարելու գենդերային հիմքով բռնության դեմ և նպատակային ու համակարգված միջոցներով աջակցություն ցուցաբերելու ինչպես բռնության ենթարկված անձանց, այնպես էլ բռնություն գործադրած անձանց: Գերակայություն 5-ի՝ «Գենդերային բռնության և խտրականության կանխարգելում ու հաղթահարում, ընտանեկան բռնության ենթարկված անձանց պաշտպանություն և աջակցություն» շրջանակում գործողությունների ծրագրով նախատեսվում է բռնություն գործադրած անձանց համար ռեաբիլիտացման ծրագրերի մշակում և անցկացում: Մասնավորապես, այն հանձնարարում է (ա) «քրեակատարողական և պրոբացիայի համակարգերում բռնություն գործադրած և պատիժ կրող անձանց հետ բռնության նվազեցման թիրախային ծրագրերի մշակում» և (բ) «ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձանց համար ռեաբիլիտացման ծրագրերի մշակում և անցկացում»: Ակնկալվող արդյունքը ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձանց ռեաբիլիտացման համար բարելավված համակարգն է:

Որպես պատասխանատու կատարող մարմին են նշանակվել ՀՀ արդարադատության նախարարությունը և ՀՀ աշխատանքի սոցիալական հարցերի նախարարությունը՝ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և միջազգային գործընկերների հետ համագործակցությամբ, որոնք հանդես են գալիս որպես համակատարողներ: Միջոցառումները ֆինանսավորվելու են պետական բյուջեից և օրենքով չարգելված այլ աղբյուրներից, ինչպես օրինակ՝ միջազգային կազմակերպությունների կամ հասարակական կազմակերպությունների տրամադրած միջոցներից: Հարկ է նշել, որ ռազմավարությամբ նախատեսվում է նաև բյուջեի հստակ բաշխում 5-րդ գերակայության շրջանակում իրականացվելիք այս միջոցառումների համար: 2026-2028 թվականների համար հատկացված է ընդհանուր առմամբ 56 միլիոն ՀՀ դրամ (մոտ 130,000 եվրո)՝ 14 միլիոն ՀՀ դրամ (մոտ 32,000 եվրո) 2026 թվականի, 21 միլիոն ՀՀ դրամ (մոտ 49,000 եվրո) 2027 թվականի և 21 միլիոն ՀՀ դրամ (մոտ 49,000 եվրո) 2028 թվականի համար: Այս բյուջետային հատկացումները վկայում են կառավարության մտադրության մասին՝ քաղաքական հայտարարություններից անցնելու դեպի գործնական և բավարար ֆինանսավորմամբ գործողություններ, որոնք միտված են կրճատելու կրկնվող հանցագործությունները և

Նպաստելու բռնություն գործադրած անձանց վերաբերմունքի ու վարքագծի փոփոխությանը:

Ռազմավարության մոնիթորինգն ու գնահատումը համակարգվում են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից, որը վերահսկում է գործընթացը հատուկ ստորաբաժանման (Մարդկանց թրաֆիքինգի և կանանց հիմնահարցերի բաժին) միջոցով: Պատասխանատու և համակատարող մարմինները (օրինակ՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ՀՀ արդարադատության նախարարությունը, համայնքները, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը) պարտավոր են ընթացիկ և ամփոփիչ հաշվետվություններ ներկայացնել իրենց իրականացրած գործողությունների վերաբերյալ՝ ապահովելով հաշվետվողականություն և թափանցիկություն: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը կազմում է կատարված աշխատանքի տարեկան հաշվետվությունները, որոնք քննարկվում են Կանանց հարցերով խորհրդի կողմից, իսկ ամփոփիչ համապարփակ հաշվետվությունը հրապարակվում է տարեկան մեկ անգամ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պաշտոնական կայքում և կարող է պարունակել անկախ փորձագիտական գնահատականներ: Քաղաքացիական հասարակության կառույցներին, միջազգային կազմակերպություններին և այլ շահագրգիռ կողմերին նույնպես խրախուսվում է ներկայացնել դիտարկումներ և հաշվետվություններ, որոնք ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը հաշվի է առնում ռազմավարության իրականացման գնահատման և ապագա գործողությունների պլանավորման ընթացքում:

2.2 Ընտանեկան բռնության և բռնություն գործադրած անձանց ամար նախատեսված ծրագրերի ազգային իրավական շրջանակը

Ամուր օրենսդրական հիմքը կենսական կարևորություն ունի բռնություն գործադրած անձանց համար նախատեսված ծրագրերի արդյունավետ իրականացման համար: Օրենսդրությամբ տրամադրվում է անհրաժեշտ իրավասություն, սահմանվում են ներգրավված հաստատությունների պարտականությունները և հաստատվում են ծրագրերի իրականացման

պարտադիր չափորոշիչներ: Հստակ իրավական դրույթների սահմանումը, մարդու իրավունքների պաշտպանության սկզբունքներին ծրագրերի համապատասխանությունը, բռնության ենթարկված անձանց անվտանգության ապահովումը՝ այս բոլոր բաղադրիչները ներառված են ընտանեկան բռնության և կանանց նկատմամբ բռնության դեմ համակարգված արձագանքի շրջանակում: Բացի այդ, կարգավորումները հնարավորություն են տալիս ապահովելու միասնական գործելակերպ տարբեր մարզերում և ծառայություններ մատուցող կառույցներում՝ երաշխավորելով միջամտությունների հաշվետվողականությունը, որակը և կայունությունը:

Հայաստանի համատեքստում Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման մասին օրենքը, որն ընդունվել է 2017 թվականին և էականորեն փոփոխվել է 2024 թվականի ապրիլի 12-ի ՀՀ-169-Ն օրենքով, հիմնարար իրավական հիմք է ապահովում բռնություն գործադրած անձանց ռեաբիլիտացման համար՝ որպես ընտանեկան բռնությանը պետության արձագանքի բաղադրիչ⁶⁶: Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով ռեաբիլիտացման ծրագիրը սահմանվում է որպես *«համալիր միջոցառումների ծրագիր, որն ուղղված է բռնություն գործադրած անձին հոգեբանական և սոցիալական աջակցության տրամադրման, առողջության վերականգնման, վնասակար սովորույթներից (ալկոհոլամոլություն, թմրամոլություն, թունամոլություն, խաղամոլություն) ձերբազատման միջոցով նրա կողմից կրկին բռնություն գործադրելու կանխմանը»*: Այս լայն սահմանումը վկայում է օրենքի կանխարգելիչ և աջակցող, այլ ոչ թե պատժիչ նպատակների մասին, երբ խոսքը վերաբերում է նման ծրագրերին: Այնուամենայնիվ, այն չի ապահովում ընտանեկան բռնության գենդերային ընկալում, և պարզեցված ձևով ընդունում է, որ բռնի վարքագիծը կարող է լինել միայն հոգեբանական, սոցիալական կամ կախվածության խնդիրների հետևանք, ինչը ենթադրում է, որ հենց դրանք են բռնի վարքագծի պատճառները: Այս մոտեցումը ստեղծում է էական բաց՝ բռնություն գործադրած անձանց ուղղված ծրագրերի հայեցակարգման և կանանց նկատմամբ բռնության ակունքներում գտնվող տղամարդկանց ու

66. Հայաստանի Հանրապետության օրենքը «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին», հասանելի է (հայերեն) հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/hy/acts/208514>:

կանանց հասարակական անհավասար դիրքերի ճանաչման առումով:

Օրենքի 6-րդ հոդվածը լիազորում է ՀՀ ներքին գործերի նախարարությանը (ՀՀ ոստիկանությանը)⁶⁷ որպես մասնագիտացված մարմին, առաջին անգամ արձանագրված, բայց հանցագործություն չհամարվող կամ անհետաձգելի միջամտություն չպահանջող ընտանեկան բռնության դեպքերում նախազգուշացում կիրառելու համար: Նախազգուշացում կիրառելու մասին որոշմամբ բռնություն գործադրած անձանց տեղեկացվում է բռնության շարունակման դեպքում հետևանքների մասին: Կանանց աջակցություն տրամադրող ՀՀ-ների⁶⁸ բարձրաձայնած խնդիրների և առաջարկությունների լույսի ներքո 2024 թվականի փոփոխությամբ (6-րդ հոդված, 4-րդ մաս)⁶⁹ նախազգուշացման պատճենը այժմ պետք է ուղարկվի ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը, որը պարտավոր է «հնարավորին չափ սեղմ ժամկետում» առաջարկել ռեաբիլիտացման ծրագրով նախատեսված ծառայությունները, այլ ոչ թե աջակցության կենտրոն⁶⁸, ինչպես արվում էր նախկինում: Այս փոփոխությամբ ռեաբիլիտացման գործընթացի ինստիտուցիոնալ պատասխանատվությունը պաշտոնապես վերապահվում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը, և աջակցության կենտրոնները դուրս են բերվում գործընթացից, քանի որ դրանք չունեն բավարար մարդկային, նյութական և ֆինանսական կարողություններ բռնություն գործադրած անձանց համար նախատեսված ծրագրեր իրականացնելու համար: Այս փուլում բռնություն գործադրած անձանց մասնակցությունը ծրագրում շարունակում է լինել կամավոր հիմունքներով:

Ընտանեկան բռնության ավելի ծանր դեպքերում 8-րդ հոդվածով սահմանված պաշտպանական որոշումները կարող են դնել ռեաբիլիտացման ծրագիր անցնելու պարտականություն: 8-րդ

67. ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ և ՄԱԿ-Կանայք, «Ընտանեկան բռնություն գործադրող անձանց հետ աշխատանքի և վաղ միջամտության վերաբերյալ տարածաշրջանային ուղեցույց. Արևելյան գործընկերության տարածաշրջան» (2022 թվական): Տե՛ս, մասնավորապես, Հայաստանին ուղղված հանձնարարականի վերաբերյալ բաժինը (էջ 47), հասանելի է հետևյալ հղումով՝ <https://eca.unwomen.org/en/digital-library/publications/2023/01/regional-guidance-on-working-with-perpetrators-of-domestic-violence>:

68. Աջակցության կենտրոնները ընտանեկան և կենցաղային բռնության կամ ենթադրաբար ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց, իսկ անհրաժեշտության դեպքում այդ անձանց ընտանիքների անդամների սոցիալական աջակցություն տրամադրող կազմակերպություններ են՝ հավաստագրված ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից:

հողվածի 5-րդ մասի 8-րդ կետով դատարաններին հնարավորություն է տրվում կիրառել ռեաբիլիտացում՝ որպես պարտադիր միջոց, այն դեպքերում, երբ բռնության ենթարկված անձանց նկատմամբ ռիսկը համարվում է բարձր: Այնուամենայնիվ, կարևոր է նշել, որ մինչ այժմ ընտանեկան բռնություն գործադրած անձանց համար ռիսկերի գնահատման հատուկ ընթացակարգեր չեն մշակվել: Առկա գործիքները կիրառվում են Քրեակատարողական ծառայությունում և Պրոբացիայի ծառայությունում, որոնք իրականացնում են միայն ընդհանուր գնահատում: Այսպիսով, ռեաբիլիտացման գործընթացը ներդրված է երկու փուլով՝ կամավոր մասնակցություն նախազգուշացումից հետո և պարտադիր մասնակցություն դատարանի որոշմամբ (եթե կիրառվում է նման միջոց):

2024 թվականի համապարփակ փոփոխության համաձայն՝ իրավական շրջանակը նախատեսում է նաև պատժամիջոցներ նման որոշումները չկատարելու դեպքում: Քրեական օրենսգրքի 508-րդ հոդվածով պատիժ է սահմանվում անհետաձգելի միջամտության որոշումը կամ պաշտպանական որոշումը չկատարելու համար⁶⁹, իսկ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 206.16-րդ հոդվածով սահմանվում է տուգանք անհետաձգելի միջամտության որոշման կամ պաշտպանական որոշման պահանջները բռնություն գործադրած անձանց կողմից դիտավորությամբ չկատարելու համար⁷⁰: Այս կարգավորումները չեն տարածվում նախազգուշացման վրա, և եթե բռնություն գործադրած անձը չի մասնակցում ռեաբիլիտացման ծրագրին, պատիժ կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ մասնակցությունը հստակ նախատեսված է դատարանի պաշտպանական որոշմամբ: Այս կարգավորումների մեկնաբանումից պարզ է դառնում, որ ռեաբիլիտացման ծրագրին մասնակցությունը չի կարող պարտադրվել, երբ այն առաջարկվում է կամավոր մասնակցության հիմքով ոստիկանության նախազգուշացման ժամանակ, քանի որ պարտադիր մասնակցությունը հնարավոր է միայն, երբ այն նախատեսված է դատարանի պաշտպանական որոշմամբ:

69. Քրեական օրենսգրք, 508-րդ հոդված, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/hy/acts/153080/latest>:

70. Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրք, 206.16-րդ հոդված, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/hy/acts/20/latest>:

Բացի այդ, Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման մասին փոփոխված օրենքով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը վերապահվում է ռեաբիլիտացման ծրագրերի մշակման և վերահսկողության ապահովման պարտականություն (14-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետ)՝ ծառայություններ տրամադրող կառույցների և ՀՀ-երի հետ համագործակցությամբ: Այս դրույթը պաշտոնապես ամրապնդում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության դերը՝ որպես պատասխանատու մարմին, ինչը համապատասխանում է աջակցության կենտրոններից գործառնական պատասխանատվությունը փոխանցելու միտումին:

Այսպիսով, օրենսդրության վերջին փոփոխությունները կարևոր և ողջունելի զարգացում են ընտանեկան բռնության դեմ պայքարի ոլորտում Հայաստանի իրավական շրջանակն ամրապնդելու ուղղությամբ: Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման մասին փոփոխված օրենքը այժմ նախատեսում է ավելի հստակ ինստիտուցիոնալ պատասխանատվություններ, ներառում է ռեաբիլիտացումը ինչպես կանխարգելման, այնպես էլ դատական փուլերում, և սահմանում է հատուկ պատժամիջոցներ դատարանի կողմից պարտադրված միջոցները չկատարելու դեպքում: Այնուամենայնիվ, թեև այս իրավական շրջանակը ձևավորում է կարևոր հիմք, հիմնական մարտահրավերը դրա արդյունավետ կիրառումն է: Ծրագրերի մշակման և իրականացման ընթացքում գենդերային տեսանկյան բացակայությունը՝ ներառյալ ուժերի անհավասարակշռության և վերահսկողության դրսևորումների սահմանափակ արտացոլումը, կարող է թուլացնել դրանց ազդեցությունը: Ռեաբիլիտացման ծրագրերին լիարժեք ու գիտակցված մասնակցությունը, բռնության ենթարկված անձանց պաշտպանությունը ամբողջ գործընթացում, ինչպես նաև ինստիտուցիոնալ և միջգերատեսչական կարողությունների ամրապնդումը կարևոր նշանակություն ունեն իրավական հանձնառությունները փոփոխություն բերող գործողությունների վերածելու համար:

Բացի այդ, գործող օրենսդրությունն ունի էական բաց՝ Ստամբուլի կոնվենցիայի 16-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին

համապատասխանությունն ապահովելու առումով, որը կողմ պետություններին պարտավորեցնում է նաև հիմնել ռեաբիլիտացման ծրագրեր սեռական բնույթի հանցագործություններ կատարած անձանց համար՝ նոր հանցագործությունների կատարումը կանխելու նպատակով: Այս բացը վերացնելու համար անհրաժեշտ է ընդլայնել իրավական և ինստիտուցիոնալ շրջանակը, որպեսզի այն ներառի սեռական բռնություն գործադրած անձանց ռեաբիլիտացումը:

2.3 ՀՀ կառավարության N 35-Ն որոշումը և դրա դերը ծրագրի իրականացման գործում

2024 թվականի փոփոխություններից հետո Հայաստանում ընտանեկան բռնության դեմ արձագանքման ևս մեկ կարևոր օրենսդրական զարգացում էր ՀՀ կառավարության 2025 թվականի հունվարի 16-ի N 35-Ն որոշման ընդունումը, որով պաշտոնապես հաստատվեց «Ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձանց ռեաբիլիտացման ծրագիրը»՝ համաձայն Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման մասին օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի⁷¹: Այս որոշումը սահմանվել է կառուցվածքային, բազմաբաղադրիչ ռեաբիլիտացման ծրագիր, և մանրամասնորեն ներկայացվել են դրա կազմակերպչական, բովանդակային և ընթացակարգային կողմերը:

Որոշման հավելվածում ներկայացված ծրագրով սահմանվում են համալիր միջոցառումներ, որոնք ուղղված են բռնության նոր և ավելի ծանր գործողությունների կանխմանը (Հավելված, 1-ին պարբերություն): Սակայն փոխարենը կենտրոնականում ուժի և վերահսկողության դինամիկայի, ինչպես նաև բռնություն գործադրած անձանց սեփական ընտրությամբ գործելու փաստի վրա, այն պարզապես առաջարկում է հոգեբանական և սոցիալական աջակցություն, առողջության վերականգնում և վնասակար սովորույթներից (ալկոհոլամոլություն, թմրամոլություն, թունամոլություն, խաղամոլություն) ձերբազատում՝ անուղղակիորեն ենթադրելով, որ տղամարդկանց կողմից կիրառվող բռնությունը բխում է այդ խնդիրներից: Կարևոր է նշել, որ ծրագիրն

71. ՀՀ կառավարություն, Որոշում N 35-Ն «Ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձանց ռեաբիլիտացման ծրագիրը հաստատելու մասին», ընդունվել է 2025 թվականի հունվարի 16-ին, հասանելի է (հայերեն) հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=202222>:

իրականացվում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից՝ ընտրված ՀԿ-ի միջոցով, այլ ոչ թե աջակցության կենտրոնների կողմից, ինչպես նախատեսված էր նախկինում (Հավելված, 2-րդ պարբերություն): Սա նշանակալի փոփոխություն է՝ ուղղված նախկինում առկա մտահոգություններին, որ ընտանեկան բռնության ենթարկված անձանց աջակցության հաստատություններն էին կրում բռնություն գործադրած անձանց ռեաբիլիտացման բեռը (հիմնվելով մասնավորապես 2018 թվականի N 119-Ն նախարարի հրամանի վրա)՝ առանց բավարար մարդկային ու ֆինանսական ռեսուրսների և կենտրոնանալով հաշտեցման, այլ ոչ թե պատասխանատվություն ստանձնելու վրա⁷²:

Ծրագրերի որակի բավարար չափորոշիչները ապահովելու համար իրականացնող կազմակերպությունն առնվազն պետք է ունենա վերապատրաստված սոցիալական աշխատող, հոգեբան և իրավաբան, որոնք պետք է ունենան «բռնություն գործադրած անձանց տարբեր խմբերի հետ» աշխատելու հմտություններ (Հավելված, 3-րդ պարբերություն): Սակայն, ինչ վերաբերում է այլ դրույթներին, փաստաթուղթը չի հստակեցնում «տարբեր խմբեր» արտահայտության իմաստը: Այս անորոշությունը հատկապես խնդրահարույց է միջազգային չափորոշիչների տեսանկյունից, որոնք շեշտում են, որ բռնություն գործադրած անձանց համար նախատեսված ծրագրերը պետք է հարմարեցված լինեն բռնություն գործադրած անձանց տարբեր կատեգորիաների առանձնահատկություններին և նրանց ներկայացրած ռիսկերին: Մասնավորապես, տղամարդ և կին բռնություն գործադրածներին նույն ծրագրում ընդգրկելը կարող է նվազեցնել արդյունավետությունը, ինչպես նաև խաթարել բռնության ենթարկված անձանց անվտանգությունը՝ հաշվի առնելով նման դեպքերին բնորոշ գենդերային դինամիկան, դրդապատճառներն ու բռնության դրսևորումների օրինաչափությունները: Այս հարցի շուրջ

72. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի N 119-Ն հրաման «Ընտանիքում բռնություն գործադրած անձանց ռեաբիլիտացիայի ծրագիրը և կազմակերպման կարգը հաստատելու մասին», ընդունվել է 2018 թվականի նոյեմբերի 13-ին, հասանելի է (հայերեն) հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=126674>:

Օրենսդրության և դրա կիրառման միջև եղած անհամապատասխանությունները նաև ընդգծվել են ՄԱԿ-Կանայք, «Ընտանեկան բռնություն գործադրող անձանց հետ աշխատանքի և վաղ միջամտության վերաբերյալ տարածաշրջանային ուղեցույց. Արևելյան գործընկերության տարածաշրջան» գեկույցում, էջեր 88-90, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://eca.unwomen.org/en/digital-library/publications/2023/01/regional-guidance-on-working-with-perpetrators-of-domestic-violence>:

հստակ ցուցումների բացակայությունը կարող է հանգեցնել բոլորի նկատմամբ միատեսակ մոտեցման, որը հաշվի չի առնում հիմնական տարբերություններն ու թուլացնում ծրագրի ազդեցությունը: Ծրագիրն իրականացվում է դրամաշնորհի տրամադրման ընթացակարգով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան (Հավելված, 4-րդ պարբերություն), իսկ եթե բռնություն գործադրած անձը պատիժ է կրում քրեակատարողական հիմնարկում կամ պրոբացիայի շահառու է, ապա համապատասխանաբար ծրագրերն իրականացվում են քրեակատարողական հիմնարկի կամ պրոբացիայի ծառայության կողմից՝ վերասոցիալականացման ծրագրերի շրջանակներում (Հավելված, 5-րդ պարբերություն):

Ռեաբիլիտացման ծրագրի բովանդակությունը հիմնված է անհատականացված մոտեցման վրա, որը հարմարեցվում է բռնություն գործադրած յուրաքանչյուր անձի կարիքներին: Այն սկսվում է անձի գնահատմամբ և յուրաքանչյուր մասնակցի համար անհատական վերահսկման պլանի մշակմամբ, որը հաշվի է առնում նրա տարիքը, սեռը, առողջական և սոցիալական վիճակը, հոգեբանական առանձնահատկությունները, ընտանիքի կազմը, բռնության տեսակը և տևողությունը, ինչպես նաև նպաստող ռիսկային գործոնները (Հավելված, 6-11-րդ պարբերություն): ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը նաև պատասխանատու է ծրագրի իրականացմամբ զբաղվող մասնագետների համար կանոնավոր վերապատրաստման կազմակերպման (Հավելված, 8-րդ պարբերություն), ինչպես նաև անհրաժեշտության դեպքում այլ մասնագիտացված ծառայությունների (օրինակ՝ առողջության վերականգնման, վնասակար սովորույթներից ձերբազատման) հետ համակարգման համար (Հավելված, 9-րդ պարբերություն):

Ծրագրում շեշտադրվում են մի շարք առանցքային սկզբունքներ, այդ թվում՝ բռնության ենթարկված անձանց անվտանգությունը և ապահովությունը որպես առաջնահերթություն ընդունելը, գենդերազգայուն ու մարդակենտրոն մոտեցման կիրառումը, հաշվետվողականության ապահովումը, ներառականության և միջմասնագիտական համագործակցության խթանումը, ինչպես նաև մշակութային առումով համապատասխան և տրավմայի վերաբերյալ

տեղեկացվածության վրա հիմնված գործելակերպի պահպանումը (Հավելված, 7-րդ պարբերություն): Ծրագիրը բաղկացած է առանձին մոդուլներից, որոնք կարող են իրականացվել համակցված կամ առանձին՝ բռնություն գործադրած յուրաքանչյուր անձի անհատական գնահատականին համապատասխան: Մոդուլները իրականացվում են անհատական կամ խմբային հանդիպումների ձևաչափով՝ հանդիպումների տևողության, հաճախականության և գաղտնիության ապահովման վերաբերյալ հստակ սահմանված պարամետրերով (Հավելված, 16-27-րդ պարբերություն):

Ծրագրով նախատեսվում են նաև մշտադիտարկման, գնահատման և հաշվետվության մեխանիզմներ: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը պետք է իրականացնի կանոնավոր մշտադիտարկում (Հավելված, 19-րդ պարբերություն), իսկ ծրագիրն իրականացնող կազմակերպությունը պարտավոր է առնվազն վեց ամիսը մեկ գնահատել ծրագրի ընթացքը և այն վերանայել (Հավելված, 20-րդ պարբերություն), ինչպես նաև կատարել վերջնական գնահատում ծրագրի արդյունավետության, ծախսատարության և հնարավոր փոփոխությունների անհրաժեշտության վերաբերյալ (Հավելված, 21-22-րդ պարբերություն): Այնուամենայնիվ, գործող շրջանակը չի սահմանում հստակ ցուցանիշներ կամ մեթոդաբանություն՝ բռնություն գործադրած անձանց վարքագծային իրական փոփոխությունները չափելու համար: Չկա նաև կառուցվածքային հետադարձ կապ ապահովելու պահանջ՝ ոչ ծրագիրն իրականացնող մասնագետներից, ոչ էլ հենց ծրագրի մասնակից բռնություն գործադրած անձանցից: Արդյունքահեն գնահատման գործիքների բացակայության պայմաններում դժվար է դատել, թե արդյոք ծրագիրը գործնականում հասնում է իր ռեաբիլիտացման նպատակներին: Ծրագրի հաշվետվությունները ներկայացվում են նախարարությանը՝ ինչպես առանձին մոդուլների, այնպես էլ ընդհանուր արդյունքների վերաբերյալ (Հավելված, 22-րդ և 30-րդ պարբերություն), թեև փաստաթղթում ժամկետներ նշված չեն:

Խորհուրդ է տրվում, որ արդյունավետ միջամտությունները ներառեն առնվազն 51 ժամ խմբային հանդիպումներ կամ 27 ժամ անհատական հանդիպումներ, որոնք սովորաբար անցկացվում են նվազագույնը վեցամսյա ժամանակահատվածում: Այս ժամկետները համարվում

են անհրաժեշտ՝ բռնություն գործադրած անձանց վարքագծային գիտակից փոփոխությունը խթանելու և նրանց երկարաժամկետ պատասխանատվությունը ձևավորելու համար⁷³։ Ի տարբերություն այս մոտեցման՝ ՀՀ կառավարության N 35-Ն որոշումը նման նվազագույն տևողություն բացահայտ կերպով չի երաշխավորում։ Փոխարենը՝ այն նախատեսում է, որ յուրաքանչյուր ծրագրի բովանդակությունն ու տևողությունը որոշվեն անհատապես՝ բռնություն գործադրած անձի ռիսկերի և կարիքների գնահատման հիման վրա (Հավելված, 11-րդ պարբերություն)։ Բացի այդ, թեև Որոշմամբ սահմանվում է յուրաքանչյուր հանդիպման նվազագույն տևողությունը՝ խմբային աշխատանքի դեպքում ոչ պակաս, քան 80 րոպե, իսկ անհատական աշխատանքի դեպքում ոչ պակաս, քան 40 րոպե (Հավելված, 26-րդ պարբերություն), այն չի պարունակում պահանջ հանդիպումների քանակի կամ ծրագրի ընդհանուր տևողության վերաբերյալ։ Այս ճկուն և անհատական մոտեցումը կարող է չհամապատասխանել միջազգային չափանիշներին, եթե ծրագիրը լինի չափազանց կարճատև կամ մակերեսային։ Առանց հստակ սահմանված չափորոշիչի, միջամտությունների որակը և խորությունը կարող են տարբեր լինել՝ սահմանափակելով կայուն վարքագծային փոփոխության հասնելու և նոր բռնությունը կանխելու դրանց կարողությունը։

Միջազգային չափորոշիչները շեշտում են, որ բռնություն գործադրած անձանց համար նախատեսված ծրագրերը պետք է աշխարհագրորեն հասանելի լինեն երկրի ամբողջ տարածքում՝ ապահովելով, որ բոլոր մարզերում բռնություն գործադրած անձինք ունենան նման միջամտություններին մասնակցելու հնարավորություն⁷⁴։ Սակայն ՀՀ կառավարության N 35-Ն որոշումը չի ներառում բռնություն գործադրած անձանց համար ծրագրերի աշխարհագրական բաշխման կամ ապակենտրոնացման վերաբերյալ որևէ դրույթ։ Շահագրգիռ կողմերի հետ անցկացված հարցազրույցների արդյունքների համաձայն՝ ներկայումս նախատեսված է, որ այդ ծրագրերը գործելու են միայն

73. Եվրոպայի խորհուրդ, Ընտանեկան բռնություն գործադրող անձանց հետ աշխատանքի հարցերով Եվրոպական ցանցից Սանդրա Յովանովիչ Բելուտիչ և Բերտա Վալ, և Կիերան Մրջբարթան, Արևմտյան Անգլիայի համալսարան, Բրիստոլ, «Բռնություն գործադրող անձանց ուղղված անվտանգ և արդյունավետ ծրագրերի ուղեցույց. Ստամբուլի կոնվենցիայի 16-րդ հոդված» (2024 թվական), էջ 24, հասանելի է հետևյալ հղումով <https://rm.coe.int/article-16-arm/native/1680b44650>։

74. Նոյն տեղում, էջ 18։

Երևանում և Գյումրիում: Այս սահմանափակ աշխարհագրական տիրույթը ստեղծում է հավանական շահառուների զգալի հատվածի բացառման ռիսկ և վտանգում ռեաբիլիտացման ծառայություններին հավասար հասանելիության սկզբունքի ապահովումը Հայաստանի ամբողջ տարածքում:

Բռնություն գործադրած անձանց ուղղված ազգային ծրագրերը պետք է հիմնված լինեն ստանդարտացված ուսումնական պլանի վրա և ապահովվեն հավատարմագրման հստակ մեխանիզմով՝ բոլոր ծրագիր իրականացնող կազմակերպություններում որակը, հետևողականությունը և հաշվետվողականությունը ապահովելու համար⁷⁵: Թեև Հայաստանում բռնություն գործադրած անձանց ուղղված ծրագիրն ընդունվել է ՀՀ կառավարության N 35-Ն որոշմամբ, ներկայումս չկա համապատասխան հավատարմագրման համակարգ՝ որը կհավաստագրի իրականացնող կազմակերպությունները կամ անձնակազմի անդամներին սահմանված մասնագիտական չափանիշների հիման վրա: Բացի այդ, չկա թափանցիկ կամ ստանդարտացված ընթացակարգ առանձին ծրագրային մոդուլների մշակման, հաստատման կամ վերանայման համար, ինչը մտահոգություններ է առաջացնում բովանդակության որակի և միատեսակության վերաբերյալ: Այդպիսի շրջանակի բացակայությունը կարող է դժվարացնել գնահատելու հնարավորությունը՝ արդյոք ծրագիրը համապատասխանում է ռեաբիլիտացման և բռնության ենթարկված անձանց անվտանգության ապահովման պահանջվող չափորոշիչներին:

Պետությունը պետք է նաև ապահովի, որ բռնություն գործադրած անձանց համար նախատեսված ծրագրերին հատկացվի համապատասխան և նպատակային ֆինանսավորում: Նման ծրագրերի համար լրացուցիչ ֆինանսավորման հատկացումը չպետք է հանգեցնի ընտանեկան բռնության ենթարկված կանանց և իրենց երեխաներին աջակցություն տրամադրող ծառայությունների համար նախատեսված ֆինանսական և մարդկային ռեսուրսների կրճատմանը⁷⁶: Թեև ՀՀ կառավարության N 35-Ն որոշումը չի

75. Նույն տեղում, էջ 18:

76. Նույն տեղում, էջ 18:

պարունակում հստակ դրույթ բնությունն գործադրած անձանց ուղղված ծրագրերի նպատակային ֆինանսավորման վերաբերյալ, այն գործնականում չի բացառում նման նկատառումները: Հարցազրույցների արդյունքների համաձայն՝ այս հարցը բարձրացվել է կանանց աջակցման կենտրոնների կողմից, որոնք ընդգծել են ռիսկը, որ բնությունն գործադրած անձանց ուղղված ծրագրերի համար նոր ֆինանսավորումը կարող է իրականացվել բնության ենթարկված անձանց աջակցության ծառայությունների հաշվին: Ի պատասխան՝ նախարարությունն ընդունել է այդ մտահոգությունը և պարտավորվել ապահովել հավասարակշռված մոտեցում: Այդուամենայնիվ, որոշման մեջ բացակայում են երաշխիքները, որոնք կկանխեն բնության ենթարկված անձանց տրամադրվող ծառայությունների ֆինանսական կամ մարդկային ռեսուրսները կրճատելու ռիսկը:

Կառավարության որոշումը չի պարունակում որևէ դրույթ՝ ապահովելու, որ բնությունն գործադրած անձանց ուղղված ծրագրերում ներգրավված մասնագետները միաժամանակ չզբաղվեն այնպիսի գործունեությամբ, որը կարող է վտանգել բնության ենթարկված անձանց կարիքներին առաջնահերթություն տալու գործընթացը, օրինակ՝ մասնագետները չպետք է հանդիսանան երեխաների խնամատարության գործերում ընտանեկան հարցերով դատարանների խորհրդատու մասնագետներ կամ հանդես գան որպես բնությունն գործադրած կամ բնության ենթարկված անձի անձնական հոգեբան⁷⁷: Այս բացթողումը պոտենցիալ վտանգ է ներկայացնում անկողմնակալ մոտեցման ապահովման տեսանկյունից և կարող է խաթարել բնության ենթարկված անձանց վստահությունն ու անվտանգությունը: Միջազգային չափորոշիչներին համապատասխանությունն ապահովելու համար անհրաժեշտ են հստակ կարգավորումներ, որոնք արգելում են երկակի դերերը՝ հատկապես փոքր համայնքներում կամ հաստատություններում, որտեղ այդպիսի համընկնումները անձնակազմի շրջանում կարող են սովորական լինել: Նույն կերպ, որոշումը չի պահանջում, որ բնությունն գործադրած անձանց ուղղված ծրագրերը ֆիզիկապես առանձնացված լինեն բնության ենթարկված անձանց մասնագիտացված աջակցություն ցուցաբերող ծառայություններից,

⁷⁷ Նույն տեղում, էջ 19:

ինչպիսիք են ապաստանները և խորհրդատվական կենտրոնները: Նման երաշխիքների բացակայությունը կարող է հանգեցնել չկանխամտածված համընկնումների կամ մոտ գտնվելու դեպքերի, ինչը կվտանգի բռնության ենթարկված անձանց անվտանգությունը, գաղտնիության պահպանումը և հուզական բարեկեցությունը:

Համապատասխան իրավական կարգավորումների ուսումնասիրությունը, ինչպես նաև շահագրգիռ կողմերի, մասնավորապես ՀԿ-ների հետ հարցազրույցների վերլուծությունը բացահայտել է, որ ռեաբիլիտացման այս համապարփակ ծրագիրը պաշտոնապես հաստատելով՝ ՀՀ կառավարության N 35-Ն որոշումն էական առաջընթաց է նախորդ դրույթների համեմատությամբ, ինչպիսին է օրինակ՝ 2018 թվականի N 119-Ն նախարի հրամանը, որով բռնություն գործադրած անձանց ռեաբիլիտացման ծրագիրը ոչ պատշաճ ձևով վերապահված էր աջակցության կենտրոններին՝ առաջնահերթությունը տալով հաշտեցմանը, այլ ոչ թե պատասխանատվություն ստանձնելուն: ՀՀ կառավարության N 35-Ն որոշումը հստակեցնում է ինստիտուցիոնալ պարտականությունները, հաշվի է առնում բռնության ենթարկված անձանց անվտանգությունը և բռնություն գործադրած անձանց պատասխանատվությունը ծրագրի մշակման ժամանակ, ինչպես նաև անդրադառնում է մասնագիտացված փորձագիտական կարողությունների և ռեսուրսների պակասի վերաբերյալ նախկինում առկա մտահոգություններին:

Թեև ՀՀ կառավարության N 35-Ն որոշման ընդունումը կարևոր առաջընթաց է ռեաբիլիտացման ծրագրերի կառուցվածքային կարգավորման ուղղությամբ, դեռևս մնում են մի շարք էական բացեր: Մասնավորապես, բռնություն գործադրած անձանց համար նախատեսված ծրագրերին տարբեր ուղղորդման մեխանիզմները՝ ներառյալ ինչպես պարտադիր, այնպես էլ կամավոր ուղղորդումները, դեռևս հասանելի չեն⁷⁸: Հստակ և համակարգված ուղղորդման մեխանիզմի բացակայությունը խաթարում է բռնություն գործադրած անձանց հայտնաբերելու, ուղղորդելու և կանոնավոր ու հետևողականորեն գործընթացում ներգրավելու ինստիտուցիոնալ

78. Հեթեր, Մ. և Լիլի, Ս. Ջ. (2014 թվական), մեքենաված աշխատության մեջ (ծանոթագրություն 5), հասանելի է հետևյալ հղումով՝ https://research-information.bris.ac.uk/ws/portalfiles/portal/34955886/Article_12_English.pdf:

կարողությունը:

Բացի այդ, որոշումը չի անդրադառնում բռնություն գործադրած անձանց, որոնք գտնվում են կալանքի տակ կամ կրում են խափանման այլ միջոցներ, ինչի հետևանքով իրավախախտների այս կարևոր խումբը զրկված է ռեաբիլիտացման ծրագրերին մասնակցելու, իսկ ծառայություններ մատուցող կազմակերպությունները՝ փակ պայմաններում գործունեություն ծավալելու հնարավորությունից: Մինչդեռ, Եվրոպայի խորհրդի չափորոշիչների համաձայն, այս ծրագրերը պետք է իրականացվեն տարբեր միջավայրերում, այդ թվում՝ ինչպես ազատազրկման, այնպես էլ ազատազրկման հետ չկապված հաստատություններում, ինչը հնարավորություն է տալիս դիվերսիֆիկացնել ուղղորդման մեխանիզմները և հետևողականորեն կիրառել դրանք⁷⁹:

Վերոնշյալ բացերից բացի, ՀՀ կառավարության N 35-Ն որոշման մեջ արձանագրվել են նաև մի շարք այլ թերություններ: Թեև որոշման մեջ շեշտվում է բռնության ենթարկված անձանց աջակցություն տրամադրող կազմակերպությունների հետ համագործակցության կարևորությունը, բռնության ենթարկված անձանց անվտանգությունն ու ապահովությունը երաշխավորելու անհրաժեշտությունը, ինչպես նաև գենդերազգայուն և մարդու իրավունքների պաշտպանության վրա հիմնված մոտեցումների կարևորությունը, այնուամենայնիվ, ծրագրի իրականացման գործառնական մանրամասները, ինչպես նաև համագործակցության ձևաչափը հիմնականում չեն սահմանվում: Նման անորոշությունը կարող է լինել այդ դրույթների իրականացման պրակտիկ փորձառության բացակայության հետևանք: Առանց այդպիսի փորձի դժվար է կանխատեսել և մեկնաբանել տվյալ կարգավորումների արդյունավետությունը:

Բացի այդ, ՀՀ կառավարության որոշումը չի ներառում որևէ դրույթ, որով կապահանջվեր զուգընկերոջ հետ կապ ապահովող

79. Եվրոպայի խորհուրդ, Ընտանեկան բռնություն գործադրող անձանց հետ աշխատանքի հարցերով Եվրոպական ցանցից Սանդրա Յովանովիչ Բելոտիչ և Բերտա Վալ, և Կիերան ՄրքՔարթան, Արևմտյան Անգլիայի համալսարան, Բրիստոլ, «Բռնություն գործադրող անձանց ուղղված անվտանգ և արդյունավետ ծրագրերի ուղեցույց. Ստամբուլի կոնվենցիայի 16-րդ հոդված» (2024 թվական), էջ 14, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://rm.coe.int/article-16-arm/native/1680b44650>:

ծառայությունների ստեղծում բնություն գործադրած անձանց ուղղված ծրագրերի շրջանակում: Դա նշանակալի բացթողում է միջազգային չափորոշիչների համատեքստում, որոնք ընդգծում են նման ծառայությունների անհրաժեշտությունը՝ բնության ենթարկված անձանց անվտանգության և աջակցության ապահովման, ռիսկերի գնահատման և տեղեկատվության պատշաճ փոխանակման համար: Այս չափորոշիչների համաձայն՝ լավագույն տարբերակն այն է, որ զուգընկերոջ հետ կապը ապահովվի բնության ենթարկված անձանց աջակցության մասնագիտացված ծառայությունների միջոցով, որոնք համագործակցում են բնություն գործադրած անձանց համար նախատեսված ծրագրերի հետ, այլապես՝ ուղղակիորեն ներառվի ծրագրերում հստակ սահմանված ընթացակարգերի միջոցով⁸⁰: Այս մտահոգությունը հարցազրույցների ընթացքում բարձրաձայնել են նաև կանանց աջակցություն տրամադրող կազմակերպությունները, որոնք մատնանշել են զուգընկերոջ հետ կապի ապահովման համակարգված մեխանիզմի բացակայության հետևանքով ի հայտ եկած ռիսկերը:

2.4 Հիմնական պետական և ոչ պետական շահագրգիռ կողմերի դերը և ընթացիկ նախաձեռնությունների ամփոփում

Միջազգային չափորոշիչների համաձայն՝ բնություն գործադրած անձանց համար նախատեսված ծրագրերը չպետք է գործարկվեն առանձին և պետք է լինեն ընտանեկան բնության դեմ համայնքային համակարգված արձագանքի բաղադրիչը⁸¹: Հայաստանում ընտանեկան բնության արդյունավետ կանխարգելումը և բնություն գործադրած անձանց ռեաբիլիտացումը հիմնվում են մի շարք պետական և ոչ պետական դերակատարների համակարգված ներգրավվման վրա: Շահագրգիռ այս կողմերից յուրաքանչյուրն ունի իր ուրույն և փոխլրացնող դերը՝ ինչպես Ընտանեկան և կենցաղային բնության կանխարգելման մասին օրենքի շրջանակում, այնպես էլ քաղաքականության և ինստիտուցիոնալ ավելի լայն համատեքստում: Զեկույցի այս բաժնում ներկայացվում է ներգրավված յուրաքանչյուր հաստատության դերը՝

80. Նույն տեղում, էջ 22:

81. ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ և ՄԱԿ-Կանայք, «Ընտանեկան բնություն գործադրող անձանց հետ աշխատանքի և վաղ միջամտության վերաբերյալ տարածաշրջանային ուղեցույց. Արևելյան գործընկերության տարածաշրջան» (2022 թվական), էջ 15, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://eca.unwomen.org/en/digital-library/publications/2023/01/regional-guidance-on-working-with-perpetrators-of-domestic-violence>:

արտացոլելով ընթացիկ կամ ակնկալվող պարտականությունները, մարտահրավերները և հետագա զարգացման ներուժը:

Վերջին տարիներին՝ հատկապես նոր Քրեակատարողական օրենսգրքի ընդունումից և ընտանեկան բռնության կանխարգելման մասին օրենսդրության բարեփոխումներից հետո, Հայաստանում իրականացվել են պետական և ոչ պետական կառույցների կողմից մի շարք նախաձեռնություններ, որոնք թեև դեռ չեն ձևավորել լիովին ինստիտուցիոնալացված և համակարգված շրջանակ բռնություն գործադրած անձանց ուղղված ծրագրերի համար, այնուամենայնիվ, հիմք են դրել ավելի կառուցվածքային միջամտությունների իրականացմանը: Հատկանշական է, որ Պրոբացիայի ծառայությունը, Քրեակատարողական ծառայությունը և ՀՀ արդարադատության նախարարության «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը մշակել և փորձարկել են բռնություն գործադրած անձանց ռեաբիլիտացման տարբեր մոդելներ, որոնք կարող են օգտակար լինել բռնություն գործադրած անձանց համար նախատեսված ծրագրերում:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը կենտրոնական պետական մարմինն է, որին վերապահված է համակարգել բռնություն գործադրած անձանց համար նախատեսված ռեաբիլիտացման ծրագրերի մշակումը, իրականացումը և վերահսկումը՝ պետական հաստատությունների, ՀՀ-ների և ծառայություն մատուցող կազմակերպությունների հետ համագործակցությամբ: 2024 թվականին Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման մասին օրենքում կատարված փոփոխություններից և հաջորդիվ ՀՀ կառավարության N 35-Ն որոշման ընդունումից հետո ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության վրա պարտականություն դրվեց ուստիկանությունից նախազգուշացում ստանալուց հետո հնարավորին չափ սեղմ ժամկետում առաջարկել ռեաբիլիտացման ծառայություններ և ապահովել պարտադիր մասնակցություն, երբ կա դատարանի որոշում: Նախարարության դերը՝ որպես պատասխանատու մարմին, ներառում է նաև ծառայությունների մատուցման չափորոշիչների սահմանումը, իրականացնող գործընկերների ընտրությունը և աջակցությունը,

ինչպես նաև արդյունքների մշտադիտարկումը: Այնուամենայնիվ, հարցազրույցների արդյունքները ցույց են տվել, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն առայժմ գտնվում է այդ պարտականությունների գործնական իրականացման վաղ փուլում: Դեռևս պետք է ձեռնարկվեն և հետագայում մշակվեն կոնկրետ քայլեր ծրագրերը միջազգային չափորոշիչներին համապատասխանեցնելու և բռնության ենթարկված անձանց աջակցության ծառայությունների և այլ շահագրգիռ կողմերի հետ համակարգումն ապահովելու ուղղությամբ: Այն նաև առանցքային դեր ունի ծրագրի իրականացման ընթացքում վերջիններիս անվտանգության ապահովման գործում, ինչը պահանջում է սերտ համագործակցություն ոստիկանության, դատարանների և կանանց հարցերով մասնագիտացված ՀԿ-ների հետ:

Քաղաքականության և ինստիտուցիոնալ տեսանկյունից ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը նախաձեռնել է միջգերատեսչական հանդիպումներ և աշխատանքային խմբերի նիստեր, իսկ Եվրոպայի խորհրդի աջակցությամբ 2025 թվականին կազմակերպել է ուսումնական այց Գերմանիա, որի ընթացքում հայկական պատվիրակության անդամները ծանոթացել են բռնություն գործադրած անձանց պատասխանատվության ստանձմանն ուղղված ծրագրերի եվրոպական մոդելներին: Այս փորձառությունը հիմք է ծառայել բարեփոխումների իրականացման համար:

Դատարանները առանցքային դերակատարներ են բռնություն գործադրած անձանց համար նախատեսված ծրագրերին պարտադիր ուղղորդման գործընթացում: Դրանք կարող են պարտադրել մասնակցություն ռեաբիլիտացման ծրագրում՝ որպես պաշտպանական որոշման մաս, ինչն էապես նպաստում է պատասխանատվության ապահովմանը և վերաբերմունքի ու վարքագծի փոփոխության խթանմանը, երբ կամավոր մասնակցությունը արդյունք չի տվել, կամ երբ առկա է բռնության շարունակման բարձր ռիսկ: Այնուամենայնիվ, ինչպես նշվել է հարցազրույցների ընթացքում, մինչ այժմ դատարանները հազվադեպ են կիրառում այս հնարավորությունը: Դա կարող է բացատրվել մի քանի պատճառներով՝ համակարգը նոր է փոփոխվել, պետության կողմից երաշխավորված՝ բռնություն գործադրած անձանց համար ծրագրեր նախկինում չեն գործել, և նախկին համակարգը չի հանդիսացել լիարժեք գործարկելի: Այս

սահմանափակ կիրառումը կարող է պայմանավորված լինել իրավական ոլորտի մասնագետների/դատական համակարգի աշխատակիցների ցածր տեղեկացվածությամբ առկա ռեաբիլիտացման միջոցառումների վերաբերյալ, դրանց արդյունավետության նկատմամբ վստահության պակասով կամ հստակ ընթացակարգային ցուցումների և համապատասխան ծրագրերի բացակայությամբ: Դատական համակարգի ավելի լայն ներգրավվածությունը, հասանելի ռեսուրսների մասին իրազեկության բարձրացումը և ծառայության ընթացքում վերապատրաստումը՝ ռեաբիլիտացիման դերի և բռնության ենթարկված անձանց անվտանգության ու բռնություն գործադրած անձանց պատասխանատվության խթանման գործում դրա օգուտների վերաբերյալ, կարող են մեծացնել այս իրավական գործիքի ազդեցությունը:

ՅԿ-ները առանցքային դեր ունեն ռեաբիլիտացման ծրագրերի իրականացման գործում, մասնավորապես՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից նախատեսված լիազորությունների պատվիրակման շրջանակում: Այդպիսի կազմակերպություններից «Արևամանուկ» ՀԿ-ն և «Սոցիալական արդարություն» ՀԿ-ն արդեն իսկ նախնական պատրաստակամություն են հայտնել համագործակցել ծրագրերի մշակման և իրականացման գործում՝ հիմնվելով իրենց փորձի վրա հոգեբանական աջակցության, բռնություն գործադրած անձանց ռեաբիլիտացման և մարդու իրավունքների պաշտպանության ոլորտներում: Այդուհանդերձ ՀԿ-ները բախվում են մի շարք կարևոր մարտահրավերների, այդ թվում՝ ծրագրերի համար հստակ չափորոշիչների և գործառնական ուղեցույցների բացակայությունը, հնարավոր ֆինանսավորման սղությունը և որակավորված մասնագետների պակասը:

«Արևամանուկ» ՀԿ-ն⁸² և «Սոցիալական արդարություն» ՀԿ-ն⁸³

82. «Արևամանուկ» ՀԿ-ն տրամադրում է հոգեբանական և վերականգնողական աջակցություն ընտանեկան բռնության ենթարկված անձանց և բռնություն գործած անձանց՝ ունենալով անհատական խորհրդատվության փորձ և պատրաստակամություն միանալու բռնություն կատարողների համար նախատեսված պետական ծրագրին: Կազմակերպությունը հանդես է գալիս ի պաշտպանություն պարտադիր մասնակցության, գաղտնիության երաշխիքների պահպանման, տեղական համատեքստին հարմարեցված ծրագրերի մշակման, ինչպես նաև կարևորում է կայուն ֆինանսավորման, մասնագետների վերապատրաստման և միջկազմակերպական համակարգման անհրաժեշտությունը:

83. «Սոցիալական արդարություն» ՀԿ-ն՝ հիմնադրված 2004 թվականին, հայկական իրավապաշտպան կազմակերպություն է, որը գործունեություն է ծավալում քրեական արդարադատության, անչափահասների արդարադատության, պրոբացիայի, բանտային

իրականացրել կամ առաջարկել են ռեաբիլիտացման մոդուլներ՝ հիմնվելով միջազգային լավագույն փորձի վրա: Մասնավորապես, «Արևամանուկ» ՀԿ-ն հանդես է եկել համապարփակ, ապացուցահեն միջամտությունների օգտին՝ համատեղելով անհատական կոգնիտիվ-վարքաբանական թերապիայի (CBT) վրա հիմնված մոտեցումները և խմբային հանդիպումները, որոնք անդրադառնում են բռնության հոգեբանական, սոցիալական և գենդերային կողմերին: Այս ՀԿ-ներն ընդգծել են գաղտնիության պահպանման, բռնության ենթարկված անձանց անվտանգության և պատշաճ ուղղորդման մեխանիզմների ապահովման անհրաժեշտությունը, ինչպես նաև մտահոգություն են հայտնել այն մասին, որ գործող ծրագրերի բովանդակությունը բավարար չափով հարմարեցված չէ հայկական համատեքստին:

Բռնության ենթարկված անձանց աջակցող ՀԿ-ները, ինչպիսիք են «Կանանց աջակցման կենտրոնը» և «Կանանց իրավունքների տունը», ունեն լրացնող և կարևոր դեր: Թեև դրանք անմիջականորեն չեն աշխատում բռնություն գործադրած անձանց հետ, բռնության ենթարկված անձանց փորձառությունների և կարիքների վերաբերյալ պատկերացումները նրանց դարձնում են կարևոր գործընկերներ՝ երաշխավորելու, որ բռնություն գործադրած անձանց համար նախատեսված ծրագրերի հիմնական ուշադրությունը ուղղվի բռնության ենթարկված անձանց անվտանգության և աջակցության ապահովմանը, ինչպես նաև բռնության նոր գործողությունների կանխարգելմանը: Այս ՀԿ-ները կոչ են անում ապահովել կանոնավոր հաղորդակցություն և տեղեկատվության փոխանակում բռնության ենթարկված անձանց և բռնություն գործադրած անձանց հետ ծրագրեր իրականացնող ծառայությունների միջև, իրականացնել համատեղ ռիսկերի գնահատում և ներառել զոհակենտրոն միջամտություններ բռնություն գործադրած անձանց ուղղված ծրագրերում: Բռնության ենթարկված անձանց աջակցություն տրամադրող ՀԿ-ները նաև դեր ունեն բռնության ենթարկված անձանց անձնական կյանքի իրավունքի հնարավոր խախտումների մասին զգուշացնելու գործում, ինչպես նաև ապահովելու, որ նրանց աջակցության ծառայությունների համար

համակարգի բարեփոխումների և ընտանեկան բռնության դեմ արձագանքի ոլորտներում: Կազմակերպությունը մասնակցել է ազգային արդարադատական բարեփոխումներին, աջակցում է հանցագործների սոցիալական վերականգնմանը և խթանում է վերականգնող արդարադատության մոտեցումները՝ հետազոտությունների, իրավապաշտպան գործունեության և միջառարկայական համագործակցության միջոցով:

Նախատեսված ռեսուրսները չուղղվեն բնության գործադրած անձանց ռեաբիլիտացմանը՝ բնության ենթարկված անձանց պաշտպանության և աջակցության ծախսերի հաշվին:

Ոստիկանության ծառայողները մնում են ընտանեկան բնության դեպքերին առաջին արձագանքողները և առանցքային դեր են խաղում ծրագրերին ուղղորդման ապահովման և այդպիսով ռեաբիլիտացման գործընթացը նախաձեռնելու հարցում: Նրանք իրավասու են համապատասխան դեպքերում նախազգուշացումներ տալ և պետք է տեղեկացնեն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը՝ ռեաբիլիտացման ծառայություններ առաջարկելու համար: Ներկայումս ոստիկանության ներգրավվածությունը սահմանափակվում է միայն նախազգուշացումներ տալով և բնություն գործադրած անձանց ուղղված առկա ծրագրերի մասին տեղեկացնելով. այս փուլում նրանք չունեն ծրագրերին մասնակցությունը պարտադրելու լիազորություն: Հարցազրույցների արդյունքների համաձայն՝ ոստիկանությունը չունի նաև ուղղորդման ստանդարտացված ընթացակարգեր, նախնական և ծառայության ընթացքում հետևողական վերապատրաստում ռեաբիլիտացման ծրագրերի նպատակների և կառուցվածքի վերաբերյալ, և թե ինչպես կարող են նման միջամտությունները նպաստել բնության ենթարկված անձանց անվտանգությանը: Այս բացը հատկապես մտահոգիչ է, քանի որ իրավապահ մարմինները հանդես են գալիս որպես առաջնային օղակ ոչ միայն բնություն գործադրած անձանց հայտնաբերելու, այլև ռեաբիլիտացման ամբողջ գործընթացում բնության ենթարկված անձանց պաշտպանությունը ապահովելու գործում: Համակարգում վստահություն և ներդաշնակություն ապահովելու համար կարևոր է ոստիկանության ծառայողների լիարժեք ըմբռնումը, որ բնություն գործադրած անձանց համար նախատեսված ծրագրերի նպատակը բնության ենթարկված անձանց անվտանգությունը բարձրացնելն է, այլ ոչ թե վտանգելը: Ոստիկանության կողմից ռեաբիլիտացման խթանման գործում իր ունեցած դերի և դրա կանխարգելիչ Նշանակության ավելի լավ ընկալումը կարող է զգալիորեն ամրապնդել ընդհանուր համակարգը:

Այն դեպքում, երբ բնություն գործադրած անձինք արդեն գտնվում

են քրեական արդարադատության համակարգում՝ որպես ազատագրված դատապարտյալներ կամ պրոբացիայի շահառուներ, առանցքային դեր ունեն երեք ինստիտուցիոնալ դերակատարներ՝ Քրեակատարողական ծառայությունը, Պրոբացիայի ծառայությունը և «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոնը»:

Քրեակատարողական ծառայությունը պատասխանատու է ազատագրված դատապարտյալների ռեաբիլիտացման ծրագրերի իրականացման համար՝ ելնելով ռիսկերի և կարիքների գնահատման արդյունքներից: Ներկայում այն չունի բնություն գործադրած անձանց համար ռեաբիլիտացման հատուկ ծրագրեր, քանի որ առաջարկում է միայն զայրույթի կառավարման և ծնողավարության ընդհանուր հանդիպումներ, որոնք նախատեսված չեն ընտանեկան բնություն գործադրած անձանց համար: Հատկանշական է, որ Քրեակատարողական ծառայությունը բավարար չափով չի անդրադառնում նաև կալանքի տակ գտնվող անձանց կարիքներին, քանի որ գործող շրջանակը չի ներառում նրանց դեպքերը: Ծառայությունը նաև բախվում է մի շարք լուրջ մարտահրավերների՝ կապված մարդկային և ֆինանսական ռեսուրսների, անձնակազմի վերապատրաստման և կալանքի վայրերում բնության ենթարկված անձանց անվտանգության ապահովման միջոցառումների հետ: Քրեակատարողական ծառայությունը ազատագրված անձանց ռեաբիլիտացման գործընթացում ներառել է ընդհանուր հոգեբանական և սոցիալական միջոցառումներ, այդ թվում՝ զայրույթի կառավարման և դրական ծնողավարության խմբային հանդիպումներ: Սակայն դրանք իրականացվել են անկանոն և առանց պաշտոնապես հաստատված ուսումնական պլանի:

Պրոբացիայի ծառայությունը աշխատում է այն բնություն գործադրած անձանց հետ, որոնք իրենց պատիժը կրում են բաց ռեժիմով՝ օգտագործելով ռիսկերի և կարիքների գնահատման իր սեփական գործիքը: Քրեակատարողական Նոր օրենսգրքի ընդունումից և ընտանեկան բնության կանխարգելման մասին օրենսդրական բարեփոխումներից հետո ծառայությունը նախաձեռնել է մի շարք փորձնական ծրագրեր՝ ուղղված պրոբացիայի այն շահառուներին, որոնք ագրեսիվ կամ բռնի վարքագիծ են դրսևորել,

մասամբ հիմնվելով կոգնիտիվ-վարքաբանական թերապիայի սկզբունքների և Դուլուբի մոդելի վրա: Այս փորձնական ծրագրերը ներառել են խմբային և անհատական հանդիպումներ զայրույթի կառավարման և պատասխանատվության ձևավորման թեմաներով, որոնք մշակվել են ՀԿ-ների հետ համագործակցությամբ և միջազգային կազմակերպությունների աջակցությամբ: Այդ ջանքերը վկայում են հոգեցոցիալական, վարքագծային փոփոխություններին ուղղված միջամտությունների անհրաժեշտության գիտակցման մասին: Այնուամենայնիվ, ծրագրերը դեռևս ստանդարտացված չեն, ուղղորդման մեխանիզմները թույլ են, իսկ դատարանի որոշումները հազվադեպ են նախատեսում պարտադիր մասնակցություն: Դրանց բովանդակությունը հիմնականում ընդհանուր բնույթի ունի, միշտ չէ, որ գենդերազգայուն է և հատուկ հարմարեցված չէ ընտանեկան բռնություն գործադրած անձանց համար: Անհրաժեշտ է ապահովել հստակություն, հուսալի ընթացակարգեր և հատուկ ռեսուրսներ՝ ծառայության դերի ամրապնդման համար:

Եվ վերջապես, ՀՀ արդարադատության նախարարության «**Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն**» պետական ոչ առևտրային կազմակերպությունը⁸⁴ աջակցում է ազատազրկված դատապարտյալների և պրոբացիայի շահառուների համար ռեաբիլիտացման ծրագրերի մշակմանը և իրականացմանը ինչպես քրեակատարողական, այնպես էլ պրոբացիայի համակարգերում: Թեև կենտրոնն ունի անհրաժեշտ ինստիտուցիոնալ փորձառություն, ենթակառուցվածքներ և որակավորված անձնակազմ, որոնք անհրաժեշտ են գործունեության շրջանակն ընդլայնելու համար, այն ներկայումս սահմանափակ դեր է խաղում ընտանեկան բռնության դեմ պայքարի շրջանակներում, քանի որ իր ներուժը սահմանափակվում

84. «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոնը» Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության ենթակայությամբ գործող պետական ոչ առևտրային կազմակերպություն է, որը մասնագիտացած է իրավական կրթության, մասնագիտական վերապատրաստման և վերականգնողական ծրագրերի մշակման ու տրամադրման ուղղությամբ: Կենտրոնը հիմնադրվել է ՀՀ կառավարության 1990 թվականի հոկտեմբերի 18-ի N 681 կարգադրությամբ՝ որպես Արդարադատության նախարարության «Իրավաբանական կադրերի որակավորման բարձրացման ինստիտուտ»: 2003 թվականին ՀՀ կառավարության N 224-Ն որոշմամբ վերակազմակերպվել է պետական ոչ առևտրային կազմակերպության և վերանվանվել «ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական ինստիտուտ»: 2016 թվականին ՀՀ կառավարության N 1253-Ն որոշմամբ «Իրավախախտում կատարած անձանց վերականգնողական կենտրոնը» միացել է Ինստիտուտին, և վերջինս ստացել է իր ներկայիս անվանումը՝ «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն»:

է պաշտոնական հանձնարարություններ, հստակ մանդատներ և բավարար ռեսուրսներ չլինելու պատճառով: «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը իր փորձագիտական ու ինստիտուցիոնալ ներուժը ներդրել է ռեաբիլիտացման ծրագրերի մշակման և տրամադրման գործում՝ հատկապես պրոբացիայի շահառուների և ազատագրված դատապարտյալների հետ կապված: Կենտրոնում աշխատում են որակավորված հոգեբաններ և սոցիալական աշխատողներ, այն ունի փորձ այնպիսի մոդուլների մշակման ոլորտում, ինչպիսիք են դրական ծնողավարությունը և խմբային հոգեկրթությունը: ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի (ՅՈՒՆԻՍԵՖ) հետ համագործակցությամբ կենտրոնը մշակել է նաև բռնության ենթարկված անձանց երեխաների համար մասնագիտացված վերականգնողական ծրագիր՝ ի ցույց դնելով զգայուն ոլորտներում նպատակային, կառուցվածքային միջամտություններ մշակելու և իրականացնելու իր կարողությունը: Թեև այս փուլում վիճակագրական տվյալներ և ծրագրի արդյունքների գնահատականները հասանելի չեն, այս փորձը վկայում է ընտանեկան բռնություն գործադրած անձանց ուղղված համադրելի և համակարգված ծրագրեր մշակելու կենտրոնի ներուժի մասին:

Վերոնշյալ նախաձեռնություններն արտացոլում են Հայաստանում շահագրգիռ կողմերի մոտ ձևավորվող ընկալումը բռնություն գործադրած անձանց համար կառուցվածքային, պատասխանատու և զոհակենտրոն ռեաբիլիտացման կարևորության վերաբերյալ՝ որպես կանխարգելիչ միջոց: Այդուհանդերձ, դրանք բացահայտում են նաև կարևոր բացեր՝ կալանքի տակ գտնվող անձանց համար պաշտոնապես հաստատված ծրագրերի բացակայություն, ծրագրային մոդուլների անհամապատասխանություն, ուղղորդման հստակ մեխանիզմների բացակայություն, սահմանափակ մշտադիտարկում և գնահատում, բռնության ենթարկված անձանց աջակցության ծառայությունների հետ ոչ բավարար համակարգված համագործակցություն: Ամփոփելով, կարելի է ասել, որ չնայած յուրաքանչյուր շահագրգիռ կողմ արժեքավոր փորձ և օրինականություն է բերում համակարգ, ներկայիս պատկերը հատվածական է: Միջգերատեսչական համագործակցության ամրապնդումը արձանագրությունների և համաձայնագրերի միջոցով,

դերերի և ընթացակարգերի հստակեցումը, ինչպես նաև բոլոր շահագրգիռ կողմերի կարողությունների զարգացումը (հատկապես գենդերային տեսանկյան ընդունման, բռնության ենթարկված անձանց պաշտպանության, ծրագրի որակի ապահովման և պատասխանատվության խթանման ուղղությամբ) կարևորագույն նախաձեռնություններ են ընտանեկան բռնությանը համապարփակ և իրավունքահեն արձագանքի և բռնություն գործադրած անձանց ռեաբիլիտացման խթանման համար: Թեև օրենսդրական և քաղաքականության մշակման շրջանակը առաջընթաց է գրանցել, այս նախաձեռնությունների գործնական իրականացումը շարունակում է մնալ կարևոր մարտահրավեր: Այնուամենայնիվ, չնայած հատվածական բնույթին, պրոբացիայի, քրեակատարողական հիմնարկների և ՀԿ-ների պիլոտային ծրագրերի փորձը, ինչպես նաև երեխայակենտրոն ծրագրերը արժեքավոր դասեր են պարունակում, որոնք կարող են հիմք ծառայել բռնություն գործադրած անձանց ուղղված հուսալի, ապացուցահեն և տեղական համատեքստին հարմարեցված ծրագրերի մշակման համար՝ միջազգային չափորոշիչներին լիովին համահունչ:

III. Հայաստանում բռնություն գործադրած անձանց համար նախատեսված ծրագրերի գործնական իրականացումը

hրավական և քաղաքականության շրջանակի շարունակական զարգացումներին զուգահեռ, ինչպես նաև նոր Զբեակատարողական օրենսգրքի ընդունումից և ընտանեկան բռնության կանխարգելման վերաբերյալ օրենսդրական բարեփոխումներից հետո, Հայաստանը սկսել է կյանքի կոչել իր պարտավորությունները՝ ներդնելով և փորձարկելով բռնություն գործադրած անձանց ռեաբիլիտացման ծրագրեր: Այս նախաձեռնություններն արտացոլում են խորացող ընկալման ձևավորումը, որ բռնություն գործադրած անձանց վարքագծի և վերաբերմունքի հիմքում ընկած պատճառների հասցեագրումը կենսական նշանակություն ունի բռնության արատավոր շրջանը խզելու և բռնության ենթարկված անձանց կարճաժամկետ, ընթացիկ ու երկարաժամկետ պաշտպանություն տրամադրելու համար: Ծրագրերի իրականացման ջանքերում ներգրավված են եղել բազմաթիվ հաստատություններ և դերակատարներ, որոնք աշխատել են իրավական շրջանակը գործարկելու և համակարգված, կարիքահեն միջամտություններ մշակելու ուղղությամբ: Թեև այս առաջին քայլերը զգալի առաջընթաց են, դրանք նաև ցույց են տալիս, թե որքան բարդ

է նորմատիվային չափորոշիչները արդյունավետ գործելակերպի վերածելը՝ ընդգծելով ինստիտուցիոնալ համագործակցության, բավարար ռեսուրսների և շարունակական մշտադիտարկման կարևորությունը՝ իմաստալից արդյունքներ ապահովելու համար: Ձեկնույցի այս բաժնում ներկայացվում է միջգերատեսչական համակարգման գործող մեխանիզմների վիճակը, ՀՀ կառավարության N 35-Ն որոշմամբ հաստատված՝ բռնություն գործադրած անձանց ռեաբիլիտացման Հայաստանում առաջին ծրագրի մանրամասն վերլուծությունը, ինչպես նաև ծրագրի մշակման և իրականացման հիմնական բացերի, մարտահրավերների և բարելավման ենթակա տիրույթների գնահատականը:

3.1 Միջգերատեսչական համակարգումը և ուղղորդման մեխանիզմները

Բռնություն գործադրած անձանց համար նախատեսված արդյունավետ ծրագրերը չեն կարող գործարկվել առանձին: Դրանց հաջողության գրավականը հստակ ինստիտուցիոնալ դերերի սահմանումն է և մի շարք շահագրգիռ կողմերի հետ ամուր համագործակցությունը: Ինչպես նշված է «Բռնության ենթարկված անձանց անվտանգության վրա հիմնված և զուգընկերոջ նկատմամբ բռնություն գործադրած անձանց ուղղված ծրագրերի համար եվրոպական չափորոշիչներ» (Չափորոշիչ 2.2)-ում, ծրագրերը պետք է իրականացնեն ռիսկերի գնահատման ընթացակարգեր, որոնք նպատակաուղղված են բռնության ենթարկված անձանց անվտանգության և բարեկեցության առաջնահերթ ապահովմանը, լինի դա ներքին գործընթացների, թե արտաքին գործակալությունների հետ համագործակցության միջոցով: Մասնավորապես, անհրաժեշտ է ձեռնարկել կոնկրետ քայլեր՝ ապահովելու արդյունավետ համագործակցություն այլ դերակատարների, այդ թվում՝ կանանց աջակցության ծառայությունների, ոստիկանության, դատարանների, դատախազությունների, երեխաների պաշտպանության և առողջապահական ծառայությունների հետ, ինչպես նաև լինելու բռնության դեմ համայնքային համակարգված արձագանքի անբաժանելի մասը (Չափորոշիչ 2.2.5)⁸⁵:

85. Ընտանեկան բռնություն գործադրող անձանց հետ աշխատանքի հարցերով եվրոպական ցանց (WWP EN), «Բռնություն կատարողների համար նախատեսված ծրագրերի եվրոպական

Շահագրգիռ կողմերի հետ անցկացված խորհրդակցությունների և առկա ծրագրերի վերլուծության վրա հիմնված մեր քարտեզագրման արդյունքում պարզվել է, որ չնայած քաղաքականության և օրենսդրության ոլորտում արձանագրված առաջընթացին, հիմնական դերակատարների գործառնական և ընթացակարգային գործելակերպը շարունակում է մնալ հատվածական և թերի: Շատ հաստատություններ գործում են *ad hoc* և ոչ ֆորմալ սկզբունքով՝ փոխարենը առաջնորդվելու հաստատված ուղեցույցներով և արձանագրություններով, որոնք կարգավորում են յուրաքանչյուր կառույցի դերը բռնություն գործադրած անձանց վերաինտեգրման և ռեաբիլիտացման աշխատանքում: Օրինակ՝ թեև Պրոբացիայի ծառայությունը ներառում է բռնություն գործադրած անձանց ռեաբիլիտացման տարրեր անհատական պլաններում՝ հիմնվելով ռիսկերի և կարիքների գնահատման վրա, չկան ներքին միասնական ուղեցույցներ կամ հստակ արձանագրություններ, որոնք կարգավորում են ուղղորդման ընթացակարգերը, տվյալների փոխանակման մեխանիզմները, գնահատումը կամ ծրագիրն իրականացնող ՀԿ-ների հետ հետադարձ կապը:

Նմանապես, Քրեակատարողական ծառայությունն առաջարկում է վերասոցիալականացման լայն շրջանակ ունեցող միջոցառումներ, ինչպիսիք են գայրույթի կառավարման կամ ծնողավարության հանդիպումները, թեև դրանք համակարգված ձևով կապված չեն ընտանեկան բռնությանը բնորոշ ռիսկերի հետ և չեն համապատասխանում իրավական շրջանակում նախատեսված կոնկրետ մոդուլներին: Մանդատի և գործելակերպի միջև առկա այս բացը էլ ավելի է խորանում իրավասու մասնակիցներին գնահատելու և ընտրելու համար անհրաժեշտ հատուկ և միասնական գործիքներ չլինելու պատճառով՝ հատկապես կալանքի տակ գտնվող անձանց դեպքում, որոնք ներկայումս ներառված չեն որևէ պաշտոնական միջամտության մեխանիզմում:

չափորոշիչներ. բռնության ենթարկված անձանց անվտանգության վրա հիմնված և զուգընկերոջ նկատմամբ բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի համար չափորոշիչներ», աշխատանքային փաստաթուղթ, (2023 թվական), էջ 17, հասանելի է հղումով՝ https://www.work-with-perpetrators.eu/fileadmin/www/What_you_can_do/Ensure_the_quality_of_your_perpetrator_programme/European_Standards_for_Perpetrator_Programmes/European_Standards_for_Perpetrator_Programmes_website.pdf.

Գործառնական հստակության բացակայությունը խոչընդոտում է նաև գերատեսչությունների միջև համագործակցությանն ու գործերի համակարգված կառավարմանը: Օրինակ՝ գոյություն չունի Պրոբացիայի ծառայության, Զբոսաշրջության, Բնակավայրերի, Բնակարարության, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ՀՀ-ների և դատարանների միջև տվյալների հավաքագրման և տեղեկատվության փոխանակման համապարփակ համակարգ այն դեպքերի համար, երբ բռնություն գործադրած անձը անցնում է դատական համակարգի տարբեր փուլերով⁸⁶: Նմանապես, ոստիկանությունը նախազգուշացումներ է տալիս և տեղեկացնում է բռնություն գործադրած անձանց ծրագրերի հասանելիության մասին, սակայն չունի այդ ծրագրերին մասնակցությունը հարկադրելու կամ համապատասխանությունը վերահսկելու որևէ մանդատ կամ մեխանիզմ: ՀՀ-ները, իրենց հերթին, բախվում են մի շարք գործառնական մարտահրավերների, որոնք ներառում են պատվիրակման ոչ հստակ չափանիշներ, ֆինանսական անորոշություն և պետական հաստատությունների կողմից ուղղորդման հստակ մեխանիզմների բացակայություն: Այս ընթացակարգային թերությունները առաջնագծում աշխատող անձնակազմին թողնում են առանց բավարար մեթոդական ուղղորդման և ստեղծում են գործնական անհամապատասխանություններ, որոնք թուլացնում են ծրագրերի ներուժը՝ խթանելու պատասխանատվություն, նպաստելու վերաբերմունքի և վարքագծի փոփոխությանը, ինչպես նաև երաշխավորելու բռնության ենթարկված անձանց անվտանգությունը համակարգված ձևով:

Հայաստանում ստեղծվել է Միջգերատեսչական աշխատանքային խումբ (ՀՀ ներքին գործերի նախարարի 2025 թվականի հունվարի 17-ի N 247-Ա հրաման)՝ ընտանեկան բռնության դեպքերին օպերատիվ արձագանքի խթանման նպատակով, որի կազմում են ՀՀ գլխավոր դատախազությունը, ՀՀ Ոստիկանությունը, ՀՀ քննչական կոմիտեն, ՀՀ

86. Ազատությունից զրկված անձանց համար փորձական վերականգնողական ծրագրերի ներդրման կարիքների գնահատման վերաբերյալ՝ «Ազատությունից զրկված անձանց իրավունքների պաշտպանության ամրապնդում» ծրագրի շրջանակում, էջեր 35–36:
Զեկույց Պրոբացիայի ծառայության կարիքների գնահատման վերաբերյալ վերասոցիալականացման ծրագրերի մշակման և իրականացման, ինչպես նաև տվյալ ոլորտում գործող պետական կառույցների, համայնքային մարմինների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ համագործակցային ցանցերի ձևավորման ուղղությամբ՝ «Աջակցություն Հայաստանում Պրոբացիայի ծառայության հզորացմանը» ծրագրի շրջանակում, էջ 18:

աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ինչպես նաև ոլորտային ՀԿ-ները: Նախատեսված է, որ Աշխատանքային խումբը գործելու է որպես խորհրդատվական մարմին, որը պետք է ապահովի ընտանեկան բնության կանխարգելման գործում ներգրավված պետական մարմինների և ՀԿ-ների միջև շարունակական հաղորդակցություն: Այն նաև ձևակերպում է առաջարկություններ՝ ուղղված ոլորտային խնդիրների առավել արդյունավետ լուծմանը, և դրանք ներկայացնում իրավասու պետական մարմիններին: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած տեղեկությունների համաձայն՝ Աշխատանքային խումբը ակտիվորեն մասնակցում է նաև Գենդերային թեմատիկ խմբի և Գենդերային հիմքով բնության աշխատանքային ենթախմբի աշխատանքներին, որտեղ ընդգրկված են ՄԱԿ-ի գործակալությունների, միջազգային կազմակերպությունների, պետական կառույցների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ՝ քաղաքականության համաձայնեցումը և ոլորտային արձագանքները բարելավելու համար: Տեղական ինքնակառավարման մարմինները հիմնականում ներգրավվում են համագործակցային շրջանակներում, իսկ ՀԿ-ները կարևոր դեր են խաղում թե՛ ծառայությունների մատուցման և թե՛ մշտադիտարկման գործընթացներում: Այս մարմիններն ու համագործակցության ու համակարգման ուղիները կարող են ծառայել որպես ամուր հարթակներ՝ քննարկելու քաղաքականության մշակման, գործնական իրականացման և բնություն գործադրած անձանց համար նախատեսված ծրագրերի արդյունավետության հետ կապված հարցերը:

Այսպիսով, չնայած ինստիտուցիոնալ դերերի սահմանման և միջգերատեսչական երկխոսության խթանման ուղղությամբ (այդ թվում՝ Միջգերատեսչական աշխատանքային խմբի միջոցով) արձանագրված էական առաջընթացին, դեռևս զգալի բացեր կան մանդատները համակարգված և արդյունավետ գործելակերպի վերածելու հարցում: Միջազգային չափորոշիչների, այդ թվում՝ «Բնության ենթարկված անձանց անվտանգության վրա հիմնված և զուգընկերոջ նկատմամբ բնություն գործադրած անձանց ուղղված ծրագրերի համար եվրոպական չափորոշիչների» ապահովման համար անհրաժեշտ է *ad hoc* ձևաչափից անցնել հաստատված ընթացակարգերի, հստակ համակարգման և համագործակցության մեխանիզմների, ինչպես

Նաև գործառնական միասնական արձանագրությունների կիրառման պրակտիկայի բոլոր համապատասխան հաստատություններում: Միջգերատեսչական համակարգման ամրապնդումը՝ երաշխավորված միասնական գործիքակազմով և կարողությունների կայուն զարգացմամբ, հնարավորություն կտա, որ բռնություն գործադրած անձանց համար նախատեսված ծրագրերը գործեն որպես բռնության դեմ համայնքային համակարգված արձագանքի անբաժանելի մաս՝ մեծացնելով ռիսկերը նվազեցնելու, պատասխանատվություն խթանելու և բռնության ենթարկված անձանց պաշտպանություն տրամադրելու իրենց կարողությունը:

Անդրադառնալով ուղղորդման մեխանիզմներին՝ ինչպես արդեն քննարկվել է օրենսդրությանը վերաբերող բաժնում, Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման մասին օրենքը նախատեսում է բռնություն գործադրած անձանց ուղղված ծրագրերում ընդգրկման երկու պաշտոնական ձևաչափ՝ կամավոր մասնակցություն ուստիկանության կողմից տրված նախազգուշացումից հետո, և պարտադիր մասնակցություն դատարանի պաշտպանական որոշման շրջանակում: Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության վրա պարտականություն է դրվում նախազգուշացում կիրառելու մասին որոշումը ստանալուց անմիջապես հետո «հնարավորին չափ սեղմ ժամկետում» առաջարկել ռեաբիլիտացման ծառայություններ, իսկ 8-րդ հոդվածի 5-րդ մասի 8-րդ կետով դատարաններին հնարավորություն է տրվում նշանակել ռեաբիլիտացման ծրագրին մասնակցություն՝ որպես պարտադիր միջոց: Այնուամենայնիվ, թեև այս դրույթներով հստակ սահմանվում է, թե *երբ* կարող է բռնություն գործադրած անձն ընդգրկվել ծրագրում, ընթացիկ օրենսդրական շրջանակը չի պարունակում հստակ և բացահայտ ընթացակարգեր, որոնք կսահմանեն, թե ուստիկանության նախազգուշացումը ստանալուց կամ դատարանի որոշումից հետո *ինչպես* է իրականացվում բռնություն գործադրած անձի ուղղորդումը համապատասխան ռեաբիլիտացման ծառայություններ և դրանցում անձի ներգրավվումը: ՀՀ կառավարության N 35-Ն որոշման համաձայն՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը իր գործողությունները համակարգում է այլ մարմինների հետ, երբ անհրաժեշտ են մասնագիտացված ծառայություններ (օրինակ՝

առողջության վերականգնման, վնասակար սովորույթներից ձերբազատման) (Հավելված, 9-րդ պարբերություն): Սակայն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ուղղորդումը դեպի ծրագիր իրականացնող կազմակերպություն հստակ կերպով չի կարգավորվում, ինչպես և չի կարգավորվում դատարանի կողմից ուղղորդումը դեպի ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն՝ դատարանի պաշտպանական որոշման դեպքում: Քրեական արդարադատության ներգրավման դեպքում ևս սահմանված չէ ուղղորդման մեխանիզմ: Կարգավորման այս բացը թուլացնում է համակարգումը և վտանգում ռեաբիլիտացման գործընթացի արդյունավետությունը:

Բացի այդ, ինչպես նշվեց, բռնություն գործադրած անձանց համար նախատեսված ծրագրերը պետք է լինեն կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ համայնքային համակարգված արձագանքի անբաժանելի մասը: Դա ենթադրում է սերտ համագործակցություն տարբեր մարմինների հետ, ինչպիսիք են կանանց աջակցության ծառայությունները, իրավապահ մարմինները, դատական ծառայությունները, պրոբացիայի ծառայությունները և անհրաժեշտության դեպքում նաև երեխաների պաշտպանության հաստատությունները⁸⁷: Այս համակարգային անհամապատասխանությունը կարող է հանգեցնել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից վարվող ծրագրերի և Քրեակատարողական ծառայության ու Պրոբացիայի ծառայության կողմից իրականացվող ծրագրերի միջև տարբերությունների և անհամապատասխան գործելակերպերի, հատկապես՝ հասանելի միջամտությունների, ռիսկերի և կարիքների գնահատման, ինչպես նաև ընդհանուր մոտեցման առումով:

87. Ընտանեկան բռնություն գործադրող անձանց հետ աշխատանքի հարցերով եվրոպական ցանց (WWP EN), «Բռնություն կատարողների համար նախատեսված ծրագրերի եվրոպական չափորոշիչներ. բռնության ենթարկված անձանց անվտանգության վրա հիմնված և սեռական զուգընկերոջ նկատմամբ բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի համար չափորոշիչներ», աշխատանքային փաստաթուղթ, (2023 թվական), էջ 17, հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.work-with-perpetrators.eu/fileadmin/www/What_you_can_do/Ensure_the_quality_of_your_perpetrator_programme/European_Standards_for

3.2 Բռնություն գործադրած անձանց համար նախատեսված ծրագրերի շրջանակը, կառուցվածքը և բովանդակությունը

ՀՀ կառավարության N 35-Ն որոշմամբ ընդունված՝ բռնություն գործադրած անձանց ծրագիրը ներկայացնում է համապարփակ և կառուցվածքային շրջանակ, որը նախատեսված է բռնություն գործադրած յուրաքանչյուր անձի անհատական գնահատման կանոնավոր իրականացման համար: Այն ընդգրկում է հինգ հիմնական բաղադրիչ՝ (1) բռնություն գործադրած անձի ռիսկերի և կարիքների գնահատում (հոգեկան առողջության խնդիրներ, վնասակար սովորույթներ և այլն), (2) վերահսկողության պլանի կազմում, (3) միջամտությունների իրականացում խմբային և անհատական աջխառնման քննարկների միջոցով՝ ներառյալ համապատասխան մոդուլների կիրառում, (4) շարունակական մշտադիտարկում և աջակցություն (անհրաժեշտության դեպքում ծրագրի վերանայում), (5) արդյունքների գնահատում և ամփոփում: Ռիսկերի գնահատումն իրականացվում է երեք ուղղությամբ՝ անձնային ռիսկեր՝ կապված բռնություն գործադրած անձի բռնի վարքագծի հետ, կազմակերպչական ռիսկեր՝ կապված ծրագրի իրականացման հետ, և բռնության ենթարկված անձի խոցելիության ռիսկեր, որոնք պետք է հաշվի առնվեն վերջիններիս աջակցության ծառայությունների հետ համագործակցությամբ: Անհատականացված պլանավորման և բռնության ենթարկված անձանց անվտանգության գործոնների կարևորումը արտացոլում է ծրագրի նպատակը՝ ապահովել գոհակենտրոն աջակցություն բռնություն գործադրած անձանց համար:

Ծրագիրը ներառում է ճկուն մոդուլային կառուցվածք, որը բաղկացած է 17 թեմատիկ մոդուլներից, որոնցից յուրաքանչյուրը կարող է իրականացվել առանձին կամ այլ մոդուլների հետ միասին՝ կախված բռնություն գործադրած անձի կարիքներից և ռեաբիլիտացիման ակնկալվող արդյունքներից: Մոդուլները ներառում են թեմաների լայն շրջանակ, ինչպես բռնության գիտակցում, հուզական հավասարակշռություն, գենդերային հավասարություն, բռնության էության և ցիկլի ընկալում, գալրույթի կառավարում, հաղորդակցություն և կոնֆլիկտների կառավարում, դրական ծնողավարություն, սոցիալական պատասխանատվություն, առողջ հարաբերություններ և վնասակար սովորույթներից, այդ թվում՝ կախվածության խնդիրներից

և խաղամոլությունից ձերբազատում: Բացի այդ, կան մոդուլներ, որոնք ուղղված են կյանքի գործնական հմտություններին, օրինակ՝ հայոց լեզվի իմացություն, ֆինանսական գրագիտություն, պատասխանատվություն և բարոյական դատողություն:

Մոդուլների ցանկն ակնհայտորեն սպառնիչ չէ, ինչը հնարավորություն է տալիս ծառայություն մատուցողներին առաջարկել Նոր մոդուլներ՝ արդյունավետությունը բարձրացնելու նպատակով: Մոդուլների բովանդակությունը, հաճախականությունը, տևողությունը և իրականացումը ենթակա են նախարարության հաստատմանը և մշտադիտարկմանը՝ համապատասխանությունը և որակի վերահսկողությունը ապահովելու համար: Այս մանրամասն և ադապտիվ շրջանակի նպատակն է բռնություն գործադրած անձանց տրամադրել գործիքներ՝ փոխելու իրենց վերաբերմունքն ու բռնի վարքագիծը, նվազեցնելու ռիսկերը և ստանձնելու պատասխանատվություն՝ այդպիսով նպաստելով հետագա բռնության կանխարգելմանը:

Միևնույն ժամանակ, թեմաները միշտ չէ, որ սերտորեն առնչվում են գենդերային բռնության կանխարգելմանը, և մի շարք մոդուլների թեմաները չեն համապատասխանում ընտանեկան բռնություն գործադրած անձանց կարիքներին (օրինակ՝ ֆինանսական գրագիտություն, հայոց լեզու), ինչը նվազեցնում է դրանց արդյունավետությունը: Փոխարենը՝ ծրագրի ուսումնական պլանը պետք է ուղղվի առաջնահերթ խնդիրների վրա, ինչպիսիք են բռնության բոլոր ձևերի (ներառյալ ֆիզիկական, սեռական և հոգեբանական բռնություն, վերահսկող վարքագիծ և տեխնոլոգիաների միջոցով իրականացվող բռնություն) դեմ պայքարը, գենդերային կարծրատիպերի քննադատական ըմբռնման խթանումը, բռնություն գործադրած անձանց ծնողական պատասխանատվությունը երեխաների անվտանգության և բարեկեցության նկատմամբ: Այս թեմաների ներառումը առանձին հանդիպումներում կամ մոդուլներում կարող է նպաստել գենդերային բռնության դիմամիկայի խորքային ընկալմանը և երաշխավորել ստանդարտացված մոտեցում⁸⁸:

88. Perpetrator_Programmes/European_Standards_for_Perpetrator_Programmes_website.pdf:

Եվրոպայի խորհուրդ, Ընտանեկան բռնություն գործադրող անձանց հետ աշխատանքի հարցերով Եվրոպական ցանցից Սանդրա Յովանովիչ Բելտիչ և Բերտա Վալ, և Կիերան

Բացի այդ, «Կանանց աջակցման կենտրոնի» կողմից պատրաստված «Ծրագրեր ընտանեկան բռնություն գործադրած անձանց համար. ակնարկ առկա ծրագրերի մասին և առաջարկներ Հայաստանի համար» զեկույցում ներկայացվում է համապարփակ ճանապարհային քարտեզ Հայաստանում ընտանեկան բռնություն գործադրած անձանց համար արդյունավետ ծրագրերի մշակման և իրականացման համար: Ձեկույցում ընդգծվում է, որ նման ծրագրերը պետք է հիմնված լինեն հստակ ուղենիշային սկզբունքների, նվազագույն չափորոշիչների և կանանց աջակցության ծառայությունների և այլ շահագրգիռ կողմերի միջև ամուր համագործակցության վրա: Ձեկույցում նաև շեշտվում է պատշաճ վերապատրաստված և վերահսկվող անձնակազմի, ուղղորդման համակարգի և ռիսկի գնահատման ընթացակարգերի, փաստերի վրա հիմնված վերախնտեզրման մոտեցումների, մշտադիտարկման և գնահատման, ինպես նաև բավարար ֆինանսավորման խիստ կարիքը՝ որպես ընտանեկան բռնությանը համակարգված և զոհակենտրոն արձագանքի մաս⁸⁹:

3.3 Հայաստանում բռնություն գործադրած անձանց համար նախատեսված ծրագրերի իրականացման հնարավոր բացերը և մարտահրավերները

Թեև ՀՀ կառավարության N 35-Ն որոշման ընդունումը կարևոր քայլ է Հայաստանում բռնություն գործադրած անձանց ռեաբիլիտացման ծրագրի շրջանակը, կառուցվածքն ու բաղադրիչները սահմանելու ուղղությամբ, դրա գործնական իրականացումը դեռևս չի փորձարկվել: Ծրագրի ներկայիս կառուցվածքի և շահագրգիռ կողմերի արձագանքի հիման վրա արդեն իսկ բացահայտվել են մի շարք հնարավոր բացեր և ռիսկեր, որոնք անհրաժեշտ է հասցեագրել՝ ծրագրի արդյունավետությունը և Ստամբուլի կոնվենցիայի դրույթներին համապատասխանությունը ապահովելու համար:

ՄըքՔարթան, Արևմտյան Անգլիայի համալսարան, Բրիստոլ, «Բռնություն գործադրող անձանց ուղղված անվտանգ և արդյունավետ ծրագրերի ուղեցույց. Ստամբուլի կոնվենցիայի 16-րդ հոդված» (2024 թվական), էջ 26, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://rm.coe.int/guidance-for-safe-and-effective-perpetrator-programmes-article-16-of-t/1680b00524>:

89. «Կանանց աջակցման կենտրոն» ՀՀ, Ծրագրեր ընտանեկան բռնություն կատարող անձանց համար. ակնարկ առկա ծրագրերի մասին և առաջարկներ Հայաստանի համար, (2019 թվական), հասանելի է հղումով՝ <https://www.womensupportcenter.org/assets/PDF%20publications/pdfresizer.com-pdf-resize%20engl.pdf>

Մինևույն ժամանակ, ծրագրի արդյունավետ իրականացումն ապահովելու համար որոշակի քայլեր արդեն նախանշված են: ՀՀ կառավարության N 35-Ն որոշմամբ ընդունված՝ բռնություն գործադրած անձանց ծրագրի շրջանակը պարունակում է մի շարք էական տարրեր: Ողջունելով այդ ասպեկտների ներառումը՝ հարկ է նշել, որ լրացուցիչ ջանքեր են պահանջվում դրանց գործնական իրականացման համար: Օրինակ՝ թեև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը պատասխանատու է ռեաբիլիտացման ծրագիրն իրականացնող մասնագետների վերապատրաստումը կազմակերպելու համար (Հավելված, 8-րդ պարբերություն), ներկայումս չկա ստանդարտացված ուսումնական նյութերի փաթեթ, որը մշակված է որոշմամբ սահմանված մոդուլների և ընթացակարգերի հիման վրա: Այս բացը կարող է հանգեցնել մասնագետների կողմից ծրագրի ընկալման և իրականացման անհամապատասխանությունների, ինչը կարող է բերել ծառայությունների որակի և արդյունավետության նվազման: Ուստի համապարփակ, մոդուլներին հատուկ ուսումնական ռեսուրսների մշակումը կարևոր է՝ անձնակազմին անհրաժեշտ գիտելիքներով և հմտություններով զինելու համար:

Թեև կարգավորումներով սահմանված է, որ բռնություն գործադրած յուրաքանչյուր անձ պետք է ենթարկվի անհատական գնահատման՝ որպես ծրագրի մշակման հիմք (Հավելված, 12-րդ պարբերության 1-ին կետ, 13-րդ պարբերություն), ներկայումս ռիսկերի և կարիքների գնահատման ստանդարտացված գործիք չի մշակվել կամ հաստատվել: Այս բացը ծառայություն մատուցողներին դնում է դժվարին կացության մեջ՝ ստիպելով նրանց ապավինել իրենց մշակած և հաճախ ոչ համատեղելի գնահատման մեթոդներին, ինչը կարող է վտանգել միջամտությունների օբյեկտիվությունը, համադրելիությունն ու նպատակահարմարությունը: Ուստի ծրագրերի հետևողական և արդյունավետ գործնական իրականացումն ապահովելու համար անհրաժեշտ է գնահատման միասնական և ապացուցահեն գործիք:

Եվ վերջապես, թեև կարգավորումները հստակ սահմանում են, որ բռնություն գործադրած յուրաքանչյուր անձի համար պետք է կազմվի վերահսկողության պլան, որը պետք է պարունակի նրա անձնական տվյալները, ռիսկի գործոնները, գրանցած առաջընթացը և այլ կարևոր տեղեկություններ (Հավելված, 12-րդ պարբերության 2-րդ կետ, 15-րդ

պարբերություն), մինչ այժմ որևէ պաշտոնական ստանդարտացված ձևաթուղթ կամ ձևանմուշ չի մշակվել, որը կուղղորդի մասնագետների աշխատանքը: Առանց այդպիսի գործիքների, վերահսկողության պլանների բովանդակությունն ու որակը կարող են հապես տարբերվել՝ կախված գործերից և ծառայություններ մատուցողներից՝ խաթարելով հաշվետվողականությունն ու հետևողականությունը: Ուստի նպատակահարմար է մշակել և շրջանառել վերահսկողության պլանի հաստատված ձևանմուշ, որը կնպաստի աշխատանքների ներդաշնակեցմանը և ծրագրի ընդհանուր արդյունավետության բարձրացմանը:

Եզրակացություններ

Ընդունելով 2017 թվականի Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման մասին օրենքը (էականորեն փոփոխված 2024 թվականի ՀՕ-169-Ն օրենքով) և 2025 թվականի ՀՀ կառավարության N 35-Ն որոշումը՝ Հայաստանը նշանակալի քայլեր է ձեռնարկել՝ բռնություն գործադրած անձանց ուղղված ծրագրերի մշակման համար անհրաժեշտ իրավական և քաղաքականության շրջանակի ստեղծման ուղղությամբ, ինչը բխում է Եվրոպայի խորհրդի «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» կոնվենցիայի (Ստամբուլի կոնվենցիա) պահանջներից:

Օրենսդրության վերջին փոփոխություններն ուժեղացնում են Հայաստանի արձագանքը ընտանեկան բռնության դեպքերին. այդ փոփոխություններով սահմանվել են հստակ ինստիտուցիոնալ պատասխանատվություններ՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը վերապահելով ծրագրերի համար պատասխանատու համակարգող մարմնի գործառնությունները, ռեաբիլիտացման գործընթացը ներառվել է ինչպես կանխարգելիչ, այնպես էլ դատական փուլերում, նախատեսվում են պատժամիջոցներ դատարանի կողմից պարտադրված միջոցառումները չկատարելու համար: ՀՀ կառավարության N 35-Ն որոշմամբ իրականացվել են մի շարք կարևոր քայլեր՝ անհրաժեշտ համապատասխանեցումներ

կատարելով նախորդ՝ 2018 թվականի N 119-Ն նախարարի հրամանում, որով բռնություն գործադրած անձանց ռեաբիլիտացման ծրագիրը ոչ պատշաճ ձևով վերապահված էր աջակցության կենտրոններին և խրախուսվում էր հաշտեցումը, այլ ոչ թե պատասխանատվություն ստանձնելը: Որոշումը հստակեցնում է նաև ինստիտուցիոնալ պարտականությունները, ծրագրի մշակման ժամանակ հաշվի է առնում բռնության ենթարկված անձանց անվտանգությունը և բռնություն գործադրած անձանց պատասխանատվությունը, ինչպես նաև անդրադառնում է մասնագիտական փորձառության և ռեսուրսների պակասի վերաբերյալ նախկին մտահոգություններին: Այն նաև պարունակում է բռնություն գործադրած անձանց ծրագրերի հստակ ձևավորված հայեցակարգ՝ սահմանելով դրա շրջանակը, կառուցվածքը, բովանդակությունն ու տևողությունը:

Չնայած այս անհերքելի առաջընթացին՝ Հայաստանը դեռևս բախվում է կարևոր մարտահրավերների թե՛ միջազգային չափորոշիչներին ծրագրերի համապատասխանեցման և թե՛ դրանց արդյունավետ իրականացման առումով: Առ այսօր բռնություն գործադրած անձանց համար նախատեսված ծրագրերում բացակայում է ընտանեկան բռնության հստակ գենդերային ընկալումը: Գործող հայեցակարգը կանանց նկատմամբ բռնությունը ներկայացնում է որպես իրավիճակային խնդիր, որը կապված է թմրամոլության կամ հոգեբանական և սոցիալական գործոնների հետ, այլ ոչ թե այն ընդունում է որպես կանանց մարդու իրավունքների խախտում: Բացի այդ, ռեաբիլիտացման ծրագրերին լիարժեք ու գիտակցված մասնակցության ապահովումը, բռնության ենթարկված անձանց անվտանգության երաշխավորումը ամբողջ գործընթացում, ինչպես նաև բավարար ինստիտուցիոնալ կարողությունների և միջգերատեսչական համագործակցության ամրապնդումը հետագա կարևորագույն քայլեր են՝ այս իրավական դրույթները կյանքի կոչելու և այդպիսով բռնություն գործադրած անձանց վերաբերմունքում ու վարքագծում էական փոփոխությունների հասնելու համար: Այս ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ բռնություն գործադրած անձանց համար անհրաժեշտ են դիվերսիֆիկացված ուղղորդման եղանակներ՝ հստակ և համաձայնեցված ուղղորդման մեխանիզմների միջոցով, ինչպես նաև անհրաժեշտ է ընդլայնել ծրագրի շրջանակը՝ ընդգրկելու կալանքի տակ

գտնվող կամ խափանման այլ միջոցներ կրող բնություն գործադրած անձանց:

Հայաստանում ընտանեկան բնության արդյունավետ կանխարգելումը և բնություն գործադրած անձանց ռեաբիլիտացումը կախված է մի շարք պետական և ոչ պետական կառույցների համակարգված ներգրավվածությունից: Այնուամենայնիվ, պետք է ձեռնարկվեն և մշակվեն կոնկրետ քայլեր՝ ծրագրերը միջազգային չափորոշիչներին համապատասխանեցնելու և բնության ենթարկված անձանց աջակցության ծառայությունների ու շահագրգիռ այլ կողմերի հետ համակարգված համագործակցություն ապահովելու ուղղությամբ: Հաստատություններն ու ծառայություն մատուցողները պետք է զարգացնեն գործնական փորձագիտական կարողություններ այս ոլորտում և պարբերաբար գնահատեն իրենց առաջադիմական արդյունքները՝ միջամտությունները ավելի թիրախային և Ստամբուլի կոնվենցիայի չափորոշիչներին համապատասխան դարձնելու համար: Անհրաժեշտ է մշակել միջգերատեսչական արձանագրություններ ու համաձայնագրեր ոստիկանության, դատարանների և կանանց աջակցության մասնագիտացված ՀԿ-ների միջև, ինչպես նաև բարելավել ներգրավված տարբեր մասնագետների վերապատրաստման գործընթացը: Ուսումնական մոդուլների և նյութերի բացակայությունը, ինչպես նաև ռիսկերի գնահատման հստակ ընթացակարգերի առկա չլինելը կարող են հանգեցնել մասնագետների կողմից ծրագրերի ընկալման և իրականացման տարընթերցումների, ինչը կարող է խաթարել դրանց որակն ու արդյունավետությունը և, ի վերջո, վտանգել բնության ենթարկված անձանց անվտանգությունն ու բարեկեցությունը:

Առաջարկություններ

Եզրափակիչ առաջարկությունները ներկայացվող են՝ համաձայն Եվրոպայի խորհրդի «Բռնություն գործադրող անձանց ուղղված անվտանգ և արդյունավետ ծրագրերի ուղեցույցում»⁹⁰ սահմանված չորս առանձին բաժինների՝ 1) Ընտանեկան բռնություն գործադրած անձանց ուղղված ծրագրերի իրավական և քաղաքականության շրջանակը, (2) Ծրագրերն իրականացնողները, (3) Բռնության ենթարկված անձանց, մասնավորապես կանանց և երեխաների անվտանգությունն ու բարեկեցությունը, (4) Ընտանեկան բռնություն գործադրած անձանց ուղղված ծրագրերի մշակումը:

Իրավական և քաղաքականության շրջանակը

1. Փոփոխել ՀՀ կառավարության N 35-Ն որոշումը և դրան կից ուղեցույցը՝ հստակ կերպով ներառելով կալանքի տակ և խափանման այլ միջոցներ կրող բռնություն գործադրած անձանց՝ մշակելով հատուկ գործիքներ, ընթացակարգեր և մոդուլներ, որոնք կարող են կիրառվել ինչպես ազատազրկման, այնպես էլ ազատազրկման հետ չկապված հաստատություններում:

2. Փոփոխել ներպետական օրենսդրությունը՝ հիմնելով սեռական

1. Եվրոպայի խորհուրդ, Ընտանեկան բռնություն գործադրող անձանց հետ աշխատանքի հարցերով Եվրոպական ցանցից Սանդրա Յովանովիչ Բելոտիչ և Բերտա Վալ, և Կիերան ՄըքԲարթան, Արևմտյան Անգլիայի համալսարան, Բրիստոլ, «Բռնություն գործադրող անձանց ուղղված անվտանգ և արդյունավետ ծրագրերի ուղեցույց. Ստամբուլի կոնվենցիայի 16-րդ հոդված» (2024 թվական), էջեր 14-28:

բնույթի հանցագործություններ կատարած անձանց համար ռեաբիլիտացման ծրագրեր՝ ներառյալ (1) չափահասների, հատկապես կանանց նկատմամբ բռնություն գործադրած անձանց, (2) երեխաների նկատմամբ բռնություն գործադրած անձանց և (3) վնասակար սեռական վարքագիծ դրսևորող երեխաների և երիտասարդների՝ համաձայն Ստամբուլի կոնվենցիայի 16-րդ հոդվածի 2-րդ մասի, և հստակ սահմանել ինստիտուցիոնալ պարտականությունները, ծրագրի բովանդակությունն ու ուղղորդման ընթացակարգերը:

3. Մշակել և շրջանառել բացատրական ուղեցույցներ և ստանդարտ գործառնական ընթացակարգեր, որոնք կօգնեն մեկնաբանել և իրականացնել ՀՀ կառավարության N 35-Ն որոշման սկզբունքներն ու դեռևս չսահմանված դրույթները՝ ապահովելով, որ անձնակազմը հասկանում է դրույթների նպատակը և կիրառման կարգը:

4. Մշակել և ներդնել մանրամասն գործառնական ընթացակարգեր և ներքին ուղեցույցներ բոլոր առնչվող հաստատությունների համար, որը կգուգորդվի անձնակազմի համար պարտադիր նախնական և ծառայության ընթացքում վերապատրաստմամբ՝ փոփոխված օրենսդրությունն արդյունավետորեն կիրառելու և բռնության ենթարկված անձանց անվտանգությանն ու բռնություն գործադրած անձանց պատասխանատվությանը միտված հետևողական գործելակերպ երաշխավորելու համար:

5. Ապահովել, որ բռնություն գործադրած անձանց համար նախատեսված ծրագրերը հասանելի լինեն երկրի ամբողջ տարածքում և ունենան բավարար ֆինանսավորում, բայց ոչ կանանց աջակցության կենտրոններին հատկացվելիք ռեսուրսների հաշվին:

6. Սահմանել և ֆինանսավորել հստակ նվազագույն չափորոշիչներ, գործառնական ուղեցույցներ և կայուն ֆինանսավորման հոսքեր բռնություն գործադրած անձանց ուղղված ծրագրեր իրականացնող ՀԿ-ների համար, ինչպես նաև կառուցվածքային վերապատրաստման և հավաստագրման գործընթացներ՝ բավարար թվով որակավորված մասնագետներ ապահովելու համար:

7. Ստեղծել հուսալի միջգերատեսչական տեղեկատվության փոխանակման հարթակ և գործերի կառավարման համակարգ, որը կապահովի անխափան համակարգումը ոստիկանության, դատարանների, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Պրոբացիայի ծառայության, Քրեակատարողական ծառայության, ՀՀ-ների, ՀՀ արդարադատության նախարարության «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության և բռնության ենթարկված անձանց աջակցության ծառայությունների միջև, երբ բռնություն գործադրած անձինք անցնում են արդարադատության և աջակցության համակարգերի փուլերով:

8. Մշակել հստակ ընթացակարգեր և ուղղորդման մեխանիզմներ ռեաբիլիտացման ծրագրում ընդգրկվելու հնարավոր բոլոր ձևերի համար, այդ թվում՝ ոստիկանության նախագգուշացումներ, դատարանի որոշումներ և քրեական արդարադատության համակարգի շրջանակում ուղղորդումներ, որոնք պետք է ապահովվեն գրավոր արձանագրություններով, ժամկետների հստակ սահմանմամբ և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ոստիկանության, դատարանների և ծառայություն մատուցողների համար հստակ պարտականությունների բաշխմամբ՝ համապատասխան ծառայություններում բռնություն գործադրած անձանց անխափան ներգրավումն ապահովելու համար:

9. Պաշտոնականացնել և ամրապնդել Միջգերատեսչական աշխատանքային խումբը՝ որպես կայուն, հեղինակավոր հարթակ համակարգման համար՝ հստակ մանդատներով, կանոնավոր հանդիպումներով, առաջարկություններ մշակելու և դրանց իրականացումը վերահսկելու կարողությամբ, լուծելու միջգերատեսչական մարտահրավերները և հետևելու բռնություն գործադրած անձանց համար նախատեսված ծրագրերի իրականացման առաջընթացին:

Ծրագրերն իրականադնողները

10. Տրամադրել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի

Նախարարությանը թիրախային տեխնիկական աջակցություն, կարողությունների զարգացում և նպատակային ռեսուրսներ՝ ամրապնդելու իր առաջնորդող դերը ծրագրերը համակարգելու, դրանք միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու և բռնության ենթարկված անձանց աջակցության ծառայությունների, ոստիկանության, դատարանների և ՀԿ-ների հետ սերտորեն համագործակցելու գործում:

11. Մշակել և շրջանառել ստանդարտացված, մոդուլներին հատուկ ուսումնական նյութեր, որոնք համապատասխանեցված են ՀՀ կառավարության N 35-Ն որոշմամբ սահմանված կառուցվածքին, մոդուլներին և ընթացակարգերին՝ ապահովելու ծրագրերի հետևողական, բարձրորակ իրականացումը և մասնագետներին անհրաժեշտ գիտելիքներով և հմտություններով զինումը բռնություն գործադրած անձանց հետ արդյունավետ աշխատելու համար:

12. Բոլոր համապատասխան շահագրգիռ կողմերի համար իրականացնել շարունակական բազմազբառադասական վերապատրաստում և կարողությունների զարգացման ծրագրեր, ձևավորել ինստիտուցիոնալ դերերի և պարտականությունների վերաբերյալ ընդհանուր ընկալում և մշակել միասնական չափորոշիչներ, գործիքակազմ և մշտադիտարկման մեխանիզմներ, որպեսզի բռնություն գործադրած անձանց համար նախատեսված ծրագրերը ամրապնդվեն որպես համայնքային համակարգված արձագանքի անբաժանելի մաս և նպաստեն բռնության կանխարգելմանն ու բռնության ենթարկված անձանց անվտանգության ապահովմանը:

13. Մշակել և իրականացնել դատավորների և դատարանների աշխատակազմի համար վերապատրաստման և իրազեկման ծրագրեր բռնություն գործադրած անձանց ուղղված ծրագրերի ռեաբիլիտացման նպատակի, բռնության ենթարկված անձանց անվտանգության և բռնություն գործադրած անձանց պատասխանատվության համար դրանց օգուտների վերաբերյալ, ինչպես նաև պաշտպանության միջոցների կամ պրոբացիայի պայմանների շրջանակում մասնակցությունը կազմակերպելու գործնական ուղեցույց:

14. Ուժեղացնել Պրոբացիայի ծառայությունը գործիքակազմի և ընթացակարգերի ստանդարտացման միջոցով՝ բռնություն գործադրած անձանց ռեաբիլիտացման տարրերը հետևողականորեն ներառելու պրոբացիայի անհատական պլաններում, և տրամադրելով ռեսուրսներ ու վերապատրաստում՝ արդյունավետությունը բարձրացնելու համար:

15. Տրամադրել պաշտոնական մանդատ և ռեսուրսներ «իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ հնարավորություն տալով մշակել և իրականացնել բռնություն գործադրած անձանց համար կառուցվածքային մասնագիտացված ծրագրեր և իր մասնագիտական փորձը լիարժեքորեն ներդնել ինչպես ազատագրկման, այնպես էլ համայնքային միջավայրերում:

Ընտանեկան բռնության ենթարկված անձանց, մասնավորապես կանանց և երեխաների անվտանգությունն ու բարեկեցությունը

16. Ապահովել, որ բռնություն գործադրած անձանց համար նախատեսված ծրագրերում արտացոլվի ընտանեկան բռնության գենդերային ընկալումը:

17. Ապահովել, որ բռնություն գործադրած անձանց ուղղված ծրագրեր իրականացնող մասնագետները չներգրավվեն բռնության ենթարկված անձանց հետ աշխատանքներում կամ այլ գործունեության մեջ, որը կարող է վտանգել նրանց անվտանգությունը, միաժամանակ երաշխավորելով, որ բռնության ենթարկված և բռնություն գործադրած անձանց համար նախատեսված ծրագրերը ֆիզիկապես իրականացվեն տարբեր վայրերում:

18. Վերանայել ՀՀ կառավարության N 35-Ն որոշմամբ սահմանված ծրագրի մոդուլների ցանկը՝ բացառելու կամ հարմարեցնելու ընտանեկան բռնություն գործադրած անձանց հետ անմիջական առնչություն չունեցող մոդուլները, ինչպես օրինակ՝ ֆինանսական գրագիտության, հայոց լեզվի դասեր, և փոխարենը ներառել մոդուլներ, որոնք կանդորադառնան վերահսկող վարքագծին, սեռական բռնությանը, թվային միջավայրում բռնությանը, գենդերային կարծրատիպերին, երեխաների նկատմամբ

բռնության ազդեցությանը և պատասխանատու ծնողավարությանը՝ ապահովելով համապատասխանություն և արդյունավետություն:

19. Մշակել և ներդնել ռիսկերի գնահատման համատեղ ստանդարտացված գործիքներ՝ ներառելով ռիսկերի ինչպես հաստատուն, այնպես էլ դինամիկ գործոնները: Մշակել կանոնավոր հաղորդակցման արձանագրություններ՝ դյուրին դարձնելու տեղեկատվության ապահով և համակարգված փոխանակումը բռնություն գործադրած անձանց հետ ծրագրեր իրականացնող ծառայությունների, բռնության ենթարկված անձանց աջակցության կազմակերպությունների և այլ առնչվող շահագրգիռ կողմերի միջև՝ միաժամանակ պահպանելով գաղտնիությունը և առաջնահերթություն տալով բռնության ենթարկված անձանց անվտանգությանը:

Ընտանեկան բռնություն գործադրած անձանց ուղղված ծրագրերի մշակումը

20. Ներդաշնակեցնել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Զրեակատարողական ծառայության և Պրոբացիայի ծառայության կողմից կիրառվող մոտեցումներն ու գործիքները՝ համապատասխանեցնելով ծրագրի բովանդակությունը, ռիսկերի և կարիքների գնահատման գործիքները և զեկուցման ու հաշվետվությունների ներկայացման մեխանիզմները ազատագրկման և համայնքային միջավայրերում՝ անհամապատասխանություններից խուսափելու և գործելակերպի միասնական ստանդարտ ձևավորելու համար:

21. Մշակել և ներդնել միասնական ազգային ուղեցույցներ, ստանդարտացված գործառնական ընթացակարգեր և ձևանմուշներ (օրինակ՝ ռիսկերի գնահատման, վերահսկողության պլանների և մոնիթորինգի զեկույցների համար) բոլոր ներգրավված հաստատություններում՝ փոխարինելով *ad hoc* գործելակերպը հետևողական, որակի հսկողության գործընթացներով: Ռիսկերի գնահատման մեխանիզմը պետք է լինի ապացույցների վրա հիմնված գործիք, որը հնարավորություն կտա գնահատել և դասակարգել ընտանեկան բռնություն գործադրած անձանց բնորոշ ռիսկերն ու

կարիքները, կիրառելի կլինի բոլոր միջավայրերում, այդ թվում՝ կալանքի տակ գտնվող անձանց համար՝ անհատական միջամտությունների ուղղորդման և իրականացման նպատակով:

22. Ապահովել, որ ծրագրերն ունենան առնվազն վեցամսյա տևողություն, համակարգված կերպով տրամադրեն զուգընկերոջ հետ կապի ապահովման ծառայություններ՝ միջազգային չափորոշիչներին համապատասխան, ինչպես նաև խուսափեն բռնություն գործադրած անձանց տարբեր խմբերի նկատմամբ միատեսակ մոտեցումից, ինչպես օրինակ՝ բռնություն գործադրած կանանց դեպքում:

23. Մշակել բռնություն գործադրած անձանց համար նախատեսված ծրագրերի հավատարմագրման համակարգ՝ նպատակ ունենալով ստեղծել հավատարմագրված ծրագրերի ազգային ցանց, երբ դրանք հասանելի լինեն ամբողջ երկրում:

24. Ոստիկանությանը տրամադրել հստակ ուղղորդման արձանագրություններ, նպատակային վերապատրաստում բռնություն գործադրած անձանց համար նախատեսված ծրագրերի նպատակների, կառուցվածքի և օգուտների վերաբերյալ, ինչպես նաև մասնակցությանը հետևելու և վերահսկելու գործիքներ, և երաշխավորել, որ նրանց միջամտությունները նպաստեն բռնության կանխարգելմանն ու բռնության ենթարկված անձանց անվտանգությանը:

25. Մշակել և ներդնել քրեակատարողական հաստատություններում ընտանեկան բռնությանն առնչվող մոդուլներ և ուսումնական պլաններ, որոնք հստակ նախատեսված կլինեն ընտանեկան բռնություն գործադրած անձանց, այլ ոչ թե զայրույթի կառավարման համար, և ապահովել ծրագրի հասանելիությունը նաև կալանքի տակ գտնվող անձանց համար, որը կուղեկցվի անձնակազմի մասնագիտացված վերապատրաստման, անհրաժեշտ ռեսուրսների և բռնության ենթարկված անձանց անվտանգության երաշխիքների տրամադրմամբ:

26. Ապահովել ծրագրին մասնակցության և այն ավարտելու, ինչպես նաև բռնություն գործադրած անձանց վերաինտեգրման և ռեցիդիվիզմի ցուցանիշների վերաբերյալ տվյալների հավաքագրման և անկախ

գնահատման համակարգված գործընթաց՝ պատշաճ կերպով հաշվի առնելով բռնության ենթարկված անձի տեսակետը, իր և իր երեխաների անվտանգությունը՝ WWP EN-ի կողմից մշակված՝ Արդյունքների մշտադիտարկման IMPACT գործիքակազմի մոդելի հիման վրա:

Հավելված I. Ներպետական օրենսդրության և քաղաքականության վերաբերյալ կարևոր փաստաթղթեր

■ Հայաստանի Հանրապետության օրենքը «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին», հասանելի է (հայերեն) հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/hy/acts/208514>

■ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/hy/acts/153080/latest>

■ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգիրք, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/hy/acts/20/latest>

■ Հայաստանի Հանրապետության կառավարություն, Որոշում N 482-Լ «Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման 2025-2028 թվականների ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին», ընդունվել է 2025

թվականի ապրիլի 23-ին, հասանելի է (հայերեն) հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/hy/acts/206364/latest>

■ Հայաստանի Հանրապետության կառավարություն, Որոշում N 35-Ն «Ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձանց ռեաբիլիտացման ծրագիրը հաստատելու մասին», ընդունվել է 2025 թվականի հունվարի 16-ին, հասանելի է (հայերեն) հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=202222>

■ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարար, N 247-Ա հրաման, ընդունվել է 2025 թվականի հունվարի 17-ին

■ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար, N 119-Ն հրաման «Ընտանիքում բռնություն գործադրած անձանց ռեաբիլիտացիայի ծրագիրը և կազմակերպման կարգը հաստատելու մասին», ընդունվել է 2018 թվականի նոյեմբերի 13-ին, հասանելի է (հայերեն) հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=126674>

Հավելված II. Հարցազրույցներին մասնակցած շահագրգիռ կողմերի և հաստատությունների ցանկ

1. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն

■ Պրոբացիայի ծառայություն, վերասոցիալականացման և
վերականգնողական բաժին

■ Հարցազրույցի ամսաթիվ՝ 2025 թվականի հունիսի 24, 16:30–17:30

2. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն

■ Քրեակատարողական ծառայություն, սոցիալական,
հոգեբանական և իրավական աջխատանքների բաժին

■ Հարցազրույցի ամսաթիվ՝ 2025 թվականի հունիսի 24, 15:00–16:00

3. «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն

■ Իրավախախտ անչափահաս անձանց սոցիալական
վերականգնման և վերականգնողական ծրագրերի բաժին

■ Հարցազրույցի ամսաթիվ՝ 2025 թվականի հունիսի 24, 14:15–15:00

4. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարություն – ոստիկանություն

■ Ընտանեկան բռնության կանխարգելման աշխատանքների գծով մեթոդական աջակցման բաժին

■ Հարցազրույցի ամսաթիվ՝ 2025 թվականի հունիսի 2, 12:00–13:00

5. Միասնական սոցիալական ծառայություն

■ Սոցիալական ծառայությունների կազմակերպման բաժին

■ Հարցազրույցի ամսաթիվ՝ 2025 թվականի հունիսի 26, 15:00–16:00

6. «Կանանց իրավունքների տուն» ՀԿ

■ Նախագահ

■ Հարցազրույցի ամսաթիվ՝ 2025 թվականի հունիսի 30, 14:00–15:00

7. «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ

■ Ներկայացուցիչ

■ Հարցազրույցի ամսաթիվ՝ 2025 թվականի հունիսի 24, 13:30–14:15

8. «Արևամանուկ» հիմնադրամ ՀԿ

■ Նախագահ

■ Հարցազրույցի ամսաթիվ՝ 2025 թվականի հունիսի 26, 16:00–17:00

9. «Սոցիալական արդարություն» ՀԿ

■ Նախագահ

■ Հարցազրույցի ամսաթիվ՝ 2025 թվականի հունիսի 1, 16:00–17:00

Գրականության ցանկ

■ Եվրոպայի խորհուրդ, «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիա (Ստամբուլի կոնվենցիա), հասանելի է հետևյալ հղումով՝ <https://rm.coe.int/168008482e>

■ Եվրոպայի խորհուրդ, «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի (Ստամբուլի կոնվենցիա) բացատրական զեկույց, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://rm.coe.int/1680a48903>

■ Եվրոպայի խորհուրդ, Ընտանեկան բռնություն գործադրող անձանց հետ աշխատանքի հարցերով Եվրոպական ցանցից Սանդրա Յովանովիչ Բելոտիչ (Sandra Jovanović Belotić) և Բերտա Վալ (Berta Vall), և Կիրան ՄըքԹարթան (Kieran McCartan), Արևմտյան Անգլիայի համալսարան, Բրիստոլ, «Բռնություն գործադրող անձանց ուղղված անվտանգ և արդյունավետ ծրագրերի ուղեցույց. Ստամբուլի կոնվենցիայի 16-րդ հոդված» (2024 թվական), հասանելի է հետևյալ հղումով՝ <https://rm.coe.int/article-16-arm/native/1680b44650>

■ Եվրոպայի խորհուրդ, անդամ պետություններին Նախարարների կոմիտեի թիվ Rec(2002)5 հանձնարարականը «Բռնությունից կանանց պաշտպանելու մասին», հասանելի է հետևյալ հղումով՝ <https://search>.

■ Ընտանեկան բռնություն գործադրող անձանց հետ աշխատանքի հարցերով Եվրոպական ցանց (WWP EN), «Բռնություն կատարողների համար նախատեսված ծրագրերի եվրոպական չափորոշիչներ. բռնության ենթարկված անձանց անվտանգության վրա հիմնված և սեռական զուգընկերոջ նկատմամբ բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի համար չափորոշիչներ», աշխատանքային փաստաթուղթ, (2023 թվական), հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.work-with-perpetrators.eu/fileadmin/www/What_you_can_do/Ensure_the_quality_of_your_perpetrator_programme/European_Standards_for_Perpetrator_Programmes/European_Standards_for_Perpetrator_Programmes_website.pdf

■ Ջեսթեր, Մ. և Լիլի, Ս. Ջ. (Hester, M., & Lilley, S. J.), «Կանանց նկատմամբ բռնության կանխարգելում. Ստամբուլի կոնվենցիայի 12-րդ հոդված. ապացույցների և միջոցառումների արագ ակնարկ» (2014 թվական), հասանելի է հետևյալ հղումով՝ https://research-information.bris.ac.uk/ws/portalfiles/portal/34955886/Article_12_English.pdf

■ ԵԱՀԿ և ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ, «Կենտրոնական Ասիայում ընտանեկան բռնություն գործադրող անձանց համար ծրագրերի քարտեզագրում» (2024 թվական), հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.osce.org/files/f/documents/f/8/576324.pdf>

■ Սառա-Ջեյն Լիլի-Ուոլքեր, Մարիան Ջեսթեր, Ուիլյամ Թերներ (Sarah-Jane Lilley-Walker, Marianne Hester, William Turner), «Ընտանեկան բռնություն գործադրող անձանց եվրոպական ծրագրերի գնահատում. դեպի մոդել՝ ուղղված բռնություն գործադրող անձանց վերաինտեգրման միջամտությունների նախագծման և գնահատման զեկույցների համար» (Evaluation of European Domestic Violence Perpetrator Programmes: Toward a Model for Designing and Reporting Evaluations Related to Perpetrator Treatment Interventions), International Journal of Offender Therapy and Comparative Criminology, հատոր 62, համար 4, 2016 թվական, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://doi.org/10.1177/0306624X16673853>

■ ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ և ՄԱԿ-Կանայք, «Ընտանեկան

բռնություն գործադրող անձանց հետաշխատանքի և վաղ միջամտության վերաբերյալ տարածաշրջանային ուղեցույց. Արևելյան գործընկերության տարածաշրջան» (2022 թվական), հասանելի է հետևյալ հղումով՝ <https://eca.unwomen.org/en/digital-library/publications/2023/01/regional-guidance-on-working-with-perpetrators-of-domestic-violence>

■ Վալ, Բ., Լոպես-Մարտին, Խ., Գրանե-Մորսիլյո, Ջ. և Հեսթեր, Մ. (Vall, B., López-Martín, X., Grané-Morcillo, J., & Hester, M.): «Բռնություն գործադրող անձանց ուղղված ծրագրերի արդյունքների ուսումնասիրությունների որակի համակարգված վերլուծություն. դեպի արդյունքի գնահատման նոր մոդել» (A Systematic Review of the Quality of Perpetrator Programmes' Outcome Studies: Towards a New Model of Outcome Measurement), Trauma, Violence & Abuse (2023 թվական), էջեր 1-15, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://doi.org/10.1177/15248380231203718>

www.coe.int

Եվրոպայի խորհուրդը մայրցամաքի առաջատար
իրավապաշտպան կազմակերպությունն է: Այն
միավորում է 46 անդամ պետություն՝ ներառյալ
Եվրամիության բոլոր անդամները: Եվրոպայի խորհրդի
մասնակից բոլոր պետությունները ստորագրել են
Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան, որը
միտված է մարդու իրավունքների,
ժողովրդավարության և օրենքի գերակայության
պաշտպանությանը: Մարդու իրավունքների
եվրոպական դատարանը վերահսկում է մասնակից
պետություններում Կոնվենցիայի իրավակիրառումը:

COUNCIL OF EUROPE



CONSEIL DE L'EUROPE